ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆ

# ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ



# ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆ

1901-1910

ԵՐԵՎԱՆ 2006

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

ROUZANNA MAZMANYAN

# CHRONOLOGY OF ARMENIAN MUSICAL LIFE

## 1901-1910

INSTITUTE OF ARTS PUBLISHERS
YEREVAN 2006

78(479.25)(09)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆ

# ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ
# 1901-1910

A 91446

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 01:78 (479.25) (031)
ԳՄԴ 91.9:85+85.23 (2Հ)դ
Մ 145

*ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ*

Պատասխանատու խմբագիր՝ արվեստագիտության թեկնածու

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Գրախոս՝ Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու

ԳԵՎՈՐԳ ԳՅՈԴԱԿՅԱՆ

ՄԱՋՄԱՆՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

Մ 145 Հայ երաժշտական կյանքի տարեգրություն, 1901-1910 /Պատ. խմբագիր՝ Ա.Գ.Ասատրյան. - Եր.: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 2006. - 207էջ:

Տարեգրության մեջ պատմաժամանակագրական կարգով շարադրված են հայ երաժշտական կյանքի փաստերը: Տարեգրությունը ներկայացնում է՝ համերգներ, երաժշտական երեկույթներ, հոբելյաններ, հյուրախաղեր, երաժշտական թատրոնների, կատարողական կոլեկտիվների հիմնադրումը և հայ երաժշտական կյանքի այլ միջոցառումների կազմակերպումներ Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Յուրաքանչյուր տարվա վերջում տրված է հրատարակված նոտաների, գրքերի, ամսագրերի և թերթերի հոդվածների մատենագիտությունը:

Հասցեագրված է երաժշտագետներին, հայագետներին և ընթերցող լայն շրջաններին:

ԳՄԴ 91.9:85+85.23 (2Հ)դ

ISBN 99941-2-035-2
© ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 2006

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտն

իր երախտագիտությունն է հայտնում

Հայ-Ամերիկյան ընկերակցության կենտրոնի

նախագահի, բարերար

ՕՆՆԻԿ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ,

ընկերակցության մշակութային

կենտրոնի գործադիր տնօրեն

ԱՐՍԵՆ ԱՐՔ. ԲԵՐԲԵՐՅԱՆԻՆ՝

գրքի տպագրությունը հովանավորելու համար:

Institute of Arts of NAS RA

expresses deep gratitude to the Chairman of the Center

of the Armenian American society

Onik Mehrabyan

and the executive Director

[illegible]yan

for sponsoring the publication of the

"Chronology of Armenian Musical life".

# ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի ընթերցող: Ձեր սեղանին է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920-1945)» և «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960)» աշխատությունների հեղինակ, երջանկահիշատակ Ռուզաննա Մազմանյանի «Հայ երաժշտական կյանքի տարեգրությունը», որն ընդգրկում է 1901-1910 թվականները: Երբ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտն արդեն ձեռնամուխ եղավ սույն աշխատության հրատարակության նախապատրաստման աշխատանքներին, հանկարծահաս մահն անսպասելիորեն մեր շարքերից խլեց հեղինակին. մնացած բոլոր աշխատանքները ստիպված էինք ավարտին հասցնել առանց հեղինակի, որը, ցավոք, այդպես էլ չտեսավ իր համար այդքան թանկ աշխատությունը...

«Տարեգրության» մեջ պատմաժամանակագրական կարգով շարադրված են 1901-1910թթ. հայ երաժշտական կյանքի բոլոր շատ թե քիչ նշանակալի փաստերը: «Տարեգրությունը» կազմված է ուրույն սկզբունքով: Սրանում արձանագրված են հայ երաժշտության պատմության բոլոր հիշարժան իրադարձությունները, որոնք կարևոր նշանակություն են ունեցել ազգային մշակույթի զարգացման համար: Ներկայացված են տեղեկություններ Հայաստանում և նրա սահմաններից դուրս կազմակերպված համերգների, երաժշտական երեկույթների, հոբելյանների, հյուրախաղերի, ինչպես նաև փաստեր

երաժշտական թատրոնների և կատարողական կոլեկտիվների ստեղծման և հայ երաժշտական կյանքի այլ իրադարձությունների մասին: Յուրաքանչյուր տարվա վերջում բերված է հրատարակված նոտաների, գրքերի, ամսագրերի և թերթերի հոդվածների մատենագիտությունը:

Հեղինակը փաստագրական հարուստ նյութի օգտագործմամբ վերստեղծում է 1901-1910 թվականների հայ երաժշտական կյանքի իրական պատկերը՝ ընդգրկելով լայն աշխարհագրություն՝ Փարիզից մինչև Իրկուտսկ, Կ.Պոլսից՝ Պետերբուրգ:

Մանրակրկիտ ուսումնասիրվել է ժամանակի արևելահայ և արևմտահայ պարբերական մամուլը, այդ թվում՝ «Բազմավեպ», «Գեղունի» (Վենետիկ), «Անահիտ», «Բանասեր» (Փարիզ), «Գեղարվեստ», «Մշակ», «Տարազ» (Թիֆլիս), «Մասիս», «Սուրհանդակ», «Բյուզանդիոն», «Տաճար» (Կ.Պոլիս), «Թատրոն և երաժշտություն» (Բաքու), ինչպես նաև "Восточное обозрение", "Новое обозрение", "Кавказ", "Кавказский вестник" և այլն:

Հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել նորահայտ փաստեր, արխիվային փաստաթղթեր ու վավերագրեր, ուսումնասիրել, մասնավորապես, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արմեն Տիգրանյանի, Անտոն Մայիլյանի, Դանիել Ղազարյանի, Ստեփան Դեմուրյանի, Եղիշե Բաղդասարյանի, Հովհաննես Նալբանդյանի, Դավիթ Դավթյանի, Ալեքսանդր Կարատովի (Կարապետյան), Բեգլար Ամիրջանյանի (Ամիրջան), Նադեժդա Պապայանի, Մարգարիտ Բաբայանի, Արշակ Կոստանյանի, Սարգիս Մուրադյանի,

Կոնստանտին Սարաջյանի, Օվսաննա Տեր-Գրիգորյանի, Մուշեղ Աղայանի դիվանները:

* * *

Հայ երաժշտության պատմության կարևոր էջերից մեկը գրեց XX դարասկզբի առաջին տասնամյակը. այդ տարիներին Հայոց երաժշտական կյանքում արձանագրվեցին բազմաթիվ նշանակալից իրադարձություններ՝ դրվեց ազգային դասական երաժշտության հիմքը, աննախադեպ թափ առավ կատարողական արվեստը, վերջնականապես ձևավորվեց ազգային երաժշտագիտությունը, զգալիորեն աշխուժացավ մշակույթի գործիչների երաժշտական-հասարակական գործունեությունը:

Սույն տասնամյակում, ձեռքբերումների և նվաճումների կողքին, ցավոք, Հայ երաժշտությունը կրեց և ծանր ու անդառնալի կորուստներ: 1902թ. մարտի 27-ին, Թիֆլիսում, ուժերի ծաղկման շրջանում, ակտիվ երաժշտական-հասարակական գործունեությունից հետո կյանքից հեռանում է խմբավար, կոմպոզիտոր, երաժշտական հասարակական գործիչ **Քրիստափոր Կարա-Մուրզան** (1853-1902): 1904թ. մայիսի 26-ին, մեկ տարի հոգեկան հիվանդությամբ տառապելուց հետո Պետերբուրգում մահանում է տենոր **Ներսես Շահլամյանը** (1860-1904): 1905-ի մարտի 6-ին տևական հոգեկան հիվանդությունը կորում է կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հայ երաժշտության մեջ օրատորիա-կանտատի («Պատարագ») ժանրի հիմնադիր **Մակար Եկմալյանի** (1856-1905) կյանքի թելը: Մեկ տարի անց, 1906թ. հունվարի 20-ին Աստրախանում, կույր պատահականությամբ, կողոպուտի նպատակով ավազակային հարձակման հետևանքով ծանր վիրավորվելով գլխից, հիվանդանոցում վախճանվում է ստեղծագործական բուռն վերելքի շրջանում գտնվող

տաղանդավոր երգչուհի Նադեժդա Պապայանը (1868-1906)՝ Վիոլետայի արիայի հնչյունները շուրթերին: Երգչուհի, որը կերտել էր օպերային ավելի քան 50 կերպար (այդ թվում՝ Լիզա («Պիկովայա դամա»), Վիոլետա («Տրավիատա»), Ջիլդա («Ռիգոլետտո»), Միմի («Բոհեմա»), Թամարա («Դևը») ևն ), համարվել «Վերդիի և Չայկովսկու սոխակ»:

XX դարի առաջին տասնամյակն առաջ է քաշում կոմպոզիտորական տեխնիկային տիրապետող վառ անհատականությունների, որոնք հենվելով XIX դարի հայ կոմպոզիտորների նվաճումների վրա, շարունակելով նրանց ավանդույթները և ստեղծագործաբար յուրացնելով արևմտաեվրոպական երաժշտության հարուստ փորձը՝ հայ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ արմատավորում են երաժշտական նորանոր ժանրեր: Աստիճանաբար հարստանում է և բյուրեղանում ազգային երաժշտական լեզուն: Ի մասնավորի, զարգացում է ապրում սիմֆոնիկ և կամերային երաժշտությունը: Կամերային գործիքային երաժշտության ասպարեզում շարունակում է կենտրոնական դիրք գրավել դաշնամուրային երաժշտությունը: Այս բնագավառում առկա էր հարուստ փորձ՝ ի դեմս Տիգրան Չուխաճյանի (1837-1898) դաշնամուրային ստեղծագործությունների ու Նիկողայոս Տիգրանյանի (1856-1951) ժողովրդական պարերի և մուղամների դաշնամուրային մշակումների: Դաշնամուրային երաժշտության գանձարանը Կոմիտասը հարստացնում է իր դաշնամուրային պարերով, որոնք առաջին անգամ կատարվեցին 1906թ. դեկտեմբերի 1-ին, Փարիզում: Սիմֆոնիկ երաժշտության մեջ շնորհիվ Ալ.Սպենդիարյանի արմատավորվում են նոր ժանրեր՝ սիմֆոնիկ պատկեր, սյուիտ և այլն:

Հայ երաժշտության պատմության մեջ XX դարասկիզբը նշանավորվեց կոմպոզիտոր, երաժիշտ-բանահավաք, երաժշտագետ, երգիչ, խմբավար և մանկավարժ, հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասի (1869-1935) բազմակողմանի ու արգասավոր գործունեությամբ: Իր նախորդների նվաճումների և համաշխարհային հարուստ փորձի օգտագործման ճանապարհով նա ստեղծեց հայ երաժշտության ազգային ոճը՝ խարսխված հայ ժողովրդական երգի վրա: 1899թ. ավարտելով Բեռլինի կոնսերվատորիան և վերադառնալով Էջմիածին, 1901-1910թթ. Կոմիտասը շարունակում է իր գիտական, մանկավարժական և ստեղծագործական գործունեությունը՝ ձայնի և երգչախմբի համար գեղջկական երգերի մշակումների հետ մեկտեղ ձեռնամուխ լինում «Անուշ» օպերայի ստեղծմանը: Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երգչախումբը նրա ղեկավարությամբ ելույթներ է ունենում Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում: 1907թ. հունվարի 13-ին Կոմիտասը Փարիզում հանդես է գալիս «Հայ գեղջուկ երաժշտության մասին» դասախոսությամբ. սրան հաջորդում է համերգը՝ մասնակցությամբ երգչուհի Մարգարիտ Բաբայանի, դաշնակահարուհի Շուշանիկ Բաբայանի, Կոմիտասի, որը սրնգի վրա կատարում է հովվական նվագներ: Այնուհետև Կոմիտասը դասախոսություններով ու համերգներով հանդես է գալիս ոչ միայն Փարիզում, այլև՝ Վենետիկում, Ժնևում, Ցյուրիխում, Բեռնում, Լոզանում...

1910թ. Կոմիտասը տեղափոխվում է Կ.Պոլիս, ստեղծում 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը, որի անդրանիկ համերգը տեղի է ունենում նոյեմբերի 21-ին, Կ.Պոլսի «Պըտի Շանի» ձմեռային թատրոնում:

Կոմիտասի հետ միաժամանակ հանդես է գալիս համաշխարհային համբավի հասած մեկ այլ խոշորագույն կոմպոզիտոր, հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր **Ալեքսանդր Սպենդիարյանը** (1871-1928), որի ստեղծագործություններն այդ տասնամյակում նշանավորվում են որպես կարևոր նվաճումներ սիմֆոնիկ, կամերային-գործիքային և վոկալ-ռոմանսային ժանրերում: 1901թ. սեպտեմբերին Պավլովսկում հեղինակի ղեկավարությամբ առաջին անգամ կատարվում է դրանից մեկ տարի առաջ գրված «Կոնցերտային նախերգանքը»՝ ծավալուն ձևի յուրացման անդրանիկ փորձը: 1903թ. նա գրում է «Ղրիմի էսքիզներ» առաջին սյուիտը, որն առաջին անգամ կատարվում է 1904թ. հունվարի 10-ին, Բաքվում, ապա հնչում Պետերբուրգում, Պավլովսկում, Յալթայում, Եվպատորիայում, Կուրսկում, Բաքվում, Վարշավայում, Օդեսայում, Մոսկվայում, Հելսինկիում, Նյու-Յորքում, Ստավրոպոլում և այլուր: 1905թ. Ալ.Սպենդիարյանը գրում է «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը. պրեմիերան տեղի ունեցավ նույն թվականի օգոստոսի 25-ին, Յալթայում, հեղինակի ղեկավարությամբ: Այնուհետև «Երեք արմավենին» շարունակում է իր հաղթարշավը դեպի Կիև, Խարկով, Յալթա, Պետերբուրգ, Բեռլին, Բաքու, Օդեսա, Ռիգա...

Կոմիտասի և Ալ.Սպենդիարյանի կողքին իր ստեղծագործական ու կատարողական բուռն գործունեությունն է շարունակում կոմպոզիտոր, հայ ազգային դաշնամուրային երաժշտության հիմնադիր Նիկողայոս Տիգրանյանը: Հենց այս տասնամյակում են ասպարեզ գալիս կոմպոզիտորներ **Արմեն Տիգրանյանը** (1879-1950), **Ռոմանոս Մելիքյանը** (1883-1935), **Եղիշե Բաղդասարյանը** (1880-1919), **Գրիգոր Սյունին** (1876-

1939), Անտոն Մայիլյանը (1880-1942), Դանիել Ղազարյանը (1883-1958), Կարա-Մուրզայի աշակերտ Ազատ Մանուկյանը (1878-1958):

Ռոմանոս Մելիքյանը, որի առաքելությունը հայկական ռոմանսի՝ որպես ազգային կամերային-վոկալ երաժշտության ինքնուրույն ժանրի, վերջնական ձևավորումն էր, այս շրջանում գրում է «Վարդը» և «Աշուն» երգերը, «Ուռենի» զուգերգը, «Անջատում» ռոմանսը: Շարունակելով Չուխաճյանի ավանդույթները, Ռ.Մելիքյանն ազգային վոկալ երաժշտության մեջ ներգրավեց ժամանակակից դասական պոեզիայի նվաճումները:

Ապրելով ու ստեղծագործելով հիմնականում Մոսկվայում, Ե.Բաղդասարյանը հիմնադրում է և ղեկավարում Մոսկվայի հայկական խմբերգային ընկերությունը: Նրա եռանդուն ջանքերով Պետերբուրգում տպագրվում են «Գեղարվեստական ալբոմ Հ.Կ.Այվազովսկու հիշատակին» (1903) և «Արցունքներ» (1907) ժողովածուները, ուր տեղ են գտնում հայ կոմպոզիտորների մի շարք երկեր՝ մեծապես խթանելով հայ երաժշտության տարածումը: Բաղդասարյանն այս շրջանում (1903-1909) աշխատում է «Անուշ» օպերայի վրա, որը, ցավոք, մնում է անավարտ:

Գերազանցապես հայ ժողովրդական և ազգային-հայրենասիրական երգերի հավաքման, համերգների կազմակերպման նշանաբանով է անցնում Ստեփան Դեմուրյանի գործունեությունը. նա համերգներով հանդես է գալիս Մոզդոկում, Շուշիում, Թիֆլիսում և այլուր:

1901-1910թթ. հայ կոմպոզիտորների ստեղծագործական հետաքրքրությունների կիզակետում է շարունակում մնալ հայ ժողովրդական երգը: Նրանք (Կոմիտաս, Գր.Սյունի,

Ս.Մելիքյան և այլք) շարունակում են հավաքել ու գրառել ժողովրդական երգերը: Տպագրվում են ազգագրական ժողովածուներ՝ Ստ.Դեմուրյանի «Բնար» երգարանը (1907, Պետերբուրգ), Արշակ Բրուտյանի «Ռամկական մրմունջները» (Գ տպագրություն, 1901): Հրատարակվում են նաև ժողովրդական երգերի ու պարերի մշակումներ. Կոմիտասի «Հայ քնարը» Փարիզում (1907), Քր.Կարա-Մուրզայի «Հայկական ժողովրդական երգերի մշակումների» երկու տետրերը Թիֆլիսում (1904, 1905), Գրիգոր Սյունիի «Հայ ժողովրդական երգերի» Ա պրակը Ս.Պետերբուրգում (1904):

Ստեղծվում են երաժշտական ընկերություններ. 1903թ. հիմնվում է Պետերբուրգի Հայ գեղարվեստական ընկերությունը: 1905թ. Փարիզում իր գործունեությունն է սկսում «Մասիս» գրական-երաժշտական ակումբը, որի անդամները մեկ տարի անց, 1906թ. մարտին ստեղծում են Փարիզի հայկական միությունը: Սրա ջանքերով և Արշակ Չոպանյանի նախաձեռնությամբ 1906թ. դեկտեմբերի 1-ին Փարիզի **«Salle des agriculteurs»** սրահում տեղի է ունենում հայկական նվագահանդես, որին մասնակցում էին Մարգարիտ և Շուշանիկ Բաբայան քույրերը, Փարիզի կոնսերվատորիայի ուսանող, Կոմիտասի սան, երգիչ Արմենակ Շահմուրադյանը և 30 հոգուց բաղկացած երգչախումբը՝ Կոմիտասի ղեկավարությամբ: Փարիզի հայկական միության կազմակերպած համերգների շարքում կարևոր նշանակություն ունեցավ նաև 1908թ. փետրվարի 8-ի համերգը:

1905թ. Փարիզում հիմնվում է Կովկասյան ընկերությունը, որը Ռոմեն Ռոլանի խնդրանքով 1906թ. մարտի 1-ին կազմակերպում է հայկական և վրացական երաժշտությանը նվիրված երեկո:

Թիֆլիսում 1907թ. հիմնադրվում է «Արևելյան երաժշտական ընկերությունը», իսկ մեկ տարի անց՝ 1908-ին, Ռ.Մելիքյանն ու Ա.Մանուկյանը կազմակերպում են «Երաժշտական լիգան», որը խիստ կարևորում էր երեխաների ու երիտասարդության գեղագիտական դաստիարակության հարցը և մեծ դեր վերապահում հանրակրթական դպրոցներում երաժշտության դասավանդման վիճակի բարելավմանը: Ստեղծվում են դասագրքեր, լույս աշխարհ են գալիս Ա.Մանուկյանի «Փնջիկները», նրա և Ռ.Մելիքյանի կազմած «Երաժշտական այբբենարանը»: Ա.Մայիլյանը, Ե.Բաղդասարյանը, Ա.Մանուկյանը և Դ.Ղազարյանը գրում են մանկական երգեր և օպերաներ: 1906թ. Ա.Մայիլյանը գրում է «Գյուլնազ տատի հեքիաթը» մեկ գործողությամբ մանկական օպերան, որը բեմադրվում է Բաքվում 1907թ. ապրիլի 14-ին, ապա ներկայացվում նաև 1908թ. նոյեմբերի 21-ին:

1910թ. մայիսի 10-ին Թիֆլիսում կազմակերպվում է Հայկական խմբերգային ընկերությունը:

Կոմիտասն իր ուսումնասիրություններով դնում է հայ երաժշտագիտության, երաժշտական քննադատության և երաժշտական ազգագրության հիմքերը: 1901թ. Մարբուրգի «**Zeitschrift für Armenische Philologie**» հանդեսում տպագրվում է Կոմիտասի «Հայ գեղջուկ պարը» հոդվածը, որը հայերեն հեղինակային թարգմանությամբ լույս է տեսնում հետագայում՝ Բաքվում, «Թատրոն և երաժշտություն» հանդեսի 1910թ. NN 3-4 և 5-6-ում: 1907թ. «Անահիտի» NN 3-5, 6-9-ում հրատարակվում է Կոմիտասի «Հայ գեղջուկ երաժշտությունը» ուսումնասիրությունը (առանց նոտային օրինակների), որի ընդարձակ տարբերակը բանասեղծ, հրապարակախոս, «Անահիտ» հանդեսի խմբագիր Արշակ Չոպանյանի ֆրանսերեն



9146

թարգմանությամբ (նոտային օրինակներով) լույս է տեսնում Երաժշտական միջազգային ընկերության Փարիզում հրատարակվող պաշտոնական «Mercure Musical» ամսաթերթում: Մինչ այդ նույն «Mercure Musical»-ում տպագրվել էր Կոմիտասի «Ժողովրդական եղանակների ծավալումն ու զարգացումը. ծխական դպրոցի դերը Գևորգ Դ և Մակար կաթողիկոսների օրոք. երգատեղծություն, երգեցողություն» հոդվածը: 1904թ. «Տարազում» (Թիֆլիս) տպագրվում են Կոմիտասի հոդվածները՝ Ռիխարդ Վագների, Ֆերենց Լիստի ու Ջուզեպպե Վերդիի մասին:

Հայ երաժշտագիտության մեջ կարևոր ներդրում ունեցավ Ռուսաստանի երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի հիմնադիր, Բեթհովենի ու Մոցարտի մասին ստվարածավալ ուսումնասիրությունների հեղինակ Բարսեղ Կորղանյանը (Վասիլի Կորգանով, 1865-1934): Նա առաջինն էր, որ ըստ արժանվույն գնահատեց Կոմիտասի գիտահետազոտական աշխատանքի կարևորությունը, իր ակնարկներում անդրադարձավ նրա, Մ.Եկմալյանի, Գ.Կորղանյանի և այլոց ստեղծագործությանը: 1901թ. և 1909թ. նա հրատարակում է «Кавказска музыка» ժողովածուները՝ դրանցում ընդգրկելով իր և ուրիշ հեղինակների հոդվածները: Ի դեպ, առաջին ժողովածուում նա զետեղում է Կոմիտասի «Հայ եկեղեցական երաժշտությունը» աշխատության սեփական թարգմանությունը՝ գերմաներենից:

Չգալի վերելք ապրեց երաժշտական քննադատական միտքը: Երաժշտական քննադատության ասպարեզում առանձնանում են Քր.Կարա-Մուրզայի՝ «Մշակում» տպագրված հոդվածներն օպերային ներկայացումների, սիմֆոնիկ երաժշտության համերգների մասին, Ա.Մայիլյանի հոդվածները Տ.Չուխաճյանի,

Ա.Սպենդիարյանի, Մ.Եկմալյանի, Քր.Կարա-Մուրզայի, խմբերգային արվեստի և երաժշտության այլ հարցերի մասին, երաժշտագետ, կոմպոզիտոր և խմբավար Սպիրիդոն Մելիքյանի (1880-1933) ուսումնասիրությունները, այդ թվում՝ «Երաժշտության զարգացման խնդիրները մեզանում» գիրքը (Թիֆլիս, 1906): Բաքվում 1910թ. Ա.Մայիլյանի հիմնած «Թատրոն և երաժշտություն» ամսագիրը լուսաբանում էր Բաքվի երաժշտական կյանքի կարևոր իրադարձությունները:

1908թ. Թիֆլիսում բանասեր և արվեստաբան, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ Գարեգին Լևոնյանին (1872-1947) վերջապես հաջողվում է իրականացնել իր և Կոմիտասի վաղեմի երազանքը: Տակավին 1902-ին, երբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում Լևոնյանն ստանձնում է նկարչության և գեղարվեստի պատմության ուսուցչի պաշտոնը, Կոմիտասի հետ նրանք որոշում են ստեղծել գրական-գեղարվեստական ամսագիր: Սակայն ձեռնարկը ձախողվում է. 1906թ. նահանգապետը մերժում է, պատճառաբանելով, թե խմբագիրներից մեկը՝ Կոմիտասը, ուսահպատակ չէ և չի կարող հաստատվել այդ պաշտոնում և երկրորդ՝ պարբերականներ կարելի է ստեղծել միայն քաղաքներում, մինչդեռ Վաղարշապատը գյուղ է: «Գեղարվեստ» հանդեսը իրականացնում էր կարևոր առաքելություն՝ հայ իրականության մեջ մշտական նոտային տպագրության բացակայության պայմաններում տպագրելով հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ (մինչ այդ դրանք տպագրվում էին արտասահմանյան տարբեր երկրներում՝ առաջ բերելով բազմաթիվ դժվարություններ): Փարիզում լույս էր տեսել Կոմիտասի «Հայ քնար» տետրը (1907), Մոսկվայում՝ Կարա-

Մուրզայի 2 տետրերը (1904, 1905), Ստ.Դեմուրյանի «Քնար» երգարանը (1907) և այլն:

Պրոֆեսիոնալ կատարողական կոլեկտիվների բացակայության պայմաններում կարևորվում էր սիրողներից կազմված երգչախմբերի դերը: Կոմպոզիտորներ Ա.Մայիլյանը, Գր.Սյունին, Ե.Բաղդասարյանը, Ստ.Դեմուրյանը, Դ.Ղազարյանը և ուրիշներ, շարունակելով Կարա-Մուրզայի ավանդույթները, շրջում էին քաղաքից քաղաք՝ կազմակերպում երգչախմբեր և համերգներով հանդես գալիս:

XX դարի առաջին տասնամյակում բուռն զարգացում է ապրում կատարողական արվեստը: Համերգային և թատերական ակտիվ գործունեություն են ծավալում Նադեժդա Պապայանը, բարիտոն, Միլանի կոնսերվատորիայի շրջանավարտ, Մոսկվայի մեծ (1895-1903), Թիֆլիսի արքունական թատրոնների (1903-1904), Պետերբուրգի ժողտան օպերայի (1904-1916) մենակատար Բեգլար Ամիրջանյանը (Ամիրջան, 1868-1935, նրա խաղացանկն ընդգրկել է շուրջ 50 օպերա, այդ թվում՝ Ամոնասրո («Աիդա»), Ռիգոլետտո («Ռիգոլետտո»), Ժերմոն («Տրավիատա»), Կոմս դի Լունա («Տրուբադուր»), Մեֆիստոֆել («Ֆաուստ»), Էսկամիլիո («Կարմեն»), Տոնիո («Պայացներ»), Դև («Դև»), Ռուսլան («Ռուսլան և Լյուդմիլա»), Տոմսկի և Իշխան Ելեցկի («Պիկովայա դամա») և այլն), դաշնակահարուհի և երգչուհի (մեցցո-սոպրանո) Մարգարիտ Բաբայանը (1874-1968), քնարադրամատիկ տենոր Արշակ Կոստանյանը (1865-1920), քնարական տենոր, Մ.Եկմալյանի սան, Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ Տիգրան Նալբանդյանը (1878-1954), բարիտոն, երաժշտագետ և կոմպոզիտոր Մուշեղ Աղայանը (1883-1966), քնարադրամատիկ սոպրանո, Խարկովի օպերային թատրոնի մեներգչուհի Հեղինե

Տերյան-Ղորղանյանը (1864-?), ջութակահար, Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ, նույն կոնսերվատորիայի պրոֆեսոր և լարային քառյակի դասարանի ղեկավար Հովհաննես Նալբանդյանը (1871-1942), դիրիժոր, Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ, Ա.Նիկիշի սան Կոնստանտին Սարաջյանը (1877-1954), թավջութակահար Տիրան Ալեքսանյանը (1881-1954), ջութակահար Հայկ Կյուտենյանը (1888-1970), Փարիզի Գրանդ օպերայի մենակատար, Կոմիտասի և Մ.Եկմալյանի սան Արմենակ Շահմուրադյանը (1878-1939), դաշնակահարուհի Շուշանիկ Բաբայանը (1879-1952), տենոր, Կոմիտասի սան Վահան Տեր-Առաքելյանը (1883-1941), դաշնակահարուհիներ Հեղինե (1881-1960) և Եվգինե (1883-1945) Ադամյան քույրերը, որոնք մասնագիտական կրթությունն ստացել էին Ժնևի և Բեռլինի կոնսերվատորիաներում: Դարասկզբին իր կատարողական գործունեությունն սկսեց տաղանդավոր ջութակահար, Բրյուսելի կոնսերվատորիայի շրջանավարտ, իր նվագով Պ.Սարասատեին հիացմունք պատճառած Դավիթ Դավթյանը, որը կյանքից հեռացավ, երբ դեռ չէր բոլորել կյանքի 31 տարին, 1911թ., սրտի կաթվածից, իր համերգի հաջորդ օրը: 1904թ. Դավթյանը Բրյուսելի միջազգային երաժշտական մրցանակաբաշխության ժամանակ արժանանում է միակ առաջին մրցանակին և հրավիրվում Բրյուսելի կոնսերվատորիա՝ դասավանդելու որպես պրոֆեսոր: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց նա համերգներով հանդես է գալիս Փարիզում, Լոնդոնում, Մանչեստրում, Ամստերդամում, 1906-ին այցելում Ռուսաստան, Կովկաս, շրջագայում հայաշատ քաղաքներում՝ Դոնի Ռոստով, Եկատերինոդար, Արմավիր, Թիֆլիս, Բաքու, Էջմիածին, Ալեքսանդրապոլ: 1909թ. հյուրախաղերով ելույթներ է

ունենում Թուրքիայում (Պոլիս, Տրապիզոն, Զմյուռնիա) և Եգիպտոսում:

...Ու թեև առջևում անկանխատեսելի ժամանակներ էին, և ճակատագիրը դեռ դաժան փորձությունների պիտի մատներ հայ ժողովրդին՝ ուղեկցված ծանր, համազգային կորուստներով ու Եղեռնով՝ այդուհանդերձ XX դարի առաջին տասնամյակում հայ երաժշտական մշակույթի երախտավորների ջանքերով ստեղծվեցին այն լուրջ նախադրյալները, որոնք ապահովեցին հայ երաժշտության հետագա բուռն զարգացումն ու աննախընթաց թռիչքը:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

18 մայիսի 2006թ.

# 1901

## ՀՈՒՆՎԱՐ

**1** Ա.Պ.Բորոդինի «Իշխան Իգոր» օպերան՝ Իրկուտսկի քաղաքային թատրոնում: Իշխան Իգոր - Բեգլար Ամիրջան (Ամիրջանյան), Վլադիմիր Իգորևիչ - Արշակ Կոստանյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 266:

**2** Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Ամոնասրոյի դերերգը՝ Վերդիի «Աիդա» օպերայում, որը բեմադրվեց Իրկուտսկի քաղաքային թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 267:

**6** Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Ռուսլանի դերերգը՝ Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայում, որը բեմադրվեց Իրկուտսկի քաղաքային թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 264:

**7** Գանձակի սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ք.Կարա-Մուրզա)՝ քաղաքային ժողովարանի դահլիճում: Մասնակցում էին՝ երգչուհի Հ.Մատինյանը և երգիչ Լ.Տեր-Ազարյանը: Ծրագրում՝ հայկական ժողովրդական երգեր:

Նորքին լուրեր, Մշակ, 14 հունվարի, N 8:

**10, 20** Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Մեֆիստոֆելի դերերգը՝ Գունոյի «Ֆաուստ» օպերայում, որը բեմադրվեց Իրկուտսկի քաղաքային թատրոնում:

Инкогнито, Театр и музыка. Восточное обозрение, 24 января, N 20.

**14** Միլանում վախճանվեց Ջուզեպպե Վերդին (ծնվ. 28 սեպտեմբերի, 1813):

Քրիստափոր Կարա-Մուրզա, Վերդիի մահը: Արևելք, 6, 7, 8 մարտի, N N 4576, 4577, 4578:

Ս.Հախումյան, Ջուզեպպե Վերդի: Թատրոն, N 2, գիրք 8, էջ 43-48:

**17** Թիֆլիսում բացված Կովկասյան ցուցահանդեսի հայկական երաժշտության բաժինը ղեկավարելու համար հրավիրվեց կոմպոզիտոր Քրիստափոր Կարա-Մուրզան:

*Ներքին լուրեր*, Մշակ, 17 հունիսի, N 130:

**30** Պ.Ի.Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերան՝ Իրկուտսկի քաղաքային թատրոնում: Գերման - Արշակ Կոստանյան, Իշխան Ելեցկի - Բեգլար Ամիրջան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 180:

**31** Երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանի համերգը՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Ծրագրում՝ Բիզե, Չայկովսկի, Պերգոլեզի, Շուման:

Г.Д., Концерт Е.И.Тэрьян-Коргановой. Новое обозрение, 2 февраля, N 5608.

## ՓԵՏՐՎԱՐ

**4** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգում կայացած գրական-երաժշտական երեկոյին՝ կատարելով Գրիգի սոնատը:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N220:

**4** Երգչուհի Նադեժդա Պապայանը կատարեց Մոխրոտիկի դերերգը՝ Մասնեի «Մոխրոտիկ» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Կարա-Մուրզա, Օպերային ներկայացումները: Մշակ. 6 փետրվարի, N27:

6 Երգչուհի Նադեժդա Պապայանի բենեֆիսը՝ Թիֆլիսի արքունական թատրոնում: Բեմադրվեցին՝ Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» (Մարֆա), Չայկովսկու «Իոլանտա» (Իոլանտա), Մասկանիի «Գյուղական պատիվ» (Սանտուցցա) օպերաները:

"Казенный театр". Тифлисский листок, 6 февраля.

Г.Д., "Тифлисский казенный театр". Новое обозрение, 8 февраля.

"Бенефис г-жи Папаян". Кавказ, 6 февраля.

6 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Անհայտի դերերգը՝ Վերստովսկու «Ասկոլդի գերեզմանը» օպերայում, որը բեմադրվեց Իրկուտսկի քաղաքային թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N181.

7 Երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանը կատարեց Աիդայի դերերգը՝ Վերդիի համանուն օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Կարա-Մուրզա, Օպերային ներկայացումները: Մշակ, 10 փետրվարի, N 30:

Թատրոն, Նոր-դար, 13 փետրվարի, N 27:

9 Երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանը Աիդայի դերերգով մասնակցեց Թիֆլիսում կայացած Վերդիի մահվան հիշատակին նվիրված երեկոյին:

Թատրոն, երաժշտություն, Տարազ, 11 փետրվարի, N 6, էջ 54-55:

**11** Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ք.Կարա-Մուրզա)՝ Թիֆլիսի ժողովրդական ընթերցանությունների դահլիճում: Մենակատար-երգիչներ՝ Ա.Մուրադյան, Մ.Տիգրանյան, Ն.Պապյան:

*Ներքին լուրեր*, Մշակ, 13 փետրվարի, N 32:

**21** Երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանը կատարեց

Կարմենի դերերգը՝ Բիզեի համանուն օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Г.Д., Тифлисский казенный театр. Новое обозрение, 23 февраля, N 5627.

**21** Երգչուհի Նադեժդա Պապայանի համերգը՝ Բաքվի Հասարակական ժողովարանի դահլիճում: Ծրագրում՝ Մասնե, Չայկովսկի, Դելիբ, Դավիդով, Վերդի, Կյուի: Դաշնամուրի նվագամասը՝ Գ.Սորոգանով:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Ն.Պապայանի ֆ., N 104:

**21** Պետերբուրգում կայացավ «Երեկույթ կովկասյան գավակների մոտ» խորագրով: Մասնակցեցին՝ կոմպոզիտորներ Եղիշե Բաղդասարյանը և Ստեփան Դեմուրյանը:

Նոր-դար, 21 փետրվարի, N 34:

**22** Համերգ՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում, «Մանուկների խնամատար ընկերության» օգտին: Մասնակցեցին՝ երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանը, ասմունքողներ Գ.Զմշկյանը և Ս.Քափանակյանը:

Ներքին լուրեր, Մշակ, 24 փետրվարի, N 42:

**23** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգում կայացած համերգին, կատարելով Բրամսի «Հունգարական պարերը»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 223:

**25** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգում կայացած համերգին, կատարելով Տարտինիի սոլ մինոր սոնատը: Դաշնամուրի նվագամասը՝ Ա.Վոլֆիուս:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 224:

# ՄԱՐՏ

**2** Երգիչ Ներսես Շահլամյանի համերգը՝ Պետերբուրգում: Մասնակցում էին՝ ջութակահար Հովհաննես Նալբանդյանը, երգիչներ Լ.Բ.Յավորսկայան, Ե.Ն.Շասկոլսկայան, Ի.Վ.Տերտակովը, ռուսական նվագախումբը (ղեկ. Վ.Վ.Անդրեև): Ծրագրում՝ Դյուտշ, Սոլովյով, Մեյերբեր, Հ.Նալբանդյան, Մոշկովսկի, Ս.Կամենև, Գ.Կազաչենկո, Գլինկա, Վերդի, Բիզե, Վրանդել, Ֆալկի: Դաշնամուրի նվագամասը՝ Գ.Կազաչենկո, Ն.Վ.Ելյաշևա:

Ծրագիր. ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 226:

**11** Համերգ՝ Ալեքսանդրապոլի քաղաքային ակումբի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Բրուտյան), երգիչներ Ե.Գյադուկյանը, Ե.Ադամյանը, Գ.Նալբանդյանը, թառահար Գ.Տալյանը: Ծրագրում՝ «Հայրիկ, հայրիկ», «Մեր խոր պապկե», «Զարդյահ», «Կիլիկիա», «Եկավ ձմեռ», «Տեր կեցո», «Հանդիսական», «Գնաց գարուն», «Ահա ծագեց», «Քրդական քայլերգ», «Զարթիր որդյակ», «Զարթիր, սիրտ իմ», «Հալաբո», «Իննալ մալաք» (արաբական երգեր):

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 30:

**14** Երգիչ Ա.Մամաջանյանի համերգը՝ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան ուսումնարանի դահլիճում:

*Ներքին լուրեր*, Մշակ, 21 մարտի, N 63:

**15** Երգչուհի Նադեժդա Պապայանի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում:

Новое обозрение, 18 марта, N 5650.

**17** Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ.

Ք.Կարա-Մուրզա)՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Ծրագրում՝ հայկական ժողովրդական երգեր, Ք.Կարա-Մուրզա - հատվածներ «Շուշան» օպերայից:

Մշակ, 20 մարտի, N 62:

17 Երգչուհի Նադեժդա Պապայանը կատարեց Տատյանայի դերերգը՝ Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

«Թատրոն»: Նոր-դար, 20 մարտի, N 49:

Г.Д., Тифлисский казенный театр. Новое обозрение, 20 марта, N 5652.

18 Երաժշտական երեկո՝ Վաղարշապատի Գևորգյան ճեմարանում: Ելույթ ունեցավ ճեմարանի քառաձայն երգեցիկ խումբը՝ Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ: Զեկուցումներով հանդես եկան. Կոմիտասը - «Հայոց եկեղեցական եղանակները» թեմայով և նրա աշակերտներ Ե.Բաղդասարյանը - «Եվրոպական երաժշտություն. Ռիխարդ Վագներ» և Վ.Խաչատրյանը - «Հայ երաժշտության զարգացումը» թեմաներով:

Ներքին լուրեր, Մշակ, 24 մարտի, N 66:

19 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝ Պետերբուրգում: Մասնակցում էին՝ դաշնակահար Ա.Միկլաշևսկին և երգչուհի Մ.Յա.Բուտկևիչը: Ծրագրում՝ Բեթհովեն - սոնատ N5 ջութակի և դաշնամուրի համար, Տոմա - Օֆելիայի դերերգը՝ «Համլետ» օպերայից, Վյետան - կոնցերտ ջութակի համար լյա մինոր, Բախ - գավոտ, Չայկովսկի - ռոմանս, Վենյավսկի - ռոմանս և ռոնդո:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 228:

28 Հայկական երաժշտությանը ծանոթանալու նպատակով Էջմիածին ժամանեց ֆրանսիացի երաժշտագետ Պիեռ Օբրին, որը հյուրընկալվեց Կոմիտասի մոտ:

Մ.Պ.Մինասյան, Պիեռ Օբրին և Հայ երաժշտությունը: Պատմաբանասիրական հանդես, 1968, N 4, էջ 201-202:

31 Էջմիածնի ճեմարանի երգեցիկ խմբի համերգը՝ Կոմիտասի ղեկավարությամբ, ֆրանսիացի երաժշտագետ Պիեռ Օբրիի և Գ.Դյուվալի պատվին: Ծրագրում՝ ժողովրդական երգեր:

Արարատ, N 4, էջ 216:

## ԱՊՐԻԼ

2 Համերգ՝ Թիֆլիսի «ժողովրդական ընթերցանության» դահլիճում: Մասնակցեց հայկական սիրողական երգեցիկ խումբը (ղեկ. Ք.Կարա-Մուրզա):

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 31:

- Երաժշտագետ Պիեռ Օբրին Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ունկնդրեց Կոմիտասի վարած դասերը և ծանոթացավ նրա կիրառած ուսումնական մեթոդին:

Մ.Պ.Մինասյան, Պիեռ Օբրին և Հայ երաժշտությունը: Պատմաբանասիրական հանդես, N 4, էջ 202:

- Կոմիտասը Էջմիածնից մեկնեց Իգդիր՝ ժողովրդական երգեր հավաքելու:

Արարատ, N 5-6, էջ 281:

21 Հայկական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ս.Տահանյան)՝ Արմավիրի ակումբում:

*Նորքին լուրեր*, Մշակ, 8 մայիսի, N 98:

- Կոմիտասի դասախոսությունը ժողովրդական երգերի և չարականների մասին՝ Էջմիածնի ճեմարանում:

Արարատ, N 4, էջ 217:

22 Երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանը կատարեց

Աիդայի դերերը՝ Վերդիի համանուն օպերայում, որը բեմադրվեց Կազանի թատրոնում:

Ներքին լուրեր, Մշակ, 25 ապրիլի, N 87:

29 Երգիչներ Տիգրան Նալբանդյանի և Ա.Մամաջանի համերգը՝ Սիմֆերոպոլի քաղաքային ակումբի դահլիճում: Ծրագրում՝ Չայկովսկի, Մենդելսոն, Վերդի, Լխենկո, Կոմիտաս:

*Ներքին լուրեր*, Մշակ, 9 մայիսի, N 99:

29 Բիզեի «Կարմեն» օպերան՝ մասնակցությամբ Նադեժդա Պապայանի և Բեգլար Ամիրջանի, ներկայացվեց Կիևի «Սոլովյով» թատրոնում: Միքայելլա - Ն.Պապայան, Էսկամիլիո - Բ.Ամիրջան:

## ՄԱՅԻՍ

5 Երգչուհի Ե.Գ.Սարաջևայի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Մասնակցեց դաշնակահարուհի Տ.Ի.Տեր-Ստեփանովան: Ծրագրում՝ Ռախմանինով, Չայկովսկի, Ռուբինշտեյն, Շոպեն:

*Али*, Концерт г-жи Сараджевой. Новое обозрение, 12 мая, N 5699.

7 Ա.Ռուբինշտեյնի «Դև» օպերան՝ Նովոչերկասկի ձմեռային թատրոնում: Դև - Բեգլար Ամիրջան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 193:

20 Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ք.Կարա-Մուրզա)՝ Շուշիում:

*Ներքին լուրեր*, Մշակ, 10 մայիսի, N 100:

21 Երգիչ Գ.Ամիրյանի համերգը՝ Փարիզում: Ծրագրում՝ Բիոնկելի, Վիարդո, Ռուբինշտեյն, հայկական ժողովրդական երգեր:

*Ազգային քրոնիկ:* Նվագահանդեսներ: Անահիտ, N 4-5, էջ 128:

23 Դաշնակահար Վահրամ Սիմձյանի համերգը՝ Փարիզի Սալոեզ-Ակրիւքվիլթեոռ դը Փրանս դահլիճում: Ծրագրում՝ Բեթհովեն, Շոպեն, Լիստ, Սիմձյան:

«Վ.Սիմձյանի տվեկէք նվագահանդեսը»: Անահիտ, N 3, էջ 89:

*Ազգային քրոնիկ*: Նվագահանդեսներ: Անահիտ, N 4-5, էջ 128:

## ՀՈՒՆԻՍ

5, 12, 20 Հայկական սիրողական քառաձայն երգեցիկ խմբի (բաղկացած 70 հոգուց) համերգը (ղեկ. Բ.Կարա-Մուրզա)՝ Շուշիի Խանդամիրյանի թատրոնի դահլիճում:

*Ներքին լուրեր,* Մշակ, 12 հունիսի, N 125:

*Արցախեցի*, Նամակ Շուշուց: Մշակ, 19 հունիսի, N 131:

*Սերմացան*, Նամակ Շուշուց: Մշակ, 3 հուլիսի, N 143:

18 Ա.Ռուբինշտեյնի «Դև» օպերան՝ Սևաստոպոլի քաղաքային թատրոնում: Դև - Բեգլար Ամիրջան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 196:

22 Վերդիի «Աիդա» օպերան՝ Սևաստոպոլի քաղաքային թատրոնում: Ամոնասրո - Բեգլար Ամիրջան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 197:

30 Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Բ.Կարա-Մուրզա)՝ Շամախիում: Ծրագրում՝ հայկական, ռուսական, ուկրաինական երգեր: Խումբը բաղկացած էր 82 հոգուց:

Տարազ, 30 հունիսի, N 23, էջ 254:

Հունիս - Հուլիս 10 Կոմիտասը մասնակցեց միջազգային երաժշտական ընկերության՝ Բեռլինում կայացած նիստին:

## ՀՈՒԼԻՍ

1 Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Պետերբուրգի արտիստական ընկերության դահլիճում:

Մշակ, 5 հուլիսի, N 145:

1, 8 Հայ երաժշտության համերգ՝ Թիֆլիսի «Վետցել» հյուրանոցի դահլիճում: Ելույթ ունեցավ հայկական երգեցիկ խումբը (ղեկ. Ս.Դեմուրյան): Մենակատարներ՝ երգչուհիներ Ն.Տեր-Դավթյան, Ի.Թամամյան, Վ.Խաչատրյան: Ծրագրում՝ հայկական ժողովրդական երգեր:

*Փ.*, Գեղարվեստ. երաժշտություն: Տարազ, 8 հուլիսի, N 25, էջ 271:

- Փարիզում Կոմիտասը այցելեց Արշակ Չոպանյանին:

Անահիտ, N 5-7, էջ 142:

5 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Դևի դերերգը՝ Ա.Ռուբինշտեյնի համանուն օպերայում, որը ներկայացվեց Սիմֆերոպոլի քաղաքային թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 198:

21 Երգիչներ Տիգրան Նալբանդյանի և Ա.Մամաջանի համերգը՝ Մանգլիսում:

*Ներքին լուրեր,* Մշակ, 31 հուլիսի, N 166:

- Կոմիտասի հանդիպումը Փարիզում. Սեն-Սանսի, Շարլ Պորտեի, Դյուվալի և Պիեռ Օբրիի հետ: Կոմիտասը նրանց ծանոթացրեց իր աշխատանքների հետ:

Անահիտ, N 6-7, էջ 144:

22 Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ք.Կարա-Մուրզա)՝ Շուշիում: Ծրագրում՝ ժողովրդական երգեր:

*Սևրմացյան*, Նամակ Շուշուց: Մշակ, 3 Հուլիսի, N 143:

27 Երգիչ Արշակ Կոստանյանը կատարեց Տուրիդի դերերգը՝ Մասկանիի «Գյուղական պատիվ» օպերայում, որը ներկայացվեց Պետերբուրգում:

*Ներքին լուրեր*, Մշակ, 31 Հուլիսի, N 166:

## ՕԳՈՍՏՈՍ

1 Համերգ՝ Շուշիի Խանդամիրյանի Թատրոնում: Ելույթ ունեցան՝ արևելյան նվագախումբը (ղեկ. Ե.Բաղդասարյան), երգեցիկ խումբը, երգիչներ Ա.Մելքումյանը, Ե.Տեր-Միքայելյանը, Մ.Սարգսյանը, ջութակահար Վ.Միրզոյանը, դաշնակահարուհի Ա.Գալամյանը, քամանչահար Ա.Մելիք-Շահնազարյանը: Ծրագրում՝ Գ.Կազաչենկո, Մ.Եկմալյան, Ե.Բաղդասարյան, Մ.Տեր-Աստվածատրյան, Ս.Դեմուրյան, Ալ.Սպենդիարյան: Դաշնամուրի նվագամասը՝ Ե.Բաղդասարյան, Ա.Մելիք-Դադյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N 74:

5 Երգիչներ Գ.Ամիրյանի և Ս.Բարխուդարյանի համերգը՝ Արմավիրի ամառային ակումբում: Ծրագրում՝ Չայկովսկի, Լեոնկավալլո:

*Ներքին լուրեր*, Մշակ, 16 օգոստոսի, N 179:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

8 Երգիչ Գ.Ամիրյանի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Մասնակցեց ֆրանսիացի երգչուհի և դաշնակահարուհի Մարիա-Թերեզա Ժոսսեն: Ծրագրում՝ Չայկովսկի, Մեյերբեր, Գունո, Պոնկիելլի, Կազաչենկո:

"Концерт Г.Амиряна и г-жи Жоссе". Новое обозрение, 11 сентября, N 5816.

10 Երգչուհի Սասորյանը (Սասատուրովա) կատարեց Թամարայի դերերգը՝ Ա.Ռուբինշտեյնի «Դև» օպերայում, որը ներկայացվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

*Նոր-քին լուրեր*, Մշակ, 12 սեպտեմբերի, N 201:

29 Գիտական-գրական երեկո՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սրահում: Կոմիտասը կարդաց զեկուցում «Հայոց Եկեղեցական ութ ձայնի մասին» թեմայով: Ելույթ ունեցավ ճեմարանի երգեցիկ խումբը (ղեկ. Կոմիտաս): Ծրագրում՝ Հայկական ժողովրդական երգեր:

Արարատ, N 9-10, էջ 430:

– Ալեքսանդր Սպենդիարյանի «Կոնցերտային նախերգանքը» կատարվեց Պավլովսկում (ղեկ. Հեղինակ):

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

7 Երգիչ Ստեփան Բարխուդարյանի համերգը՝ Թիֆլիսի ձմեռային ժողովարանի դահլիճում:

*Կարա-Մուրզա*, Կոնցերտ: Մշակ, 9 հոկտեմբերի, N 223:

7 Պոլսում վախճանվեց մշակութային գործիչ Հարություն-Գարեգին Տատյանը (ծնվ. 1826):

21, 28 Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգները (ղեկ. Ք.Կարա-Մուրզա)՝ Թիֆլիսի կովկասյան ցուցահանդեսի դահլիճում:

«Կարա-Մուրզայի հանրամատչելի ժողովրդական համերգի մասին»: Մշակ, 23 հոկտեմբերի, N 235:

«Կարա-Մուրզայի երկրորդ հանրամատչելի ժողովրդական համերգի մասին»: Մշակ, 30 հոկտեմբերի, N 241:

## ՆՈՅԵՄԲԵՐ

9 Թիֆլիսի առաջին օպերային ներկայացումների 50-ամյակը հանդիսավոր տոնվեց արքունական թատրոնում:

*Հով.Կարապետյան,* Առաջին օպերային ներկայացումը Թիֆլիսում (50-ամյակի առթիվ): Մշակ, 9 նոյեմբերի, N 250:

*Կարա-Մուրզա,* Հոբելյանական ներկայացում: Մշակ, 11 նոյեմբերի, N 252:

«Թատրոն»: Նոր-դար, 11 նոյեմբերի, N 166:

10 Երեկո՝ Պետերբուրգի ազնվականների ժողովարանում՝ չքավոր հայ ուսանողների օգտին: Համերգային բաժնում ելույթ ունեցան՝ երգչուհի Նադեժդա Պապայանը, երգիչ Ներսես Շահլամյանը, ջութակահար Հովհաննես Նալբանդյանը և ուսանողներից կազմված նվագախումբը:

*Օր.Ե.,* Հայկական երեկույթ Պետերբուրգում: Տարազ, 25 նոյեմբերի, N 45, էջ 413:

*Театр и музыка,* Новое обозрение, 17 ноября, N 5881.

18 Երգչուհի Մարգարիտ Բաբայանի համերգը՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Մասնակցեցին՝ երգիչ Է.Գ.Բրոջին, ջութակահար Գ.Հաքիմյանը և դաշնակահար Ֆ.Կ.Կեսները: Երգչուհին հանդես եկավ նաև որպես դաշնակահարուհի՝ Գ.Հաքիմյանի հետ կատարելով Շումանի N 121 սոնատը:

*Tigo* (Տիգրան Նազարյան), Թատրոն, երաժշտություն: Տարազ, 18 նոյեմբերի, N 44:

*Կարա-Մուրզա,* Կոնցերտ: Մշակ, 20 նոյեմբերի, N 258:

*Tigo* (Տիգրան Նազարյան), Թատրոն, երաժշտություն: Տարազ, 25 նոյեմբերի, N 45, էջ 412-413:

«Ռուսահայ նվագահանդես և թատրոն»: Արևելք, N 4813:

25 Երգիչ Տիգրան Նալբանդյանի համերգը՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Մասնակցեցին՝ դաշնակահար

Ց.Կ.Կենները և թավջութակահար Վ.Դոբրոխոտովը:

*Ներքին լուրեր*, Մշակ, 27 նոյեմբերի, N 263:

"Концерт Т.И.Налбандяна". Новое обозрение. 27 ноября, N 5890.

28 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգի ազնվականների ժողովարանի դահլիճում կայացած համերգին: Ծրագրում՝ Բրամս-Իոախիմ - «Հունգարական պարեր»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 229:

29 Երգիչ Բեգլար Ամիրջանի համերգը՝ Կաղանում: Ծրագրում՝ Դարգոմիժսկի, Չայկովսկի, Ռուբինշտեյն, Գլինկա, Ռիմսկի-Կորսակով:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 269:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

2 Երգչուհի տիկին Անահիտը կատարեց Զիբելի դերերգը՝ Գունոյի «Ֆաուստ» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի օպերային թատրոնում:

*Կարա-Մուրզա*, Օպերային ներկայացումներ: Մշակ, 4 դեկտեմբերի, N 269:

"Тифлисская опера". Новое обозрение, 4 декабря, N 5897.

*Tigo* (Տիգրան Նազարյան), Տ.Անահիտի դեբյուտը: Տարազ, 9 դեկտեմբերի, N 47, էջ 430:

8 Երգիչ Լ.Եղիազարյանի համերգը Փարիզի Պոտինիերի դահլիճում: Ներածական խոսք՝ հայկական ժողովրդական երաժշտության մասին ֆրանսիացի երաժշտագետ Թիերսոնի:

«Պ.Եղիազարյանի ցերեկույթը». Անահիտ, N 12, էջ 292:

8 Վերդիի «Աիդա» օպերան՝ Թիֆլիսի արքունական

թատրոնում: Ալդա - Ասատրյան (Աստաուրովա), Ամներիս - տիկին Անահիտ:

*Կարա-Մուրզա*, Օպերային ներկայացումներ: Մշակ, 11 դեկտեմբերի, N 274:

*Tigo* (Տիգրան Նազարյան), Տ.Անահիտի դերյութը: Տարազ, 9 դեկտեմբերի, N 47, էջ 430:

"Тифлисская опера". Новое обозрение, 10 декабря, N 5903.

19 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Ռիգոլետտոյի դերերգը՝ Վերդիի համանուն օպերայում, որը բեմադրվեց Սարատովի քաղաքային թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 200:

- Մահացավ աշուղ Մայիֆը (Հարություն, ծնվ. 1825-ին):

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


### Ա) Նոտաներ

«Նոր երգարան կամ մրմունջ Հայկական, Բ. տպագրություն»: Վառնա:

«Ռամկական մրմունջներ: Աշուղական, ժողովրդական խառն երգեր և պարերգեր»: Խմբագրեց դպիր Ա.Բրուտյան, Գ. տպագրություն:

«Վազգեն երգարան», Հավաքեց Տիգրան Տերոյան (Վազգեն): Բոստոն:

### Բ) Գրքեր

*Դ.Խաչկոնց*, Հայոց կրոնական բանաստեղծություն: Լումա, վեցերորդ տարի, գիրք Բ: Թիֆլիս:

«Աիդա» օպերայի լիբրետոն: Թիֆլիս:

«Ֆաուստ» օպերայի լիբրետոն: Օդեսա:

*В.Корганов,* Кавказская музыка (Сборник статей), Тифлис.

*В.Корганов,* Вспомогательная касса деятелей кавказской печати. Проект устава "Вспомогательной кассы деятелей кавказской печати в Тифлисе". Тифлис.

*Попов.* Армянская музыка. Исторический очерк. Санкт -Петербург.

### Գ) Հոդվածներ

*Խ.Կարա-Մուրզա,* Արևելյան տարրը եվրոպական երաժշտության մեջ: Մուրճ, հունվար, N 1, էջ 230-234:

Ջ.Վերդի, «Աիդա» (լիբրետո): Գեղունի, N 1, էջ 2-4:

*Ք.Կարա-Մուրզա,* Ջուզեպպե Վերդի: Մուրճ, փետրվար, N 2, էջ 274-282:

*Սիմ.Հախումյան,* Ջուզեպպե Վերդի: Թատրոն, N 2 գիրքը, էջ 43-48:

*Ալեքս.Փանոսյան,* Սերը (երգ)։ Մասիս, N 2, էջ 25։

*Մ.Պալյան,* Գողթան երգերի տաղաչափության մասին։ Արարատ, N 2, էջ 99-106։

*Կոմիտաս,* Մի համեստ բանասեր (Պ.Դ.Խաչկոնցի «Հայոց կրոնական բանաստեղծությունը» գրքի մասին)։ Արարատ, ապրիլ, N 4, էջ 228-229։

*Ա.Չոպանյան,* Դեմքեր։ Կոմիտաս վարդապետ։ Անահիտ, Հուլիս, N 7, էջ 141-144։

*Անտոն Դալը,* Տաղ ողբերգական ի բերանոց մեռելոց է ասացեալ։ Անահիտ, Հուլիս, N 7, էջ 163-164։

Հայ էջեր։ Տաղ ս.Աստվածածնի։ Տաղ ասացեալ ի վերայ ս.Կուսին Մարիամու։ Տաղ սիրո։ Անահիտ, Հուլիս, N 7, էջ 215-216։

Կարա-Մուրզայի կոնցերտը։ Մուրճ, N 7, էջ 231։

Tigo (Տիգրան Նազարյան), Գեղարվեստ. Թատրոն, երաժշտություն (օպերային ներկայացումներ)։ Տարազ, սեպտեմբեր, N 39, էջ 60-61։

Tigo (Տիգրան Նազարյան), Թատրոն, երաժշտություն (Թիֆլիսում կայացած համերգների, ներկայացումների մասին)։ Տարազ, Հոկտեմբեր, N 41, էջ 390։

Tigo (Տիգրան Նազարյան), Գեղարվեստ (օպերային ներկայացումներ)։ Տարազ, Հոկտեմբեր, N 43, էջ 68-69։

«Հայ էջեր, Ողբ։ Տաղ սիրո»։ Անահիտ, Հոկտեմբեր-նոյեմբեր, N 10-11, էջ 259։

*Ղևոնդ Ալիշան,* Հիններգ առագաստի նախածոնդաց Յեղեմ գրադարանի։ Անահիտ, դեկտեմբեր, N 12, էջ 281-286։

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումները («Աիդա» - Թիֆլիսի արքունական թատրոնում)։ Մշակ, 1 Հունվարի, N 1։

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Դոն-Ժուան», «Էռնանի», «Պայացներ» և «Կովկասի գերին» օպերաների առթիվ Թիֆլիսի արքունական թատրոնում)։ Մշակ, 18 Հունվարի, N 11։

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ

(«Պարահանդես-դիմակահանդես» - Թիֆլիսի արքունական թատրոնում): Մշակ, 30 հունվարի, N 21:

Թատրոն (Օպերային ներկայացումների մասին): Նոր-դար, 3 փետրվարի, N 22:

*Բ.Կարա-Մուրզա,* Բարեգործական կոնցերտ (կժանազին գրադարանի հավլաբարի բաժանմունքի օգտին): Մշակ, 4 փետրվարի, N 26:

*Ե.Արշարունի,* Վերդի (մահվան առթիվ): Արևելք, 21 փետրվարի, N 4554:

Օպերային ներկայացումներ: Նոր-դար, 23 փետրվարի, N 33:

*Բ.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Լոենգրին», «Կարմեն», «Եվգենի Օնեգին» և «Տրավիատա» օպերաների բեմադրության առթիվ Թիֆլիսում): Մշակ, 24 փետրվարի, N 42:

*Բ.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Պայացներ», «Գյուղական պատիվ», «Ֆաուստ» օպերաների բեմադրության առթիվ Թիֆլիսում): Մշակ, 27 փետրվարի, N 44:

*Բ.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Լուչիա», «Դինորա», «Աֆրիկուհի» և «Համլետ» օպերաների բեմադրության առթիվ): Մշակ, 25 մարտի, N 67:

*Բ.Կարա-Մուրզա,* Սիմֆոնիական կոնցերտ (Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի աշակերտական նվագախմբի համերգը Ն.Ս.Կլենովսկու ղեկավարությամբ): Մշակ, 27 մարտի, N 68:

*Բ.Կարա-Մուրզա,* Սիմֆոնիական կոնցերտ (Ապրիլի 22-ին կայացած ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի երաժշտական ուսումնարանի աշակերտական սիմֆոնիկ համերգի մասին): Մշակ, 26 ապրիլի, N 88:

*Բ.Կարա-Մուրզա,* Նամակ խմբագրության: Շուշի, հունիսի 12-ին (Շուշվա թեմական դպրոցի ղեկավարության, հառկապես Բենիկ վարդապետի արարքների մասին): Մշակ, 23 հունիսի, N135:

*Ս.Ղալաչյան,* Նամակ Բելգիայից. Բրյուսել, հունիսի 30-ին

(Զութակահար Դավիթ Դավթյանի Բրյուսելի կոնսերվատորիան ավարտելու մասին): Մշակ, 30 հունիսի, N 139:

*Վ.Աարիյան,* Նամակ խմբագրության Աստրախանից (Բաղմաձայն երգեցողության Մ.Եկմալյանի և Ք.Կարա-Մուրզայի պատարագի եղանակների աղավաղման մասին): Մշակ, 20 հուլիսի, N 157:

*Ք.Կարա-Մուրզա,* Նամակ խմբագրության, Թիֆլիս, հուլիսի 27-ին (Մշակի N 157-ում զետեղված Վ.Աարիյանի եկեղեցական երգեցողության մասին նամակի վերաբերյալ Ք.Կարա-Մուրզայի պատասխանը): Մշակ, 1 օգոստոսի, N 167:

«Կովկասյան ցուցահանդեսին Ք.Կարա-Մուրզայի տված խմբական համերգի մասին»: Մշակ, 6 սեպտեմբերի, N 197:

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ (Մ.Ի.Գլինկայի "Жизнь за царя" օպերայի բեմադրության առթիվ Թիֆլիսի արքունական թատրոնում): Մշակ, 11 սեպտեմբերի, N 200:

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Ֆաուստ» օպերայի բեմադրության առթիվ Թիֆլիսում): Մշակ, 10 հոկտեմբերի, N 224:

*Միքել,* Նամակ խմբագրության (Ք.Կարա-Մուրզայի խմբավարական գործունեության մասին): Մշակ, 11 հոկտեմբերի, N 225:

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Հուդա Մակաբայեցի» օպերայի բեմադրության առթիվ Թիֆլիսում): Մշակ, 12 հոկտեմբերի, N 226:

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Մարգարե» օպերայի բեմադրության առթիվ Թիֆլիսում): Մշակ, 18 հոկտեմբերի, N 231:

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Բոհեմա», «Պայացներ» և «Ռիգոլետտո» օպերաների բեմադրության առթիվ): Մշակ, 24 հոկտեմբերի, N 236:

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ (Ա.Ռուբինշտեյնի «Վաճառական Կալաշնիկով» օպերայի

բեմադրության առթիվ Թիֆլիսի արքունական թատրոնում)։ Մշակ, 18 նոյեմբերի, N 257։

*Բ.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Հուգենոտներ» և «Ռիգոլետտո» օպերաների բեմադրության առթիվ)։ Մշակ, 27 նոյեմբերի, N 263։

*Բ.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ («Մազեպա» օպերայի բեմադրության առթիվ)։ Մշակ, 29 նոյեմբերի, N 265։

*К(органов),* Верди. Тифлисский листок, N 13.

*Н.Ф.Тигранов,* Мысли о восточной музыке. Новое время, 15 января, N 8939.

*Ф.Гартман,* Е.Багдасарян. Русская музыкальная газета, N 19-20.

*Е.Багдасарян,* Несколько слов об армянской музыке. Русская музыкальная газета, N 19-20, стр. 521.

*К.(В.Д.Корганов),* Казенный театр (О спектакле "Травиата"), Тифлисский листок, N 45.

*В.Д.К. (В.Д.Корганов),* Взгляд в нечто (Рим языческий. Рим христианский. Мадонна Рафаэля. Рим современный. Пантеист перед неаполитанским аквариумом. На Везувии. Развалины Помпеи. Драма в Палермо. Росси об итальянском театре. Заключение.) Кавказский вестник, N 2, стр. 68-115.

*В.Д.К. (В.Д.Корганов),* Взгляд и нечто (Встреча с директором театра). Кавказский вестник, N 4, стр. 116-136.

*В.Д.К. (В.Д.Корганов),* Взгляд и нечто (Тоже о школах. О философии в школах). Кавказский вестник, N 5, стр. 29-38.

*В.Д.К. (В.Д.Корганов),* Взгляд и нечто (Грузинские мелодии. Г.Тигранов, в чем дело? Статьи гг.Багдасарьянца, Папазьяна, Мошорьяна и Тьерсо об армянской музыке.

Тифлис прежде и теперь. Юбилей В.Баскина. Неприятные инциденты. "Погребальное шествие" Сербулова. Наши концертные программы. Наши рецензенты. Музыка в антрактах драмы. Музыка кавказская на выставке). Кавказский вестник, N 11, стр. 35-38.

*В.Д.К. (В.Д.Корганов),* Взгляд и нечто (К двадцатилетию Тифлисского музыкального училища). Кавказский вестник, N 12, стр. 69-73.

*В.Д.К(органов),* Статья Багдасаряна. Кавказский вестник, N 12, стр. 38.

*В.К(органов),* Полковник А.Н.Карамзин. Кавказ, N 23.

*К.(В.Д.Корганов),* Концерт П.П.Палиева. Кавказ, N 79.

*Idem (В.Д.Корганов),* Грузинская опера. Кавказ, N 82.

*В.Д.К(органов),* Письмо в редакцию. Кавказ, N 310.

*Idem (В.Д.Корганов),* Казенный театр (О спектакле "Золушка"). Кавказ, N 329.

*Idem (В.Д.Корганов),* Казенный театр (О спектакле "Богема"). Кавказ, N 329.

*Idem (В.Д.Корганов),* Казенный театр (О спектакле "Пророк"). Кавказ, N 331.

*Idem (В.Д.Корганов),* Казенный театр (О спектакле "Корневильские колокола"). Кавказ, N 334.

*Idem (В.Д.Корганов),* Казенный театр (О спектакле "Гугеноты"). Кавказ, N333.

*Idem (В.Д.Корганов),* Казенный театр (О спектакле "Евгений Онегин"). Кавказ, N 336, 338, 343.

*Idem (В.Д.Корганов),* Тифлисский кружок (О концерте Гинкуловой-Карениной). Кавказ, N 343.

*Komitas,* Armeniens Vabkstumliche Regentanze (Հայ գեղջուկ պարը). "Zeitschrift für Armenische Philologie", Մարբուրգ, I տարի, 1 տետր, էջ 34:

# 1902

## ՀՈՒՆՎԱՐ

**12** Երեկո՝ Բաքվի Հասարակաց ժողովարանի դահլիճում Մարդասիրական ընկերության գրադարանի օգտին: Ելույթ ունեցան՝ երգիչ Տիգրան Նալբանդյանը (կատարեց Չայկովսկու ռոմանսները), Բաքվի Հայկական սիրողական երգեցիկ խումբը (բաղկացած 70 հոգուց, ղեկ. Ք.Կարա-Մուրզա):

*Ն.Դավթյան*, Նամակ Բաքվից: Մշակ, 5 հունվարի, N 2:

*Ն.Դավթյան*, Հայկական երեկույթը Բաքվում: Մշակ, 17 հունվարի, N 10:

**13** Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ք.Կարա-Մուրզա)՝ Բաքվի բանվորների համար:

Մշակ, 17 հունվարի, N 10:

**20** Երգիչ Ստեփան Բարխուդարյանի համերգը՝ Ալեքսանդրապոլում: Մասնակցեց երգչուհի Լիվինան:

Մշակ, 25 հունվարի, N 25:

## ՓԵՏՐՎԱՐ

**1** Արևելյան նվագախումբը (ղեկ. Ե.Բաղդասարյան) ելույթ ունեցավ Պետերբուրգի երաժշտական ընկերության դահլիճում կայացած համերգում:

Տարազ, N 2, էջ 15:

**20** Թիֆլիսի հայկական սիրողական երգեցիկ խմբի

համերգը (ղեկ. Բ.Կարա-Մուրզա)՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Մասնակցում էին՝ երգիչներ Վ.Տեր-Առաքելյանը և Ս.Մեղնիկյանը: Ծրագրում՝ Բ.Կարա-Մուրզա, Ջիվանի, Ղ.Ալիշան, հայկական ժողովրդական երգեր:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 33:

**23** Հայկական սիրողական երգեցիկ խմբի և նվագախմբի համերգը՝ Թիֆլիսի վրաց ազնվականների թատրոնում (ղեկ. Լ.Մարտիրոսյան):

*Ներքին լուրեր,* Մշակ, 21 փետրվարի, N 39:

**23** Համերգ՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ ջութակահարուհի Ի.Միրիմանյանը, երգչուհի Ա.Բաբայանը, մանդոլինահարների խումբը, դաշնակահար Լ.Ա.Մաքսիմովը և դերասան Ա.Արմենյանը:

Մշակ, 26 փետրվարի, N 942:

## ՄԱՐՏ

**3** Գրիգոր Միրզայանի (Սյունի, այսուհետև՝ Գր.Միրզայան) ղեկավարած երգեցիկ խմբի համերգը՝ Պետերբուրգում: Մասնակցեց երգիչ Մակար Վարդիկյանը:

Նոր-դար, 6 մարտի, N 40:

**14** Երգչուհի Նադեժդա Պապայանի համերգը՝ Մոսկվայում:

Тифлисский листок, 20 марта, N 67.

**25** Երգչուհի Նադեժդա Պապայանը կատարեց Վիոլետայի դերերգը՝ Վերդիի «Տրավիատա» օպերայում, որը բեմադրվեց Բաքվում:

- Կոմիտասը Էջմիածնում կազմակերպեց քառաձայն երգեցիկ խումբ:

Մշակ, 21 ապրիլի, N 38:

*Театр и музыка,* Тифлисский листок, 29 марта, N 75:

25 Երևանի երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ս.Դեմուրյան)՝ քաղաքային ժողովարանի դահլիճում: Մասնակցում էին երգիչներ Մ.Ջալալյանը, Ժ.Մեհրաբյանը: Ծրագրում՝ ժողովրդական երգեր - «Սիրուհիս, քեզ համար», «Շողեր ջան», «Լուսնը հորովելը», Ս.Դեմուրյան - «Երազ», «Արաքսի արտասուք», «Իմ տարիքը», «Տարան-տարան», «Ջան մարալ ջան», «Հրեշտակ», Ք.Կարա-Մուրզա - «Նոր մոդայի կանոնով», «Ջան գյուլում»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ս.Դեմուրյանի ֆ., N 53:

27 Թիֆլիսում վախճանվեց կոմպոզիտոր Քրիստափոր Կարա-Մուրզան (ծնվ. 18 փետրվարի, 1853, Ղարասուբազար): Թաղումը՝ մարտի 30-ին, Կուկիայի կաթոլիկների գերեզմանատանը:

«Քրիստափոր Կարա-Մուրզա»: Մշակ, 28 մարտի, N 68:

*Վրժին (Ա.Քալանթար)*, Մանրանկար: Մշակ, 30 մարտի, N 70:

«Կարա-Մուրզայի թաղումը»: Մշակ, 2 ապրիլի, N 71:

*Աստ.Երիցյան*, Նամակ խմբագրության: Մշակ, 3 ապրիլի, N 72:

*Հով.Կարապետյան*, Քրիստափոր Կարա-Մուրզա: Բազմավեպ, N 9-10, էջ 418-428:

«Քրիստափոր Կարա-Մուրզա»: Տարազ, N 12, 31 մարտի, էջ 21:

«Կամքի ուժը (Կարա-Մուրզա)»: Տարազ, N 16, 5 մայիսի, էջ 109:

«Գործը չպետք է մեռնի»: Մշակ, 2 ապրիլի, N 71:

*Արամ Անտոնյան*, Կարա-Մուրզա: Արևելք, 10 ապրիլի, N 4917:

*Սիրանուշ*, Ցավակցական հեռագիր Կարա-Մուրզայի մահվան առթիվ: Արևելք, 20 ապրիլի, N 4925:

*Կարենցի*, Քրիստափոր Կարա-Մուրզա (մահվան առթիվ, նրա գործունեության մասին): Արտեմիս, N 4, էջ 122-123:

*Լ.Ա.*, Քրիստափոր Կարա-Մուրզա: Մուրճ, N 4, էջ 181-182:

*Ա.Ա.Մ.*, Կարա-Մուրզայի մահվան առթիվ: Արևելյան մամուլ, N 9, 1 մայիսի, էջ 438:

*Н.М.*, Х.Кара-Мурза. Астраханский листок, 29 мая, N 112.

28 Մագդալինե Գենջյանի երգեցողության դպրոցի աշակերտների օպերային ներկայացումը՝ Կազանի քաղաքային թատրոնում: Բեմադրվեցին հատվածներ Վերդիի «Ռիգոլետտո», Գլինկայի "Жизнь за царя" և Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերաներից (ղեկ. Մ.Գենջյան):

*Музыка*, Биржевые ведомости, 14 апреля.

30 Հայկական ժողովրդական ու հոգևոր երգերի երեկո՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սրահում: Ելույթ ունեցավ քառաձայն երգեցիկ խումբը Կոմիտասի ղեկավարությամբ: Կոմիտասը զեկուցեց ժողովրդական երաժշտության մասին և հանդես եկավ երգերի կատարումով: Ծրագրում՝ «Հայր մեր», «Նորահրաշ», «Ով զարմանալի», «Սուրբ ես տեր», «Էջմիածին ի հորե» հոգևոր երգերը, «Լոռվա գութաներգը», «Սիփանա քաջերը», հատված Վերդիի «Աիդա» օպերայից՝ «Տաճարում»:

*Մ.Արշեն*, Հայ ժողովրդական երգերը և հայր Կոմիտասի կոնցերտը: Նոր-դար, 6 ապրիլի, N 54:

## ԱՊՐԻԼ

2 Երգչուհի Նադեժդա Պապայանը կատարեց Տատյանայի դերերգը՝ Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում, որը բեմադրվեց Բաքվում:

*Театр и музыка*, Бакинская газета, 4 апреля.

4 Երգչուհի Նադեժդա Պապայանի համերգը՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Ծրագրում՝ Չայկովսկի, Դարգոմիժսկի, Մասնե, Մոցարտ, Բլեյխման:

*Ներքին լուրեր*, Մշակ, 4 ապրիլի, N 73:

4 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝

Պետերբուրգի կոնսերվատորիայի փոքր դահլիճում: Մասնակցում էին՝ դաշնակահարուհի Ի.Ա.Վենդերովան և երգիչ Վ.Ի.Կաստորսկին: Ծրագրում Բրամս - սոնատ լյա մաժոր, Շոպեն - բալլադ սոլ մինոր, Շպոր - կոնցերտ ջութակի համար լյա մինոր, Սարասատե - «Խաբանեռա», Վենյավսկի - «Մոսկվայի հուշանվերները»: Դաշնամուրի նվագամասը՝ Մ.Դուլով:

Ծրագիր, ԳԱԹ, Հ.Նալբանդյանի ф., N 230:

9 Երեկո՝ նվիրված Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին, Բաքվում:

*Համակրող*, Նամակ խմբագրության: Մշակ, 2 մայիսի, N 92:

14 Քառաձայն երգեցիկ խմբի համերգը՝ Կոմիտասի ղեկավարությամբ, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի հանդիսասրահում: Ծրագրում՝ «Հորովել», «Նազանըմ», «Ալագյազ սարն ամպել ա», «Ո՜հ, ինչ ուրախ բառն, ըլլալ կոնձարան» ժողովրդական երգերը, հոգևոր երգեր:

Արարատ, N 5-6, էջ 467:

15 Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին կատարվեց հոգեհանգիստ՝ Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը:

Մշակ, 19 ապրիլի, N 82:

27 Երգիչ Ստեփան Բարխուդարյանի համերգը՝ Բաքվում: Ծրագրում՝ Լեոնկավալլո, իտալական ռոմանսներ:

*Театр и музыка,* Тифлисский листок, 3 мая, N 104.

## ՄԱՅԻՍ

5 Ջութակահար Դավիթ Դավթյանի համերգը՝ Բաքվում:

Մշակ, 10 մայիսի, N 99:

5 Դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի աշակերտների համերգը՝ Թիֆլիսի երկրորդ արական գիմնազիայի դահլիճում: Ծրագրում՝ Արենսկի, Շուբերտ, Բեթհովեն, Ռուբինշտեյն, Չայկովսկի, Մենդելսոն:

*Ներքին լուրեր* (Հաղորդում - գրախոսություն): Մշակ, 7 մայիսի, N 96:

11 Երգչուհի Մարգարիտ Բաբայանի և կոմպոզիտոր - դաշնակահար Նիկողայոս Տիգրանյանի համերգը՝ Ալեքսանդրապոլի քաղաքային ակումբի դահլիճում: Ծրագրում՝ Սեն-Սանս, Ն.Տիգրանյան, Չայկովսկի, Գունո:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ն.Տիգրանյանի ֆ., N 293:

12 Քրիստափոր Կարա-Մուրզայի մահվան քառասունքի առթիվ տեղի ունեցավ հոգեհանգիստ՝ Թիֆլիսի կաթոլիկ եկեղեցում:

Մշակ, 11 մայիսի, N 100:

23 Հայկական երաժշտության համերգ՝ Գրոզնու քաղաքային ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ Գրոզնու հայկական սիրողական խառը երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Զոմարյան), երգիչներ՝ Ն.Դավթյանը, Ս.Ասլամազյանը, Ա.Հովհաննիսյանը, Գ.Ժամկոչյանը: Ծրագրում Ք.Կարա-Մուրզա - «Մեր հայրենիք», «Լեպհո, լե-լե», «Կռունկ», «Ալագյազ-Էջմիածին», «Ջան գյուլում», «Ծիծեռնակ», «Անփույթ նավաստի», «Ավետիս», «Մայր Արաքսի», «Հոյ Նազան», «Ցուրտ փչեց», հայկական ժողովրդական պարեր հայկական տարազներով:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 35:

24 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Տոմսկու դերերգը՝ Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայում, որը բեմադրվեց Մոսկվայի «Ակվարիում» թատրոնում:

*«Ներքին լուրեր»*, Մշակ, 31 մայիսի, N 114:

## ՀՈՒՆԻՍ

3 Թառաձայն երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ս.Դեմուրյան)՝ Երևանի ժողովարանի դահլիճում:

*Բ.Վ.*, Նամակ Երևանից: Մշակ, 12 հունիսի, N 124:

6 «Кавказский вестник» ամսագրում հրապարակվեց Վ.Կորգանովի "Взгляд в нечто" վերնագրով հոդվածը, ուր մի ամբողջ հատված նվիրված է "Zeitschrift für Armenische Philologie" հանդեսում հրապարակված Կոմիտասի «Հայ գեղջուկ պարը» հոդվածին:

Кавказский вестник, июнь, N 6, стр. 32.

## ՀՈՒԼԻՍ

3 Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Շուշիում:

Մշակ, 9 հուլիսի, N 147:

25 Կոմպոզիտոր Եղիշե Բաղդասարյանը իր գրած ռոմանսների համար՝ Պետերբուրգի «Մարինյան օրքեստրի» վարչության կողմից արժանացավ մրցանակի:

Նոր-դար, 1 օգոստոսի:

25 Երգչուհի Նադեժդա Պապայանը կատարեց Մարգարիտայի դերերգը՝ Գունոյի «Ֆաուստ» օպերայում, որը բեմադրվեց Կիսլովոդսկի թատրոնում:

"Оперные спектакли в Кисловодском театре". Кавказские минеральные воды, 27 июля.

28 Երգիչ Բեգլար Ամիրջանի և դաշնակահար Սամուել Սամուելսոնի համերգը՝ Թեոդոսիայի համերգային դահլիճում:

28 Երգիչ Բեգլար Ամիրջանի և դաշնակահար Սամուել Սամուելյանի համերգը՝ Թեոդոսիայի համերգային դահլիճում: Ծրագրում՝ Լեոնկավալլո, Տոզեն, Լիստ, Ռուբինշտեյն, Բորոդին, Չայկովսկի, Բիզե: Դաշնամուրի նվագամասը՝ Վ.Վոլկ - Լանևսկայա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 269:

## ՕԳՈՍՏՈՍ

**9** Երգիչ Բեգլար Ամիրջանի համերգը՝ Յալթայի հասարակական ժողովարանում: Մասնակցեց ջութակահար Մ.Ի.Պրեսը: Ծրագրում՝ Բորոդին, Տոմա, Վյետան, Բիզե, Ռուբինշտեյն, Սարասատե, Գլինկա: Դաշնամուրի նվագամասը՝ Ս.Սամուելյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 269:

**11** Համերգ՝ Շուշիի Խանդամիրյանի թատրոնի դահլիճում: Ելույթ ունեցան՝ քառաձայն երգեցիկ խումբը և արևելյան նվագախումբը (ղեկ. Ե.Բաղդասարյան):

*Ներքին լուրեր*, Մշակ, 17 օգոստոսի, N 180:

**21** Երգիչ Ստեփան Բարխուդարյանի համերգը՝ Շուշիի Խանդամիրյանի թատրոնի դահլիճում: Ելույթ ունեցավ դաշնակահարուհի Լ.Սարուխանյանը: Ծրագրում՝ հայկական ժողովրդական երգեր՝ «Պաղ աղբյուրի մոտ», «Լորիկ», «Սիրուհիս, քեզ համար», «Կռունկ», Չայկովսկի:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N 76:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

**18** Երգիչ Բեգլար Ամիրջանի համերգը՝ Սիմֆերոպոլի քաղաքային ակումբի դահլիճում:

Մշակ, 21 սեպտեմբերի, N 208:

25 Երգիչ Ս.Բարխուդարյանի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Ծրագրում՝ Գոբբատի, Դենցի, հայկական ժողովրդական երգեր:

Մշակ, 25 սեպտեմբերի, N 211:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

9 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Դևի դերերգը՝ Ա.Ռուբինշտեյնի համանուն օպերայում, որը բեմադրվեց Յալթայի ժողովարանի դահլիճում:

*Театр и музыка,* Крымский курьер, 11 октября.

19 Արևելյան նվագախմբի համերգը (ղեկ. Ե.Բաղդասարյան)՝ Բաքվի Ա.Թաղիևի թատրոնում: Մենակատար - թառահար Ն.Ղորղանյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N 75:

20 Ալեքսանդրապոլի սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ա.Տիգրանյան)՝ քաղաքային ամառային ժողովարանի դահլիճում: Մենակատար - երգիչ Ե.Ադամյան: Ծրագրում՝ Ա.Տիգրանյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Տիգրանյանի ֆ., N 215:

## ՆՈՅԵՄԲԵՐ

3 Համերգ՝ նվիրված Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ Թիֆլիսի հայկական սիրողական երկսեռ երգեցիկ խումբը (ղեկ. Պողոս Կարա-Մուրզա), Օ.Մայսուրյանը, Հ.Աղասարյանը, Հ.Աբելյանը, Գ.Պետրոսյանը, Ա.Հակոբջանյանը, Կ.Բաբայանը, Ա.Տեր-Առաքելյանը: Ծրագրում՝ Ք.Կարա-Մուրզա:

16 Հայկական երեկո՝ Պետերբուրգի ազնվականների ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ ջութակահար Հովհաննես Նալբանդյանը, երգիչ Մակար Վարդիկյանը, երգեցիկ խումբը (ղեկ. Գր.Միրզայան), կոմպոզիտոր-դաշնակահար Նիկողայոս Տիգրանյանը: Ծրագրում՝ Գր.Միրզայան, Ն.Տիգրանյան:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 37:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

15 Քառաձայն երգեցիկ խումբը Կոմիտասի ղեկավարությամբ կատարեց «Տեր կեցո դու զՀայս» օրհներգը՝ Էջմիածնի ճեմարանի բակում, որտեղ տեղի ունեցավ Ռ.Պատկանյանի կիսանդրու բացումը (քանդ. Ա.Տեր-Մարուքյան):

Արարատ, N 11-12, էջ 1120:

– Կոմիտասը քառաձայնի վերածեց Ռ.Պատկանյանի «Հիմի է՞լ լռենք» երգը և ուսուցանեց Էջմիածնի ճեմարանի երգչախմբին:

Արարատ, N 11-12, էջ 1122:

18 Կոմպոզիտոր-դաշնակահար Նիկողայոս Տիգրանյանի, ջութակահար Կոնստանտին Սարաջյանի, երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանի համերգը՝ Մոսկվայում:

*Լումա*, Հայոց եկեղեցին: Նոր-դար, 17 դեկտեմբերի, N 190, 20 դեկտեմբերի, N 193:

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Ա) Նոտաներ

*Ն.Տիգրանյան,* Զարդյահ, դաշնամուրի համար: Հրատ. Շմիդտի, Ս.Պետերբուրգ:

*Ալ.Սպենդիարյան,* «Ձկնորսն ու Փերին», բալլադ ձայնի և նվագախմբի համար: Խոսք՝ Մ.Գորկու: Ս.Պետերբուրգ:

«Ձայնագրություն հինգ ժամերգության Ավագ Շաբաթու համաձայն կանոնաց առաքելական Սուրբ եկեղեցու Հայոց Ծաղկազարդ կիրակի երեկոյի երրորդ, վեցերորդ և տասներորդ ժամուց ավագ հինգշաբթու և տասներորդ ժամա ավագ ուրբաթա»: Էջմիածին:

«Ձայնագրություն հինգ ժամերգութեանց Ավագ շաբթու: Գրեալ ըստ արդի ձայնագրութեան յէմի Աբգարե»: Կալկաթա:

*Շահան Սիմոն,* Ուղեցույց տարրական ձայնագրության (վեց դաս), հարմարեցրած խմբապետների համար: Մոսկվա: 63 էջ:

*Գ.Գրիգորյան,* «Սոխակ Հայաստանի», ազգային լիակատար երգարան: «Վազգեն» երգարան: Հայրենիք տպ., Բոստոն:

*Հրազդան,* «Վազգեն» երգարան (գրախոսություն): Հայ հանդես, Վենետիկ, 15 նոյեմբերի, N 8, էջ 118-121:

## Բ) Գրքեր

*Ա.Չոպանյան,* Նահապետ Քուչակի դիվանը: Փարիզ:

*В.Д.Корганов,* К пятидесятилетию Тифлисской оперы. Тифлис, 10 стр.

## Գ) Հոդվածներ

*Tigo* (Տիգրան Նազարյան), Գեղարվեստ (Օպերային ներկայացումներ Թիֆլիսում): Տարազ, N 1, էջ 2:

*Տերվիշ,* Կնահաճը (աշուղական երգեր): Արտեմիս, հունվար, N 1, էջ 19:

«Հայ էջեր: Տաղ ազնիվ»: Անահիտ, փետրվար, N 2, էջ 27:

«Հայ էջեր: Տող Հովնաթանին սասյալ. «Ասել ես թե գարնան փախթը...», Անահիտ, մարտ, N 3, էջ 59:

*Tigo* (Տիգրան Նազարյան), Գեղարվեստ (Համերգային և օպերային ներկայացումներ Թիֆլիսում): Տարազ, N 3, էջ 16:

*Ջ.Վերդի*, «Աիդա» (լիբրետո): Գեղունի, N 3, էջ 21-23: Թարգմանությունը Արսեն Ղազիկյանի:

*Հովհ.Թադևոսյան*, Քուչակ Նահապետի երգերը (Նվեր պ. Մ.Աբեղյանին): Լումա, մայիս-հունիս, N 3, էջ 257-259, N 4, էջ 208-215, N 5, էջ 165-183:

*Լ.Ս.*, Գեղարվեստի աշխարհից [Քր.Կարա-Մուրզա: Գ.Բաշինջաղյանի նկարները: Թատրոնական գործը]: Մուրճ, ապրիլ, N 4, էջ 180-188:

*Կարենցի*, Քրիստափոր Կարա-Մուրզա (մահվան առթիվ): Արտեմիս, ապրիլ, N 4, էջ 122-123:

*Ատրպետ (Մուպայաճյան Սարգիս)*, Կարա-Մուրզա (հիշողություն): Գեղունի, հունիս, N 4-5-6, էջ 28-29:

*Բուբու*, Երգ թագավորաց (մշեցոց ժողովրդական երգեր): Գեղունի, հունիս, N 4-5-6, էջ 35-36:

*Սեյրի*, Կամքի ուժը (Կարա-Մուրզայի երգչախմբի հետ պարապելու մեթոդի մասին): Տարազ, 5 մայիսի, N 16, էջ 109:

«Ժողովրդական սիրերգեր»: Մասիս, N 21, էջ 332-333:

«Ժողովրդական սիրերգեր»: «Անտունի»: Մասիս, N 38, էջ 603:

*Ատրպետ (Մուպայաճյան Սարգիս)*, Բերկրալի ժամեր. Կարա-Մուրզա (հիշողություններ): Աղբյուր, N 5-6, էջ 227-229:

«Տիգրան Չուհաճյանի դերեզմանի վրա մահարձան կանգնեցնելու մասին»: Մուրճ, N 6, էջ 214:

*Ա.Չոպանյան*, Նահապետ Քուչակի երգերը: Անահիտ, N 6, էջ 117-121:

*Ա.Ս.Մ.*, Կարա-Մուրզա: Արևելյան մամուլ, N 9, էջ 438:

*Փիեր Օպրի*, Հայ եկեղեցվո երաժշտական դրությունը: Անահիտ, N 9, էջ 208-209:

*Հովհ.Կարապետյան*, Քրիստափոր Կարա-Մուրզա (1854-

1892): Բաղմավեպ, N 9-10, էջ 418-428:

*Սպ.Մելիքյան,* Ի՞նչ սիստեմով պետք է անցնել երաժշտությունը մեր դպրոցներում («Ուղեցույց տարրական ձայնագրության», կազմեց Շահան-Սիմոն): Արարատ, N 11, էջ 1158-1161:

«Հայ էջեր: Երգ սիրո»: Անահիտ, N 12, էջ 251:

«Հայկական արվեստի երեկույթ մը (կայանալիք)»: Անահիտ, N 12, էջ 260:

*Ա.,* Գեղարվեստի աշխարհից: Մուրճ, N 12, էջ 188-201:

*Ք.Կարա-Մուրզա,* Օպերային ներկայացումներ (Թիֆլիսի օպերային թատրոնի ընթացիկ թատերաշրջանի ներկայացումների ընդհանուր տեսություն): Մշակ, 20 փետրվարի, N 38:

*Կարա-Մուրզա,* Մի կոնցերտ էլ (փետրվարի 23-ին Թիֆլիսում կայացած հայկական խմբական մի համերգի մասին): Մշակ, 27 փետրվարի, N 43:

*Ս.Մարտիրոսյան,* Նամակ խմբագրության (Ք.Կարա-Մուրզայի հոդվածի առթիվ՝ լույս տեսած փետրվարի 27-ին, N 43-ում): Մշակ, 7 մարտի, N 50:

*Մ.Արշեն,* Հայ ժողովրդական երգերը և հայր Կոմիտասի կոնցերտը [ժողովրդական երգերի հավաքման ու մշակման ուղղությամբ Կոմիտասի կատարած աշխատանքների մասին]: Նոր-դար, 6 ապրիլի, N 54:

*Մ.Ղահրամանյան,* Նամակ Շուշուց (հիշողություններ Ք.Կարա-Մուրզայի մասին): Մշակ, 9 ապրիլի, N 77:

*Հարություն Թումանյան,* Առաջին քառաձայն երգը Ղրիմում (Հուշեր Ք.Կարա-Մուրզայի մասին): Մշակ, 12 ապրիլի, N 80:

*Ա.Անտոնյան,* Կարա-Մուրզա: Արևելք, ապրիլ, N 4917:

*Ա.Մ.Եզեկյանց,* Կարա-Մուրզան Էջմիածնում: Մշակ, 5 մայիսի, N 95:

*Տ.Ա.,* Զուխաճյանի հիշատակին: Արևելք, 7 մայիսի, N 4939:

*Եվգենիա Պոպովյան,* Կարա-Մուրզայի հիշատակին (գործունեության մասին): Մշակ, 7 մայիսի, N 96:

«Չուխաճյանի «Օլիմպիա» օպերայի ուվերտյուրան տպագրելու մասին»: Արևելք, 15 մայիսի, N 4948:

*Հա-սո,* Դեմուրյանի և իր խմբի մասին: Նոր-դար, 16 մայիսի, N 75:

«Տիգրան Չուխաճյանին շիրիմ կանգնեցնելու մասին (Սինանյանի և Քեսեճյանի կողմից Կ.Պոլսում)»: Նոր-դար, 13 հունիսի, N 92:

*Ատրպետ (Մուպայաճյան Սարգիս),* Վերածնություն (հիշողություններից Կարա-Մուրզայի մասին): Ձայն Հայրենյաց, 21 հունիսի, N 139:

«Կարա-Մուրզան էջմիածնի մեջ»: Արևելք, 25 հունիսի, N 4955:

*Թալիա,* Տ.Չուխաճյան: Սուրհանդակ, 26 հունիսի, N 1028:

«Չուխաճյանի հիշատակին (նրա շիրիմի վրա մահարձան կանգնեցնելու առթիվ)»: Սուրհանդակ, 2 հուլիսի, N 1033:

*Թալիա,* Չուխաճյան Տիգրան: Մշակ, 8 հուլիսի, N 159:

*Գամեր,* Թատերական ներկայացում (օպերան Պոլսում): Սուրհանդակ, 26 օգոստոսի, N 1074:

*Հ.Երզնկյան,* Նամակ խմբագրության (Եկմալյանի հոգեկան հիվանդության և նրան բուժական օգնություն կազմակերպելու մասին): Մշակ, 10 սեպտեմբերի, N 119:

*Ա.Մամաջան,* Օպերային ներկայացումները («Եվգենի Օնեգինը» վրաց ազնվականների թատրոնում): Մշակ, 21 սեպտեմբերի, N 208:

*Ա.Մամաջան,* Օպերային ներկայացումները («Պիկովայա դամա»-ն վրաց ազնվականների թատրոնում): Մշակ, 22 սեպտեմբերի, N 209:

*Ա.Մամաջան,* Օպերային ներկայացումները («Աիդա»-ն Թիֆլիսի ազնվականների թատրոնում): Մշակ, 26 սեպտեմբերի, N 212:

*Տեր-Աստվածատրյան,* Եկեղեցական ներդաշնակ

երգեցողություն ռուսահայոց մեջ (բարձր գնահատելով Եկմալյանի ներդաշնակած Պատարագը, հարց է հարուցում Էջմիածնում բանալ երկամյա դասընթաց՝ խմբավարներ պատրաստելու համար)։ Բյուզանդիոն, N 1630։

*Ա.Մամաջան*, Օպերային ներկայացումները («Աիդա», «Պայացներ» - Թիֆլիսում)։ Մշակ, 4 հոկտեմբերի, N 219։

*Ա.Մամաջան*, Օպերային ներկայացումները («Տրավիատա» - Թիֆլիսում)։ Մշակ, 6 հոկտեմբերի, N 221։

*Ա.Մամաջան*, Օպերային ներկայացումները («Գյուղական պատիվ» և «Դեմոն» - Թիֆլիսում)։ Մշակ, 15 հոկտեմբերի, N 228։

*Ա.Մամաջան*, Օպերային ներկայացումներ։ Մշակ, 12 նոյեմբերի, N 251։

*Ա.Մ.*, Թիֆլիսի օպերան։ Նոր-դար, 13 նոյեմբերի, N168։

«Ներքին լուրեր», (Ստեփան Դեմուրյանի երգեցիկ խմբի մասին)։ Մշակ, 2 դեկտեմբերի, N 271։

*В.Д.К. (В.Д.Корганов),* Взгляд и нечто (к пятидесятилетию Тифлисской оперы). Кавказский вестник, N 1, стр. 41-46.

*В.Д.К. (В.Д.Корганов),* Взгляд и нечто (армянин или грузин?). Кавказский вестник, N 5, стр. 65-73.

*В.Д.К. (В.Д.Корганов),* Взгляд и нечто ("Музыкальная полемика" - книжка г.Каргаретели Х.М.Кара-Мурза. Ст.Еп.Кеворкиана. Минувший сезон). Кавказский вестник, N 6, стр. 30-48.

В.Д.Корганов, Взгляд в нечто. Армянские народные танцы, сопровождаемые песнями Комитаса Кеворкяна, Кавказский вестник, N 6, стр. 32-38.

# 1903

## ՀՈՒՆՎԱՐ

5 Հայ երգիչներից կազմված քառաձայն երգեցիկ խմբի համերգը Եկատերինոդարի եկեղեցում:

*Ներքին լուրեր*, Մշակ, 16 հունվարի, N 9:

20 Երգիչ Բեգլար Ամիրջանի բենեֆիսը՝ Թիֆլիսի քաղաքային թատրոնում: Բեմադրվեց Ա.Գ.Ռուբինշտեյնի «Դև» օպերան: Դև - Բ.Ամիրջան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 204:

21 Հայկական երեկո՝ Բեռլինի Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում: Ներածական խոսքով՝ «Եվրոպա և հայեր» թեմայով, հանդես եկավ քննադատ Բրանդեսը: Ելույթ ունեցավ հայ և ռուս ուսանողներից բաղկացած հայկական երգեցիկ խումբը: Կատարվեցին հայկական երգեր:

*Ս.Բուդաղյան*, Նամակ Պետերբուրգից: Մշակ, 7 փետրվարի, N 28:

21, 28 Դաշնակահարուհի Օ.Քալանթարյանի և ջութակահար Մ.Վասիլևի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Ծրագրում՝ Շուբերտի, Շումանի, Շոպենի, Արենսկու, Լիստի դաշնամուրային ստեղծագործությունները, Բեթհովենի «Կրեյցերյան սոնատը» դաշնամուրի և ջութակի համար, Չայկովսկի, Վենյավսկի:

*Ներքին լուրեր*, Մշակ, 21 հունվարի, N 13:

*Театр и музыка*, Тифлисский листок, 30 января, N 24.

26 Հայկական գրական-երաժշտական երեկո՝ ջութակահար Դավիթ Դավթյանի ղեկավարությամբ, Բաթումի երաժշտական

ակումբի դահլիճում:

*Գ.Գրիգորյանց*, Նամակ Բաթումից: Մշակ, 5 փետրվարի, N 26:

## ՓԵՏՐՎԱՐ

**11** Թիֆլիսի հայ երգիչներից կազմված երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ա.Մամաջան)՝ ժողովարանի դահլիճում: Մասնակցեցին՝ երգիչներ Տիգրան Նալբանդյանը և Ս.Պապյանը:

"Концерт г.Мамаджана". Тифлисский листок, 14 февраля, N 37.

**13** Հայկական երեկո՝ Բաքվում: Մասնակցում էին՝ դաշնակահարուհի Վ.Տեր-Ստեփանյանը, երգչուհի Ս.Մամիկոնյանը, երգեցիկ խումբը (ղեկ. Սերբուլով): Ծրագրում՝ Ռուբինշտեյն, Լիստ, հայկական երգեր. «Արաքսի արտասուքը», «Բամփ որոտան»:

*Ն.Դավթյան*, Հայկական երեկույթը Բաքվում: Մշակ, 19 փետրվարի, N 36:

**15** Գրական-երաժշտական երեկո՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգչուհի Հ.Նավասարդյանը, երգիչ Տ.Նալբանդյանը, մանդոլինահարների խումբը (ղեկ. Պ.Փուզինյան): Ծրագրում՝ Չայկովսկի, Գրեչանինով, «Կռունկ», հայկական ժողովրդական երգեր:

*Ներքին լուրեր*, Մշակ, 18 փետրվարի, N 35:

*Օր. Ե.*, Գեղարվեստ: Տարազ, 23 փետրվարի, N 6:

**15** Հայկական արվեստի երեկո՝ Փարիզի «Էնժենյոր Սիվիլի» դահլիճում: «Հայ աշուղների բանաստեղծությունը» թեմայով հանդես եկավ Արշակ Չոպանյանը: «Հայոց երաժշտության մասին» զեկուցեց Պիեռ Օբրին: Կայացավ համերգ: Ելույթ ունեցան՝ երգիչ Գ.Պոյաճյանը, երգչուհի Մարթ

Լկրանը, «Սեն ժերվե երգիչներ» երգեցիկ խումբը: Կատարվեցին հայկական ժողովրդական և եկեղեցական երգեր:

«Փետրվարի 15-ի հայկական երեկույթը»: Անահիտ, N 2-3, էջ 43-45:

23 Միթվայդայում (Գերմանիա) հայ ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվեց առաջին հայկական երեկոն:

*Ա.Աղամալյան,* Նամակ Գերմանիայից: Մշակ, 22 փետրվարի, N 39:

## ՄԱՐՏ

6 Երգիչ Տիգրան Նալբանդյանի համերգը՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Ծրագրում՝ Չայկովսկի, Ռիմսկի-Կորսակով, Ռուբինշտեյն, Սպենդիարյան:

*Major,* Նալբանդյանի համերգը: Մշակ, 8 մարտի, N 91:

18 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝ Պետերբուրգի կոնսերվատորիայի դահլիճում: Ծրագրում՝ Սարասատե, Կյուի:

*Ներքին լուրեր,* Մշակ, 26 մարտի, N 65:

26 Երաժշտական երեկո՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սրահում: Ելույթ ունեցավ քառաձայն երգեցիկ խումբը՝ Կոմիտասի ղեկավարությամբ: Ծրագրում՝ Կոմիտաս. «Լոռվա գութանի երգը», «Լուսինը սարի տակին», «Յար ջան արի», «Հաբրբան», «Ալագյազ սարն ամպել ա», «Խնկի ծառ», «Շողեր», «Գարուն ա, ձյուն ա արել», «Հով արեք», «Չինար ես», «Կայնել ես, կանչում էլ չես», «Ախ, մարալ ջան», «Ինչու բինգյոլը», «Կռունկես», «Հոյ Նազանըմ», «Լուր-դա-լուր» (քրդական հովվանվագ սրինգի, ջութակի և դաշնամուրի համար), «Սարերի վրով գնաց», «Սարից մարդ ա գալիս», «Քրդի հարայը» (սրինգի և դաշնամուրի համար), «Սիփանա քաջեր»:

Տարազ, Թիֆլիս, N 14, 153:

**5** Երաժշտական երեկո՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սրահում: Նշույթ ունեցավ քառաձայն երգեցիկ խումբը Կոմիտասի ղեկավարությամբ: Ծրագրում՝ հատվածներ Գունոյի «Ֆաուստ», Վագների «Թռչող հոլանդացին» օպերաներից, Շուբերտ - երգ, Կոմիտաս - «Գարուն», հայկական ժողովրդական և քրդական երգեր:

Արարատ, ապրիլ, N 4, էջ 330:

**13** Շուշիի թեմական դպրոցի երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ս.Դեմուրյան)՝ Ն.Խանդամիրյանի թատրոնում: Ծրագրում՝ «Բամփ որոտան», «Գյուլում ջան», «Սիրո երգ», «Արաքսի արտասուքը», «Ջան մարալ», «Ելսո ջան», «Համեստ աղջիկ», «Հարբեան», «Լուեց, ամպերը», «Հորովել», «Ահա հրեշտակ», ժողովրդական երգերը:

Ծրագիր. ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N 96:

**17** Քրիստափոր Կարա-Մուրզայի կազմած երգեցիկ խմբի համերգը՝ նվիրված կոմպոզիտորի հիշատակին, Բաքվի ժողովարանի դահլիճում (ղեկ. Պ.Կարա-Մուրզա): Ծրագրում՝ «Հոյ, Նազանըմ» «Ջան գյուլում», «Համեստ աղջիկ», «Ալագյազ-Էջմիածին», «Լեպռո, լե-լե», «Երազ», «Բամփ որոտան», «Ով մահկանացու», «Դու զով խնդրես»:

*Սարյան*, Պ.Կարա-Մուրզայի խմբի համերգը Բաքվում: Մշակ, 25 ապրիլի, N 86:

**26** Քառաձայն երգեցիկ խմբի համերգը՝ Կոմիտասի ղեկավարությամբ, Երևանում:

*Ա-Դո*, Նամակ Երևանից: Մշակ, 30 ապրիլի, N 90:

## ՄԱՅԻՍ

**4** Երգիչ Տիգրան Նալբանդյանի համերգը՝ Թիֆլիսի քաղաքային ակումբի դահլիճում: Ծրագրում՝ Չայկովսկի, հայկական երգեր:

*Նոր-քին լուրեր,* Մշակ, 14 մայիսի, N 101:

**18** Ալեքսանդրապոլի սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ա.Տիգրանյան)՝ քաղաքային ձմեռային ժողովարանի դահլիճում: Մասնակցում էին երգիչներ Ա.Գալստյանը, Ե.Ադամյանը: Ծրագրում՝ Ա.Տիգրանյան, Ռուբինշտեյն, Կազաչենկո, Մ.Եկմալյան:

Աֆիշ, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Տիգրանյանի ֆ., N 590:

**25** Դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի աշակերտների համերգը՝ Թիֆլիսի երկրորդ արական գիմնազիայի դահլիճում:

*Միրոզ,* Երաժիշտ Հ.Տեր-Դավթյանի աշակերտների կոնցերտը: Մշակ, 27 մայիսի, N 111:

## ՀՈՒՆԻՍ

**1** Համերգ՝ նվիրված Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին, Ալեքսանդրապոլի քաղաքային ժողովարանի ամառային դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Տիգրանյան), երգիչներ Ա.Գալստյանը, Ե.Ադամյանը: Ծրագրում՝ Ա.Տիգրանյան, Մ.Եկմալյան, Ք.Կարա-Մուրզա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Տիգրանյանի ֆ., N 186:

**2-3, 7-8** Գևորգյան ճեմարանի երգեցիկ խումբը Կոմիտասի ղեկավարությամբ մասնակցեց Էջմիածնի եկեղեցում կայացած տոնական պատարագներին:

Արարատ, N 7, էջ 608-609:

**4** Համերգ՝ նվիրված Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին, Ղարսում: Ելույթ ունեցան՝ երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Տիգրանյան), երգիչներ Ա.Գալստյանը, Ե.Ադամյանը:

*Գ.Ձ.*, Թղթակցություն: Տարազ, 8 հունիսի, N 20, էջ 196:

**15** Սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ե.Բաղդասարյան)՝ Վլադիկավկազի ամառային ակումբում:

*Գեղարվեստ*, Տարազ, 29 հունիսի, N 22, էջ 213:

## ՀՈՒԼԻՍ

**4, 11** Համերգ՝ նվիրված Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին, Շուշիում: Ելույթ ունեցավ երգեցիկ խումբը (ղեկ. Պ.Կարա-Մուրզա):

Մշակ, 10 հուլիսի, N 148:

**25** Սիմֆոնիկ համերգ՝ Թիֆլիսի ժողովարանում (ղեկ. Լ.Շտեյներբերգ): Մենակատար - ջութակահար Հ.Տեր-Գրիգորյան:

Тифлисский листок, 25 июля, N 168.

**27** Համերգ՝ Թիֆլիսի Հավլաբարում: Ելույթ ունեցավ հայկական սիրողական երգչախումբը (ղեկ. Ա.Պապյան): Ծրագրում՝ «Շողեր», «Ալագյազ», «Ո՜վ, հայոց աշխարհ», «Կռունկ», «Սիրուհիս, քեզ համար», «Լուսնյակ գիշեր» երգերը:

*Ներքին լուրեր*, Մշակ, 29 հուլիսի, N 161:

**31** Կոմպոզիտոր Գրիգոր Միրզայանի համերգը՝ Շուշիում:

«Գրիգոր Միրզայանի համերգը Շուշիում»: Մշակ, 3 օգոստոսի, N 166:

*Գ.Ձ.*, Միրզայանի համերգը Շուշիում: Տարազ, օգոստոս, N 27, էջ 250:

## ՕԳՈՍՏՈՍ

3 Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ս.Դեմուրյան) Շուշիում: Ելույթ ունեցան՝ Վ.Պարոնյանը (երգ), Ստ.Դեմուրյանը (երգ): Ծրագրում՝ հայկական ժողովրդական երգեր՝ «Ջան գյուլում», «Հաբրբան», «Ելսսո ջան», «Ջան, մարալ ջան», վրացական երգ - «Ծլծեռնակներ», Շուբերտ - սերենադ, Չայկովսկի - ռոմանս:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 40:

- Ժողովրդական երգեր ու խաղեր ձայնագրելու նպատակով Կոմիտասը, Սպիրիդոն Մելիքյանի ու ճեմարանական սաների հետ Էջմիածնից մեկնեց Խաթունարխ, որտեղ մասնակցեց խաղողօրհներքի արարողությանը:

*Ս.Բաղիրյան,* Հուշեր Կոմիտաս վարդապետի մասին: Էջմիածին, N 9, էջ 49:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

2 Վ.Դ.Կորգանովի զեկուցումը «Հայկական երգ և երաժշտություն» թեմայով՝ Բեռլինի միջազգային երաժշտական համաժողովում:

Մշակ, 6 սեպտեմբերի, N 194:

- Կոմիտասի նախաձեռնությամբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիպման երեկո աշուղ Ջիվանու հետ: Բացման խոսք՝ Կոմիտասի: Ջիվանու մասին զեկուցեց Հ.Հովհաննիսյանը:

*Գ.Լևոնյան,* Հուշեր: 1959, էջ 49:

23 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Դևի դերերգը՝ Ա.Ռուբինշտեյնի համանուն օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

*Театр и музыка,* Тифлисский листок, 25 сентября, N 219.

29 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Տոնիոյի դերերգը՝ Լեոնկավալլոյի «Պայացներ» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

*Театр и музыка,* Тифлисский листок, 1 октября, N 223.

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

3 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Էսկամիլիոյի դերերգը՝ Բիզեի «Կարմեն» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

*Театр и музыка,* Тифлисский листок, 5 октября, N 227.

8 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Գրյազնոյի դերերգը՝ Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 273:

16 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Ռիգոլետտոյի դերերգը՝ Վերդիի համանուն օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 273:

25 Երգչուհի Մարգարիտ Բաբայանը և երգիչ Բեգլար Ամիրջանը մասնակցեցին երեկոյին՝ նվիրված Պ.Ի.Չայկովսկու մահվան տասնամյակին:

*Գեղարվեստական քրոնիկոն,* Տարազ, 26 հոկտեմբերի, N 281:

- Կոմիտասը ձայնագրեց Ջիվանու «Ախ, կորավ» և Շիրինի «Այգեպան, ի՞նչ ես անում» երգերը:

*Գ.Լևոնյան,* Հուշեր: 1959, էջ 49:

28 Կազմակերպվեց «Պետերբուրգի Հայ գեղարվեստական ընկերությունը»:

## ՆՈՅԵՄԲԵՐ

8 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Տոմսկու դերերգը՝ Պ.Ի.Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 272:

22 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Տրոեկուրովի դերերգը՝ Է.Նապրավնիկի «Դուբրովսկի» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

*"Тифлисский казенный театр"*, Тифлисский листок, 25 ноября, N 269.

26 Երգչուհի Մարգարիտ Բաբայանի համերգը՝ Թիֆլիսի գերմանական եկեղեցում: Ծրագրում՝ Մենդելսոն - «Հարության առավոտը», Բախ - «Արիա», Գունո - «Ավե Մարիա»: Երգեհոնի նվագամասը՝ Ջ.Պալիե:

*Tigo (Տիգրան Նազարյան)*, Հոգևոր կոնցերտ: Տարազ, 30 նոյեմբերի, N 36:

*Том-ur*, Театр и музыка. Тифлисский листок, 28 ноября, N 272.

26 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Ռենատոյի դերերգը՝ Վերդիի «Պարահանդես-դիմակահանդես» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 205:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

26 Համերգ՝ Շուլավերի Գյուղական վարչության դահլիճում: Ելույթ ունեցան՝ սիրողական երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Մայիլյան), երգիչներ Ա.Հակոբջանյանը, Գ.Միսկինյանը, Ս.Ալավերդյանը, Հ.Լևոնյանը, Բ.Աղամյանը, Ն.Մուրադյանը: Ծրագրում՝ Ք.Կարա-Մուրզա, Դենիսով, Ա.Մայիլյան, Մ.Եկմալյան, Ռուբինշտեյն, Կոզլով, Ս.Դեմուրյան: Դաշնամուրի նվագամասը՝ Ա.Մայիլյան:

Ծրագիր, ԳԱԹ, հրաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1297:

– Կոմիտասի ձայնագրած ու դաշնակած «Լոռեցիների գութանի հորովելը» ստեղծագործության նոտաները հրատարակվեցին «Հ.Այվազովսկու հիշատակին նվիրված Գեղարվեստական ալբոմ» ժողովածուի երաժշտական բաժնում:

«Գեղարվեստական ալբոմ», 1903, Պետերբուրգ, էջ 16:

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


## Ա) Նոտաներ

«Արցունքներ», խմբ. Ե.Բաղդասարյան և Դ.Օքրոյան: Պետերբուրգ:

*Խ.Գալֆայան*, «Նախանձ», երգ առանց նվագակցության:

*Կոմիտաս*, Քրդական եղանակներ: Մեներգեր, առանց նվագակցության, ձայնագրեց Կոմիտաս վարդապետ: Մոսկվա, տպ. Յուրգենսոն, 12 էջ: Բովանդակություն. 1. Ղանդիլի Սիափուշ, 2. Լեյլու Մեջնուն, 3. Ջամբալիէ, 4. Հասամ աղա, 5. Միրզա աղա, 6. Քուլլըզ՝ Գեարօ, 7. Մազմին, 8. Դարվիշի Ավդի, 9. Սեվահաջե, 10. Համըդե, Շանդե, 11. Համե Մուսե, 12 Սայրան:

*Մ.Վարդիկյան*, «Հայաստան, երկիր դրախտավայր» երգի մշակումը ձայնի և դաշնամուրի համար: Ս.Պետերբուրգ:

*К.Туманов*, "Ранги", кавказский танец, для ф-п, Тифлис.

*Ар.Туманян*, "Не плачь", армянский романс. Слова Ал.Цатуряна, для голоса и ф-п. Тифлис.

## Բ) Գրքեր

«Գեղարվեստական ալբոմ Հ.Կ.Այվազովսկու հիշատակին», խմբ. Ե.Բաղդասարյան, Դ.Օքրոյանց: Ս.Պետերբուրգ, «Պուշկինյան արագատիպ» տպարան, 66 էջ:

«Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան: Առաջին հինյակ: Խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան: Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս.Էջմիածնի:

*Մատենախոսություն, Փ.*, «Հազար ու մի խաղ» (ժողովրդական երգարանը, առաջին հինյակ): Տարազ, 16 նոյեմբերի, N 34, էջ 305:

«Կոմիտաս և Մանուկ Աբեղյան. Հազար ու մի խաղ»: Լումա, N 6, էջ 237-238:

*Ա.Վ.Ղ.*, «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան, խմբագրեցին Կոմիտաս և Մանուկ Աբեղյան: Մուրճ, N 11, էջ 200-204:

«Հազար ու մի խաղ»: Նոր-դար, 18 սեպտեմբերի, N 165:

*Գ.Հախվերդյան,* Հայ աշուղներ: Թիֆլիս, 527 էջ: Գրախոսական. «Հայ աշուղներ», լույս դցած աշխատասիրությենով Գևորգյա Ախվերդյան, Հրատարակությամբ, օր. Մանն Ախվերդյանի խմբագրությամբ: Ազգագրական Հանդես:

*Գ.Հախվերդյան,* Գուսանք: Թիֆլիս:

## Գ) Հոդվածներ

*Փիեռ Օպրի,* Հայ եկեղեցվո երաժշտական դրությունը: Անահիտ, Հունվար, N 1, էջ 15-17, Հունիս-Հուլիս, N 6-7, էջ 99-100:

*Արշակ Հարությունյան,* Քրիստափոր Կարա-Մուրզայի Հիշատակին: Թատրոն, N 1, էջ 110-112:

*Tigo (Տիգրան Նազարյան),* (Ինֆորմացիա օպերային ներկայացումների մասին Թիֆլիսում): Տարազ, 19 Հունվարի, N 1, էջ 3:

*Ա.,* Գեղարվեստի աշխարհից: Մուրճ, փետրվար, N 2, էջ 237:

*Tigo (Տիգրան Նազարյան),* Գեղարվեստ (Մ.Եկմալյանի մասին): Տարազ, 16 մարտի, N 9:

«Ե.Բաղդասարյանի տված կոնցերտի մասին Վլադիկավկազում»: Տարազ, N 22, էջ 213:

*Գ.Ախվերդյան,* Հայ աշուղներ: Լումա, մայիս-Հունիս, N 3, էջ 237-238:

«Երաժշտության ազդեցությունը կենդանիների վրա»: Արարատ, ապրիլ, N 4, էջ 381-382:

*Ս.Հեքիմյան,* Երդք պարուց: Ծաղիկ, N 4, էջ 40:

*Ս.Անդեղիա,* Հայ եկեղեցական երաժշտությունը և ձայնագրությունը: Ծաղիկ, N 5, էջ 66-68, N 6, էջ 79-81, N 7, էջ 90-92:

«Մակար Եկմալյան»: Տարազ, 6 ապրիլի, N 12, էջ 139:

«Թղթակցություն (նվիրված Կոմիտասի գործունեությանը)»: Տարազ, ապրիլ, N 14, էջ 152:

*Հ.Տեր-Աստվածատրյան*, Ջան-գյուլումի մասին մի քանի խոսք: Բանասեր, ապրիլ-մայիս, N 4-5, էջ 118-122, էջ 123-159:

«Ս.Էջմիածինը հայ աշուղների երգերում»: Արարատ, N 6, էջ 511-520:

*Շարայարեցի*, Լուսաբանություն խաղից և երգեցողության չարականաց: Բազմավեպ, N 7, էջ 315-319:

*Հ.Երեմ.*, Հայ աշուղներ: Բազմավեպ, օգոստոս, N 8, էջ 362-366, N 10, հոկտեմբեր, էջ 431-436:

*Հ.Տեր-Սահակյան*, Գողթան երգեր: Բազմավեպ, սեպտեմբեր, N 9, էջ 403-409:

«Հայ էջեր: Տաղ Հովհաննեսի: Վասն սիրո: Տաղ մեռելի ասացյալ: Տաղ սիրո»: Անահիտ, սեպտեմբեր, N 9, էջ 153-154:

*Ա.Ալպոյաճյան*, Հայ երաժշտագետները: Ծաղիկ, սեպտեմբեր, N 9:

*Ա.Հարությունյան*, Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին: Թատրոն, գիրք 9, էջ 110-112:

*Գ.Լևոնյան*, Աշուղների մասին, պատմական-քննական հայացք: Ազգագրական հանդես, գիրք 10, էջ 39-93, գիրք 11, էջ 129-196:

*Գ.Աստվածատուրյան*, Սայաթ-Նովայի անհայտ երգերից: Ազգագրական հանդես, գիրք 10, էջ 94-112:

«Օրհներգ» (ժողովրդական): Մասիս, N 10, էջ 152:

*Լ.Կյուրեղյան*, Տահլամյանց, հայ թենորը: Մասիս, N 24, էջ 369-372:

*Ա.*, Գեղարվեստի աշխարհից: Մուրճ, հոկտեմբեր, N 10, էջ 199-209:

*Ալ.*, Գեղարվեստի աշխարհից: Մուրճ, նոյեմբեր, N 11, էջ 205-224, դեկտեմբեր, N 12, էջ 191-201:

Հայ էջեր: Տաղ վասն չար կանանց: Տաղ Հովհաննեսի: Ի վերա անզգամ կանանց: Անահիտ, դեկտեմբեր, N 12, էջ 220-222:

*Մ.Շ.*, Երաժշտությունը դպրոցներու մեջ: Ծաղիկ, N 23, էջ 265:

*Թենոր*, Թատերական (Օպերաների և ռուսական օպերաների

մասին): Ծաղիկ, N 30, էջ 351-353:

*Ե.Բաղդասարյանց,* Երգ և ռոմանս 19-րդ դարում (համառոտ ակնարկ): Գեղարվեստական ալբոմ Հ.Կ.Այվազովսկու հիշատակին, էջ 33-40:

*Ղ.Հովսեփյան,* Հուշիկներ հայկական երգեցողությունից: Գեղարվեստական ալբոմ Հ.Կ.Այվազովսկու հիշատակին, էջ 60-66:

*Ա.Մ.,* Թիֆլիսի օպերան: Նոր-դար, 22 հունվարի, N 13:

*Ա.Մամաջան,* Օպերային ներկայացումներ («Տրավիատան» Թիֆլիսի Արտիստական թատրոնում): Մշակ, 19 մարտի, N 60:

*Սիրող,* Օպերային ներկայացումներ: Մշակ, 22 մարտի, N 63:

*Ա-Դօ [Հ.Տեր-Մարտիրոսյան],* Նամակ Երևանից (նվիրված Կոմիտասի գործունեությանը): Մշակ, 30 ապրիլի, N 90:

*Ալ-ս-ի,* Հեղինակավոր կարծիքի պահանջ-նամակ խմբագրությանը (նվիրված Կոմիտասի գործունեությանը): Նոր-դար, 25 հունիսի, N 110:

«Հեռու ծայրահեղությունից» (Նոր-դար թերթի N 110-ում Կոմիտասի մասին խմբագրությանն ուղղված նամակի առթիվ): Նոր-դար, 28 հունիսի, N 113:

*Մ.Աբեղյան,* Կոմիտաս վարդապետը և յուր գործը (հոդվածաշար): Նոր-դար, 8-10 հուլիսի, N 119-121:

*Գ.Բոյաջյան,* Հայ ժողովրդական երգեր: Մշակ, 6 օգոստոսի, N 168:

«Միջազգային երաժշտական կոնգրես Բեռլինում: Նամակ Գերմանիայից («Կովկասի երաժշտությունը անցյալում և ներկայում» թեմայով զեկուցման համար հրավիրված էր երաժշտագետ Վ.Կորգանովը: Ցանկություն է հայտնվում, որ այդ կոնգրեսին մասնակցի նաև Կոմիտասը)»: Մշակ, 5 սեպտեմբերի, N 193:

В(асилий) Д(авидович) К(органов), Beethovenbriefe heraus und erlДutert von Dr. Al. Kalischer Verlag Schuster Loeffler. Berlin. Русская музыкальная газета, N 12, стр. 363.

В(асилий) Д(авидович) К(органов), Beethoven und sein

Neffe, Drama in drei Aufzügen und einem Vorspriel, von Heinrich Heinemann. Русская музыкальная газета, N 12, стр. 365-366.

В(асилий) Д(авидович) К(органов), Neue Beethoven Dr. Al Kalischer Verlag Schauster Loeffler. Berlin. Русская музыкальная газета, N 12, стр. 364-366.

В.Д.К. (В.Д.Корганов), В германской деревне, Новое обозрение, N 6466.

В.Д.К. (В.Д.Корганов), Берлинские развлечения (Взгляд и нечто). Новое обозрение, N 6367, 6373, 6383, 6401, 6409.

# 1904

## ՀՈՒՆՎԱՐ

10 Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» և «Այ վարդ» ռոմանսը կատարվեցին դիրիժոր Մ.Ի.Չերնյակովսկու բենեֆիսին՝ Բաքվի Հասարակական ժողովարանում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., 2186:

15 Հայ հոգևոր երաժշտության երեկո՝ Էջմիածնում: Ելույթ ունեցավ ճեմարանի երգեցիկ խումբը (ղեկ. Գ.Գևորգյան):

Աֆիշ, ԳԱԹ, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆ., N 1318:

15 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Ամոնասրոյի դերերգը՝ Վերդիի «Աիդա» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 263-285:

20 Բաքվի արևելյան նվագախմբի և երգեցիկ խմբի համերգը՝ Հասարակական ժողովարանի դահլիճում (ղեկ. Ե.Բաղդասարյան): Ելույթ ունեցան՝ երգիչներ Զ.Տիրացյանը, Գ.Բոյաջյանը, թավջութակահար Կասսանը: Ծրագրում՝ Ք.Կարա-Մուրզա - «Իտալուհի», «Ալագյազ», Ե.Բաղդասարյան - «Մի գեղեցիկ պարզ գիշեր էր», «Մի լար, բլբուլ», «Կործանվեցավ չարը խապառ», Պրիգոժև - «Կառապան», Գունո-Բեկկեր - ռոմանս, Իպոլիտով-Իվանով - «Կովկասյան էսքիզներից», Պոպպեր - տարանտելլա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N 77:

20 Վասիլի Ղորղանյանը կարդաց դասախոսություն «Կովկասի երաժշտությունը» թեմայով՝ Միջազգային երաժշտական ընկերության Բեռլինի բաժանմունքի նիստում:

"Zeitschrift der Internationale Musikgesellschaft", Բեռլին, էջ 75-76, 296-297:

29 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Նելյուսկոյի դերերգը՝ Մեյերբերի «Աֆրիկուհին» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 263-285:

## ՓԵՏՐՎԱՐ

2-8 Իտալական օպերային խմբի հյուրախաղերը՝ Երևանի քաղաքային ակումբում: Բեմադրվեցին՝ Վերդիի «Ռիգոլետտո», «Տրավիատա», «Տրուբադուր», «Էռնանի», Մասկանիի «Գյուղական պատիվ», Բիզեի «Կարմեն» օպերաները:

*Գ.-Կ.*, Երևան: Տարազ, N 7, էջ 49:

6 Երգիչ Մ.Գ.Ջանպոլադյանի համերգը՝ Սիմֆերոպոլի հայկական ուսումնարանի դահլիճում: Մասնակցեց ջութակահար Յա.Ա.Մազալիները: Ծրագրում՝ ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայկական երգեր՝ «Արի իմ սոխակ», «Հազար երանի», «Այ վարդ», «Ծիծեռնակ», «Կռունկ»: Դաշնամուրի նվագամասը՝ Վ.Ջիժովսկայա:

*Ներքին լուրեր*, Մշակ, 21 փետրվարի, N 33:

8 Համերգ՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Մասնակցեցին՝ հայկական սիրողական երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Մամաջան), երգչուհի Ի.Սպենդիարյանը և երգիչ Բ.Ամիրջանը: Ծրագրում՝ հայկական ժողովրդական երգեր, Ռիմսկի-Կորսակով, Չայկովսկի, Բիզե, Ռուբինշտեյն:

*Ներքին լուրեր*, Մշակ, 10 փետրվարի, N 23:

21 Պիեռ Օբրիի դասախոսությունը հայ երաժշտության մասին՝ Փարիզում: Ելույթ ունեցան՝ երգիչներ Գ.Բոյաջյանը, Լապանինը, Ռեյնալդը, Սիլլան: Ծրագրում՝ Գ.Բոյաջյան - Հայկական ժողովրդական երգեր (լույս տեսած ժողովածուից):

«Գ-ն Բոյաջյան և Հայ ժողովրդական երգերը»: Անահիտ, N 3, էջ 71:

26 Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործությունները կատարվեցին Պետերբուրգում կայացած սիմֆոնիկ նվագախմբի համերգում (դիր. Ն.Ն.Չերեպնին):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2187:

Երգիչ Բեգլար Ամիրջանի համերգը՝ Վլադիկավկազի ժողովարանի դահլիճում: Մասնակցեց երգչուհի Ն.Արցիբաշևան: Ծրագրում՝ Լեոնկավալլո, Գունո, Մեյերբեր, Չայկովսկի, Մոցարտ, Բորոդին, Ռուբինշտեյն:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 275:

## ՄԱՐՏ

7 Երգիչ Բեգլար Ամիրջանի համերգը՝ Ռոստովում: Մասնակցեց երգչուհի Ն.Արցիբաշևան: Ծրագրում՝ Լեոնկավալլո, Գլինկա, Բիզե, Չայկովսկի, Ռուբինշտեյն, Մոցարտ: Դաշնամուրի նվագամասը՝ Գ.Ռուտին:

“Южный телеграф”, 9 марта, N 531.

18 Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ա.Տիգրանյան)՝ նվիրված Քրիստափոր Կարա-Մուրզայի հիշատակին, Բաքվի հասարակական ժողովարանի դահլիճում: Ծրագրում՝ Ա.Տիգրանյան - երգեր, Ք.Կարա-Մուրզա - երգեր, «Անուշ» օպերայի նախերգանքը:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Տիգրանյանի ֆ., N 187:

19 Փարիզում կայացավ «Հայոց բարեգործական ընկերության» երեկոն: Ելույթ ունեցան՝ երգիչ Գալուստ Բոյաջյանը, թավջութակահար Տիրան Ալեքսանյանը: Ծրագրում՝ Բոկկերինի, Պոպեր, հայկական ժողովրդական երգեր:

«Փարիզի հայոց երեկույթը»: Անահիտ, N 3, էջ 71:

26 Երգիչ Գալուստ Բոյաջյանի համերգը՝ Փարիզում: Ներածական խոսք հայ երաժշտության մասին՝ Պիեռ Օբրիի: Ելույթ ունեցան՝ երգիչներ Լապանինը, Ռեյնալդոը, Գոլտենբերգը, Ե.Դավթյանը: Ծրագրում՝ հայկական ժողովրդական երգեր, ռուս կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Անահիտ, N 3, էջ 71:

## ԱՊՐԻԼ

14 Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի չսքիզները» և «Այ վարդ» ռոմանսը կատարվեցին Բաքվի հասարակական ժողովարանի դահլիճում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Մ.Ի.Չերնյավսկի):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Սպենդիարյանի ֆ., N 2189:

25 Հայկական համերգ՝ Թեհրանի Հասանաբադի դպրոցի թատերասրահում: Ելույթ ունեցավ Թեհրանի հայկական սիրողական երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Զոմարյան): Ծրագրում՝ ժողովրդական երգեր:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 44:

25 Երաժշտական երեկո՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգեցիկ խումբը և նվագախումբը Կոմիտասի ղեկավարությամբ: Ծրագրում՝ «Մեզ նոր արև ծագեցավ», «Ծիրանի ծառ», «Արի, արի», «Քրդի հարսի», «Ճախարակի երգը», «Հայրենյաց սիրով», «Սիրտս նման է»,

«Զինվոր ես», «Ոտից արա», «Հոլ արա», «Քնիր, իմ սիրուն», «Աղոթք», «Կայնել ես», «Առնեմ երթամ», «Գարուն ա», «էս առուն», «ՈՀ, ինչ քաղցր բան», «Հո, օրհնելի Աստված», «Այ աղջիկ», «Հարբրան», «Քելեր-ցոլեր», «Սարի սովոր», «Սխփանա քաջեր»:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆ., N 1319:

## ՄԱՅԻՍ

**1** Երգիչ Գալուստ Բոյաջյանի համերգը՝ Բաթումի թատրոնում:

*Ներքին լուրեր* (տեղեկություններ Գ.Բոյաջյանի մասին): Մշակ, 2 մայիսի, N 90:

**2** Երգիչ Ներսես Շահլամյանի մահը Պետերբուրգում (ծնվ. 1860):

«Ներսես Շահլամյան»: Մշակ, 4 մայիսի, N 91:

«Ներսես Շահլամյան»: Տարազ, N 18, էջ 165, N 19, էջ 186:

«Ներսես Շահլամյան»: Լույս, էջ 566:

«Ներքին տեսություն», Մուրճ, N 5, էջ 193:

**6** Ալեքսանդր Սպենդիարյանի «Ջհերկված չերտիկ» էլեգիան կատարեց երգեցիկ խումբը (ղեկ. Ս.Ն.Մագիտա) Յալթայի տղամարդկանց գիմնազիայի դահլիճում կայացած համերգում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2191:

**9** Դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի աշակերտների համերգը՝ նվիրված Պ.Ի.Չայկովսկու հիշատակին, Թիֆլիսի երկրորդ գիմնազիայի դահլիճում:

*Սիրող*, Տեր-Դավթյանի աշակերտների կոնցերտը: Մշակ, 11 մայիսի, N 96:

**10** Ալեքսանդր Սպենդիարյանի «Մենուետը» կատարվեց

Պետերբուրգի ժողովրդական տանը կայացած սիմֆոնիկ համերգում (դիր. Ա.Ն.Շեֆեր):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2192:

**20** Երգեցիկ խումբը Ալեքսանդր Սպենդիարյանի ղեկավարությամբ ելույթ ունեցավ Յալթայի հասարակական ժողովարանի դահլիճում կայացած համերգում՝ նվիրված Մ.Ի.Գլինկայի ծննդյան 100-ամյակին:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2194:

**23** Հայկական սիրողական քառաձայն երգեցիկ խմբի համերգը՝ Թեհրանի Ֆարման Ֆարմանի զբոսայգում (ղեկ. Ա.Զոմարյան): Ծրագրում՝ հայկական երգեր:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Զոմարյանի ֆ., N 1:

**23** Երգիչ Գալուստ Բոյաջյանի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Մասնակցեց տավղահարուհի Մարգարիտա Տոյմանը: Ծրագրում՝ Դարգոմիժսկի, Ռիմսկի-Կորսակով, Վագներ, Նապրավնիկ, հայկական ժողովրդական երգեր: Դաշնամուրի նվագամասը՝ Ա.Այգենչտադտ:

*Ներքին լուրեր*, Մշակ, 25 մայիսի, N 107:

## ՀՈՒՆԻՍ

**25** Երգիչ Յա.Աբրահամյանի համերգը՝ Ստավրոպոլի ժողովրդական տան դահլիճում: Ծրագրում՝ Ռոսսինի - Ֆիգարոյի դերերգը «Սեվիլյան սափրիչ» օպերայից, Ալ.Սպենդիարյան - «Այ, վարդ», «Գարուն», հայկական ժողովրդական երգեր:

*Ներքին լուրեր*, Մշակ, 27 հունիսի, N 134:

**26** Ալեքսանդր Սպենդիարյանի, Նիկոլայ Չերեպնինի,

Նիկոլայ Ամանիի ստեղծագործական երեկոն՝ Պավլովսկում: Մասնակցեցին՝ Պրահայի Ֆիլհարմոնիկ սիմֆոնիկ նվագախումբը (դիր. Ն.Զերեպնին և Օ.Նեդբալ), երգիչներ՝ Կ.Տ.Սերեբրյակովը, Մ.Ի.Դոլինան: Ծրագրում՝ Ալ.Սպենդիարյան – «Կոնցերտային նախերգանք», «Ղրիմի էսքիզներ», «Ձկնորսն ու փերին» բալլադը, «Արևելյան օրորոցային երգ», «Ես քեզ կհամբուրեի», արիոզո «Սպասում», էլեգիա ձայնի և երգչախմբի համար:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2196:

**29** – հուլիս 5 Անտոն Մայիլյանի համերգները՝ Ղարսի ժողովարանի ամառային դահլիճում: Ելույթ ունեցան՝ Ղարսի հայկական սիրողական խառն երգեցիկ խումբը (բաղկացած 80 հոգուց, ազգային տարազներով, ղեկ. Ա.Մայիլյան), Ն.Մելիք-Ադամալյանը (դաշնամուր), Ա.Հակոբջանյանը, Ս.Մուրադյանը, Վ.Մանվելյանը (երգ): Ծրագրում՝ Ք.Կարա-Մուրզա, Շահազիզյան, Ա.Մայիլյան, Մ.Եկմալյան, Ս.Դեմուրյան: Դաշնամուրի նվագամասը՝ Ն.Մելիք-Ադամալյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1298:

## ՀՈՒԼԻՍ

**1** Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Շուշիում: Ծրագրում՝ հայկական և ռուսական երգեր:

*Ներքին լուրեր*, Մշակ, 7 հուլիսի, N 141:

**8** Ալեքսանդր Սպենդիարյանի «Կոնցերտային նախերգանքը» և «Ղրիմի էսքիզները» (ղեկ. հեղինակ) կատարվեցին Յալթայի քաղաքային զբոսայգում կայացած սիմֆոնիկ նվագախմբի համերգում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2197:

**8** Երգիչ Ա.Սպանդարյանի համերգը՝ Թիֆլիսի

արտիստական ընկերության դահլիճում: Ծրագրում՝ արիաներ Վերդիի «Աիդա», Բիզեի «Կարմեն», Գունոյի «Ֆաուստ», Դոնիցետտիի «Ֆավորիտ» օպերաներից:

*Ներքին լուրեր*, Մշակ, 8 հուլիսի, N 142, 10 հուլիսի, N 144:

**13** Երգիչ Բեգլար Ամիրջանի համերգը՝ Լուգայի քաղաքային թատրոնում: Մասնակցեց երգչուհի Ա.Ս.Սամոյլովան: Ծրագրում՝ Լեոնկավալլո, Սեն-Սանս, Զայկովսկի, Բորոդին, Կոպտյաև: Դաշնամուրի նվագամասը՝ Ն.Ի.Վելյաշևա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 263-285:

**22** Ժողովրդական երգեր ձայնագրելու նպատակով Կոմիտասը մեկնեց Հայաստանի գյուղերը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Ն.Ղորղանյանի ֆոնդ:

**23** Երգչուհի Աստղիկ Աբրահամյանի համերգը՝ Ալեքսանդրապոլի քաղաքային ակումբի ձմեռային դահլիճում: Մասնակցեց դաշնակահարուհի Ս.Երեցփոխյանը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 48:

## ՕԳՈՍՏՈՍ

**1** Երգիչ Արշակ Կոստանյանի և երգչուհի Վիրգինիա Արծրունու համերգը՝ Ալեքսանդրապոլի քաղաքային ակումբի ձմեռային դահլիճում: Ելույթ ունեցավ դաշնակահարուհի Մարիամ Տիգրանյանը: Ծրագրում՝ Սեն-Սանս, Գրիգ, Ն.Տիգրանյան, Ռուբինշտեյն, Մեյերբեր, Գլինկա, Լեոնկավալլո, Դոնիցետտի, Բիզե, հայկական երգեր՝ «Կռունկ», «Պաղ աղբյուրի մոտ», «Թող չերգե բլբուլ», «Այ վարդ», «Մի լար, բլբուլ», «Արի, իմ սոխակ»: Դաշնամուրի նվագամասը՝ Մ.Տիգրանյան, Ա.Արծրունի:

*Ներքին լուրեր*, Մշակ, 4 օգոստոսի, N 165:

*Արմեն Տիգրանյան*, Նամակ Ալեքսանդրապոլից: Մշակ, 6 օգոստոսի, N 167:

**6** Ալեքսանդր Սպենդիարյանի «Թաթարական երգը» առաջին անգամ կատարվեց Յալթայում կայացած գրական-գեղարվեստական երեկոյում: Ելույթ ունեցավ երգչուհի Ե.Ի.Զբրուևան: Դաշնամուրի նվագամասը՝ Ա.Արենսկի:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2199:

**15** Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Տրոեկուրովի դերերգը՝ Նապրավնիկի «Դուբրովսկի» օպերայում, որը բեմադրվեց Պետերբուրգի Նոր ամառային թատրոնում:

"Новый летний театр". Русь, Петербург, 17 августа, N 245.

**15** Վլադիկավկազի հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը՝ քաղաքային ակումբի ամառային դահլիճում: Մասնակցեց երգչուհի Գ.Ս.Աթարովան: Ծրագրում՝ Չայկովսկի, հայկական ժողովրդական երգեր՝ «Հարբրան», «Վայ-լե-լե», «Գյուլում ջան», «Եխսո ջան»:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 50:

**26** Ալեքսանդր Սպենդիարյանի «Բարկարոլան» թավջութակի համար, առաջին անգամ կատարվեց Յալթայի քաղաքային այգում կայացած սիմֆոնիկ համերգում (դիր. Ա.Ֆրիդման):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2200:

- Ջութակահար Դավիթ Դավթյանը մասնակցեց Բրյուսելում կայացած ջութակահարների միջազգային մրցանակաբաշխությանը, որտեղ արժանացավ առաջին մրցանակի: Ծրագրում՝ Տարտինի, Կորելլի, Բեթհովեն, Պագանինի, Վենյավսկի:

«Ջութակահար Դավիթ Դավթյանի՝ Բրյուսելի կոնսերվատորիայում մրցանակ ստանալու մասին»: Անահիտ, N 8, էջ 136:

«Դավիթ Դավթյան» (Նամակ Բելգիայից): Մշակ, 22 մայիսի, N 104:

*Ր.Գասպարյան*, Երիտասարդ արտիստ ջութակահար Դ.Դավթյան (նաև Բելգիայից մրցանակ ստանալու մասին): Մշակ, 1 օգոստոսի, N 162:

«Ջութակահար Դավիթ Դավթյանի մրցանակ ստանալու մասին»: Տարազ, N 27, էջ 251:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

**18** Երգիչ Գ.Բոյաջյանի համերգը՝ Քութայիսում: Ծրագրում՝ Նապրավնիկ - Վլադիմիրի դերերգը՝ «Դուբրովսկի» օպերայից, Չայկովսկի - Գերմանի արիոզո՝ «Պիկովայա դամա» օպերայից, հայկական երգեր - «Հազար երանի», «Մշու ողբը»:

*Ներքին լուրեր*, Մշակ, 24 սեպտեմբերի, N 207:

**21** Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Էսկամիլյոյի դերերգը՝ Բիզեի «Կարմեն» օպերայում, որը բեմադրվեց Պետերբուրգի ռուսական վաճառականների ընկերությունում:

Петербургский листок, 23 сентября, N 263.

"Опера в купеческом собрании", Биржевые ведомости, 22 сентября, N 284.

"Оперные спектакли". Новое время, 23 сентября, N 10260.

**24** Կոմիտասի ուսուցչական գործունեության մեծարումը և նրա ղեկավարությամբ քառաձայն երգեցիկ խմբի ելույթը՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի 30-ամյա տարեդարձին նվիրված հանդիսավոր պատարագին:

Արարատ, N 10, էջ 841-843:

**25** Ալեքսանդր Սպենդիարյանի «Արևելյան օրորոցային երգը» կատարվեց երգչուհի Մ.Ի.Դոլինայի համերգում՝ Վիտեբսկի հասարակական ժողովարանի դահլիճում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2203:

28 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Դեի դերերգը՝ Ռուբինշտեյնի Համանուն օպերայում, որը բեմադրվեց Պետերբուրգի ռուսական վաճառականների ընկերությունում:

"Русское купеческое общество". Петербургский листок, 30 сентября, N 270.

30 Ալեքսանդր Սպենդիարյանի «Կանցոնետան» և «Զարդաշը» ջութակի Համար կատարվեցին Յալթայի քաղաքային այգում կայացած սիմֆոնիկ Համերգում (դիր. Ա.Ֆրիդման): Մասնակցեց ջութակաՀար Գուբայը:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2201:

- Կոմիտասը գերմաներենից Հայերեն թարգմանեց Ֆրից Արլբերգի «Ձայնամարզություն» խորագրով ձեռնարկը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆ., N 747:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

8 Հիմնվեց «Փարիզի Հայ աշխատավորաց միությունը»: Կայացավ երեկո: Արշակ Չոպանյանը դասախոսեց Մկրտիչ Պեշիկթաշլյանի գրական գործունեության մասին: Ելույթ ունեցան՝ երգիչ Արմենակ ՇաՀմուրադյանը և Մամբրե Մատենճյանը, որը կարդաց Մ.Պեշիկթաշլյանի բանաստեղծությունները:

«Հայկական երեկույթ մը ի Փարիզ»: ԱնաՀիտ, N 9-10, էջ 157:

24 Կոնստանտին Ալիխանյանի նախաձեռնությամբ Թիֆլիսում բացվեց Կայսերական երաժշտական ուսումնարանի Համերգային դաՀլիճը:

«Կայսերական երաժշտական ուսումնարանի կոնցերտի դաՀլիճի բացումը Թիֆլիսում»: Տարազ, 31 Հոկտեմբերի, N 26, էջ 240:

26 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Մեֆիստոֆելի

դերերը՝ Գունոյի «Ֆաուստ» օպերայում, որը ներկայացվեց Պետերբուրգի ռուսական վաճառականների ընկերությունում:

“Русское купеческое общество”. Биржевые ведомости, 28 октября.

## ՆՈՅԵՄԲԵՐ

8 Ալեքսանդրապոլում վախճանվեց աշուղ Համբոն (Համբարձում Ադամյան):

*Գ.Նալբանդյան,* Աշուղ Համբո (Համբարձում Ադամյան): Մշակ, 11 դեկտեմբերի, N 270:

13 Եկատերինոդարի հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ե.Բաղդասարյան)՝ հասարակական ժողովարանի դահլիճում: Մասնակցում էին՝ երգչուհի Լ.Մարտենը, երգիչ Մ.Ջանպապյանը, ջութակահար Մ.Կիրլեյանը: Ծրագրում՝ Մ.Եկմալյան, Ե.Բաղդասարյան, Յա.Նազարով, Սեն-Սանս, Տարտինի, Գլինկա, Վ.Բենևսկի, Ք.Կարա-Մուրզա, Սարասատե:

*Ներքին լուրեր,* Մշակ, 26 նոյեմբերի, N 260:

24 Թիֆլիսի հայկական սիրողական խառն երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Պ.Կարա-Մուրզա)՝ արտիստական ընկերության դահլիճում:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 51:

25 Համերգ՝ Պերմի քաղաքային դումայի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգիչ Բ.Ամիրջանը և ջութակահար Հ.Նալբանդյանը: Ծրագրում՝ Լեոնկավալլո, Գունո, Ջայկովսկի: Դաշնամուրի նվագամասը՝ Է.Կաբելա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 208:

30 - դեկտեբեր 20 Երգչուհի Նադեժդա Պապայանի հյուրախաղերը՝ Թիֆլիսի արքունական թատրոնում:

Խաղացանկ՝ Վերդի. «Տրավիատա» (Վիոլետա), «Ռիգոլետտո» (Ջիլդա), Չայկովսկի. «Պիկովայա դամա» (Լիզա), «Եվգենի Օնեգին» (Տատյանա), Գունո. «Ֆաուստ» (Մարգարիտա), Ռուբինշտեյն. «Դև» (Թամարա), Ռիմսկի-Կորսակով. «Թագավորի հարսնացուն» (Մարֆա):

«Օպերային ներկայացում»: Մշակ, 2 դեկտեմբերի, N 265:

*«Թատրոն և երաժշտություն»*, Մշակ, 7 դեկտեմբերի, N 269:

*Սիրող*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 9 դեկտեմբերի, N 271:

*Ս-ղ*, Պապայանը «Դեմոնի» մեջ: Մշակ, 14 դեկտեմբերի, N 275:

*Սիրող*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 18 դեկտեմբերի, N 279:

*Սիրող*, Երգչուհի Պապայանի վերջին ներկայացումը: Մշակ, 22 դեկտեմբերի, N 282:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

**4** Երեկո՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դահլիճում: Ելույթ ունեցավ երգեցիկ խումբը և նվագախումբը՝ Կոմիտասի ղեկավարությամբ: Կատարվեցին՝ «Հայր մեր», «Հայրապետնկ Այգվույն», «Այսօր կանգնեցավ» շարականները:

*Մ.Բ.*, Պետք է քաջալերել, թե ոչ: Տարազ, N 32, էջ 294-295:

**5** Հայկական երեկո՝ Մոսկվայի ռուսաց ազնվականների ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգիչ Արշակ Կոստանյանը (կատարեց «Կռունկ», «Պաղ աղբյուրի մոտ» երգերը), երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանը (Չայկովսկի - ռոմանս, Ն.Ղորղանյան - «Երազ»), երգիչ Մ.Միքայելյանը («Երազ», «Օհ մահկանացու» երգերը), պարուհի Ա.Մարգարյանը (պարեց «Շալախո»), պարուհիներ Ս.Սաֆարովան և Գ.Բեհրամյանը՝ (Լեզգինկա), երգիչ Մ.Ցիտոնը (կատարեց Ալեկոյի կավատինան՝ Ռախմանինովի համանուն օպերայից), Վ.Ցվետկովան (Ռուբինշտեյնի - «Փայլում է ցողը» ռոմանսը): Դաշնամուրի նվագամասը՝ Տ.Կիտրիխ:

*Գ.Բաղդասարյան*, Մոսկվայի հայկական երեկույթը: Տարազ, 19 դեկտեմբերի, N 33, էջ 314-315:

**5** Երգիչ Ս.Բարխուդարյանի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Մասնակցում էին՝ Ս.Երեցփոխյանը (երգ), Ն.Տիգրանյանը (դաշնամուր), Ա.Մամաջանը (երգ): Դաշնամուրի նվագամասը՝ Նիկողայոս Տիգրանյան: Ծրագրում՝ Լեոնկավալլո, Գլինկա, Չայկովսկի, հայկական երգեր:

*Ներքին լուրեր*, Մշակ, 5 դեկտեմբերի, N 268:

**7** Հայկական երեկո՝ Մոսկվայում: Ելույթ ունեցան՝ հայկական սիրողական երգեցիկ խումբը (ղեկ. Թամբիյան), երգիչ Արշակ Կոստանյանը, երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանը, երգիչ Մ.Միքայելյանը:

*Գ.Բաղդասարյան*, Մոսկվայի հայկական երեկույթը: Տարազ, 19 դեկտեմբերի, N 33, էջ 314-315:

**9** Երեկո՝ նվիրված երգչուհի Հեղինե Տերյան-Ղորղանյանի բեմական գործունեության 20-ամյակին, Մոսկվայի Սոլոդովնիկովի թատրոնում: Ծրագրում՝ հատվածներ Վ.Երդիի «Տրավիատա» և Բիզեի «Կարմեն» օպերաներից:

*Մ.Շովրեյան*, Դերասանուհի Հ.Տերյան-Ղորղանյան (Նամակ Մոսկվայից): Մշակ, 11 դեկտեմբերի, N 273:

*Ս-ղ*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 14 դեկտեմբերի, N 275:

**14** Երգչուհի Նադեժդա Պապայանը կատարեց Մաշայի դերերգը՝ Նապրավնիկի «Դուբրովսկի» օպերայում, որը բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

*Սիրող*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 16 դեկտեմբերի, N 277:

**19** Համերգ՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Մասնակցում էին՝ երգիչներ Ս.Ղորղանյանը, Ս.Երեցփոխյանը, Ս.Բարխուդարյանը, կոմպոզիտոր-դաշնակահար Նիկողայոս Տիգրանյանը, ջութակահար Մ.Վախևը:

*Սիրող*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 21 դեկտեմբերի, N 281:

26 Թիֆլիսի Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Պ.Կարա-Մուրզա)՝ ժողովարանի դահլիճում: Ծրագրում՝ Քարա-Մուրզայի մշակած երգերը:

*Խ.Բաբայան*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 24 դեկտեմբերի, N 284:

*Սիրող*, Կարա-Մուրզայի համերգը: Մշակ, 28 դեկտեմբերի, N 287:

27 Երգեցիկ խմբի համերգը՝ Վլադիկավկազում (ղեկ. Ս.Դեմուրյան):

*Եվգինե Բաղդասարյան*, Երեկույթ Վլադիկավկազում: Մշակ, 1905, 3 հունվարի, N 3:

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Ա) Նոտաներ

*Ե.Բաղդասարյան,* «Մի լար, բլբուլ», երգ ձայնի համար: Խոսք՝ Ալ.Ծատուրյանի: Հրատ. «Փնջիկ», Թիֆլիս:

*Ա.Բրուտյան,* «Ռամկական մրմունջներ», աշուղական, ժողովրդական խառն երգեր և պարերգեր: Ալեքսանդրապոլ:

*Գ.Բոյաջյան,* Chants Populaires arméniens (Հայկական ժողովրդական երգերի ժողովածու): Paris, Librairie E.Dements. գրախոսական. «Հայ ժողովրդական երգերու նոր հավաքածու մը», Անահիտ, N 1, էջ 20-21:

*Վ.Գրինդամիան,* Al' Armenie. ձայնի համար, առանց նվագակցության:

*Բ.Կարա-Մուրզա,* Հայկական ժողովրդական երգերի մշակումներ: Ներդաշնակությունը դաշնամուրի համար՝ Լ.Կնինայի: Թիֆլիս:

Մատենաշար՝ Ազատ ձայնագրված հայկական երգարան: Կ.Պոլիս:

*Ն.Նիկոլաև,* «Ծիծեռնակ», հայկական ռոմանս: Մոսկվա:

*Յա.Պարոնրենկյան,* «Հազար երանի», ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ: Խոսք՝ Ռ.Պատկանյանի: Թիֆլիս:

*Գ.Սյունի (Միրզայան),* «Ախ ալ վարդի», երգ: Խոսք՝ Ավ.Իսահակյանի: Պետերբուրգ:

*Գ.Սյունի (Միրզայան),* Հայ ժողովրդական երգեր, Ա. պրակ՝ 1. «Սարերի հովին մեռնիմ», խառը խմբի և դաշնամուրի համար: 2. «Հաբրբան»: 3. «Սարեն կուգա ձիավոր»: 4. «Օհ նազանմ», դաշնամուրի համար: Ս.Պետերբուրգ:

*Ի.Տրուֆֆի,* «Պաղ աղբրի մոտ» և «Լորիկ», ժողովրդական երգեր: Հրատ. Ա.Կոստանյանի: Ս.Պետերբուրգ:

## Բ) Գրքեր

«Սկսվածք և ցանկ ձայնադրյալ և շարականաց»: Վաղարշապատ, տպ. Մայր աթոռ Ս.Էջմիածնի:

*Կոմիտաս*, «Քրդական եղանակներ» գրքույկը լույս տեսավ «Էմինյան ազգագրական ժողովածուի» *Ե* հատորին կից, իբրև հավելված (12 էջ, նոտաներ, զուգահեռ տեքստ հայերեն, քրդերեն, լատինատառ): Բովանդակություն. 1. «Ղանդիլի Սիափուշ»: 2. «Լեյլա Մեջնում»: 3. «Ջամբալիե»: 4. «Հասամ աղա»: 5. «Միրզա աղա»: 6. «Քուլլըդ Գեարո»: 8. «Մամգին»: 9. «Դարվիշի Ավդի»: 10. «Սեվահաջե»: 11. «Համըդե Ճանդե»: 12. «Համե Մուսե»: 13. «Սայրան»: Էմինյան ազգագրական ժողովածու: Մոսկվա, հատոր Ե, էջ 304:

*Գ.Գասպարյան*, Գալուստի և Շուշանիկի հարսանիքը: Ալեքսանդրապոլ, 64 էջ:

*Հ.Կարապետյան*, Քրիստափոր Կարա-Մուրզա (կյանքն ու գործունեությունը): Հրատ. Գ.Մելիք-Կարագյոզյանի, Թիֆլիս, 100 էջ:

«Հազար ու մի խաղ»: Ժողովրդական երգարան, առաջին հինյակ: Խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան: Վաղարշապատ, տպ. Մայր աթոռ Ս.Էջմիածնի, 72 էջ, Երկրորդ հրատարակություն:

*Ա.Զոպանյան*, Մ.Պեշիկթաշլյանի քերթվածքներն ու ճառերը (ծանոթագրություններում՝ Մ.Պեշիկթաշլյանի երգերի մասին): Փարիզ:

«Սոխակ Հայաստանի», երգարան, առաջին հատոր: Բաքու:

*Հ.Տեր-Աստվածատրյան*, Բառարան հայ կենսագրության: Թիֆլիս:

*Հ.Փալագաշյան*, Պզտիկներուն երգարանը: Հավաքածո մանկապարտեզի երգերու: Կ.Պոլիս:

## Գ) Հոդվածներ

*Տիգրան*, Գեղարվեստի աշխարհից: Մուրճ, հունվար, N 1, էջ 192-212:

*Գ.Լևոնյան,* Հայ աշուղական երգերը և եղանակները: Ազգագրական Հանդես, N 1:

*Կրեսչենտո,* Մի փոքրիկ ակնարկ մեր երաժշտության մասին: Մուրճ, N 1:

*Տիրացյան Հ.Ներսես,* Հարություն Սինանյան երաժիշտ և իր խումբը: Գեղունի, N 1-10, էջ 22:

*Լ.Մ.,* Գեղարվեստի աշխարհից: Մուրճ, փետրվար, N 2, էջ 201-204:

*Հ.Երեմ.,* Հայ աշուղներ: Բազմավեպ, փետրվար, N 2, էջ 81-84:

*Տիրացյան Հ.Ներսես,* Հարություն Սինանյան (կենսագրական): Բազմավեպ, փետրվար, N 2, էջ 72-77:

*Մ.Աբեղյան,* Ժողովրդական խաղեր: Արարատ, փետրվար, N 2, էջ 172-192, N 3, էջ 259-272, N 4, էջ 354-356, N 5, էջ 467-474, N 6, էջ 556-563, N 7-8, էջ 642-648, N 9, էջ 772-784, N 10, էջ 884-898, N 11, էջ 975-988, N 12, էջ 1078-1096:

«Կաթողիկե Ս.Էջմիածնի տոնին Կոմիտասի քառաձայն խմբի համերգի մասին»: Արարատ, հուլիս-օգոստոս, N 7-8, էջ 611-612:

**22, 24** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը Լուցկում: Մասնակցեց դաշնակահարուհի Մ.Ե.Մոշկովսկայան: Ծրագրում՝ Պագանինի - կոնցերտ, Շոպեն-Սարասատե - նոկտյուրն, Վենյավսկի - պոլոնեզ, Պոգոժև - նոկտյուրն (նվիրված Հ.Նալբանդյանին), Աուլին - Գավոտ:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 241:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

**10** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգի ազնվականների ժողովարանում կայացած համերգին: Ծրագրում՝ Շոպեն-Սարասատե - Նոկտյուրն, Սարասատե - «Իսպանական պար»:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 243:

**16** Գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված Մակար Եկմալյանի և Պերճ Պռոշյանի հիշատակին, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դահլիճում: Ելույթ ունեցավ երգեցիկ խումբը Կոմիտասի ղեկավարությամբ: Կոմիտասը կատարեց «Սիրտս նման է» («Անտունի») երգը:

Արարատ, դեկտեմբեր, N 12, էջ 1033:

23 Համերգ՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգիչներ Ս.Մելիք-Բարախանյանը և Վ.Սուխանյանը: Ծրագրում՝ Վերդի:

*Ե.*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 29 դեկտեմբերի, N 195:”

27 Երեկո՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Ելույթ ունեցան՝ Ներսիսյան դպրոցի երգեցիկ խումբը (ղեկ. Գր.Միրզայան), երգչուհի Սալիցկայան, Հ.Տերյան-Ղորղանյանը, Տ.Բիլշտեյնը:

*Ե.*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 29 դեկտեմբերի, N 195:

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Ա) Նոտաներ

«Արցունքներ», գրական-գեղարվեստական-երաժշտական ալբոմ: Խմբագիր՝ Ն.Բաղդասարյան: Ս.Պետերբուրգ:

*Ս.Դեմուրյան*, «Քնար», Ձայնագրյալ երգարան եվրոպական նոտաներով, բաղկացած է 106, մեծ մասամբ ժողովրդական երգերից, 94 էջ: Ս.Պետերբուրգ:

«Ծաղկեփունջ», երգարան: Թիֆլիս:

*Կոմիտաս* «Հայ Քնար», գեղջուկ երգերի ժողովածու հայերեն և ֆրանսերեն տեքստերով: Փարիզ, 45 էջ: Բովանդակություն. «Հով արեք», «Հաբրբան», «Երկինքն ամպել ա», «Անտունի», «Իմ չինարի յարը», «Գարուն ա» (մեներգ), «Գարուն ա» (խմբերգ), «Գութաներգ», «Անձրևն եկավ», «Սարերի վրով գնաց», «Երի, երի, երի ջան», «Լուսնակն անուշ», «Շողեր ջան»: Ժողովածուին կցված է Կոմիտասի գրած առաջաբանը: Անահիտ, N 15, էջ 84, Արարատ, N 10, էջ 908:

*Ալ.Սպենդիարյան*, «Երեք արմավենի», սիմֆոնիկ պատկեր նվագախմբի համար, ըստ Մ.Յու.Լերմոնտովի բանաստեղծության: Պարտիտուր, Լայպցիգ:

*Ն.Տիգրանյան*, «Նովրուզ Արաբի», դաշնամուրի համար: Հրատ. Շմիդտի, Ս.Պետերբուրգ:

«Քնարիկ», ժողովրդական ձայնագրյալ երգեր: Տետրակ Ա., հայկական նոտագրությամբ: Հրատարակություն Իսրայել Սարկավագի, Վաղարշապատ, էլեկտրաշարժ տպարան Սրբոյ Էջմիածնի, 33 էջ:

## Բ) Գրքեր

*Շահան-Սիմոն*, Ձեռնարկ եվրոպական ձայնագրության (գծային սիստեմ), հարմարեցրած ուսումնարանների համար: Թիֆլիս, 52 էջ:

Գ) Հոդվածներ

*Ա.Բահաթյան*, Ցուցահանդես «Երաժշտական աշխարհ» (Ե.Բաղդասարյանի «Արևելյան օրկեստր» յուսանկարի մասին): Մշակ, 5 հունվարի, N 3:

«Եվրոպական երաժշտություն»: Ծաղիկ, N 1, էջ 15-16:

*Զ(ոպանյան) Ա(րշակ)*, Բանախոսություն հայ երաժշտության և բանաստեղծության մասին: Անահիտ, N 1-2, էջ 24-31:

*Հ.Մինանյան*, Հիշողություններ Տիգրան Չուխաճյանի մասին: Մանզումէի էֆքյար, 20 հունվարի - 2 փետրվարի, N 1714:

*Մ.Հարությունյան*, Հայկական համերգ Փարիզում (1906թ. դեկտեմբերի 1-ին Փարիզում տեղի ունեցած համերգի մասին Կոմիտասի ղեկավարությամբ և մասնակցությամբ): Արարատ, փետրվար, N 2, էջ 142-147:

«Հայ երաժշտության նվագահանդես» (1906թ. դեկտեմբերի 1-ին Կոմիտասի տված համերգի մասին): Անահիտ, N 1-2, էջ 23:

*Կոմիտաս*, Հայ գեղջուկ երաժշտություն. ժողովրդական երգերի ծավալումը և ազդեցությունը: Անահիտ, N 3-5, էջ 70-73, N 6-9, էջ 127-130:

«Հովհաննես Ա.Նալբանդյան»: Հուշարար, N 1, էջ 39:

*Ականատես*, Եկեղեցական երգեցողությունը Ս.Էջմիածնում (եկեղեցական խմբի խառն ու ճաղանճ վիճակը Կոմիտասից հետո): Հովիվ, N 2, էջ 30:

*Հաջի-Այվազ*, Թատրոն և գեղարվեստ: Խաթաբալա, N 3, էջ 31:

*Սիրող*, «Արեգնազան», օպերա-հեքիաթ Գր.Միրզայանի: Մշակ, 1 մարտի, N 34:

«Տաղ եկեղեցվո և տաճարին սուրբ» (վերագրված է Գ.Նարեկացուն): Անահիտ, մարտ-ապրիլ-մայիս, N 3-4-5, էջ 77:

«Փարիզի հայկական միության ընդհանուր ժողովը»: Անահիտ, N 3-4-5, էջ 84-87:

*Ղ.Հովսեփյան*, Հովհ.Նալբանդյանի նվագահանդեսը: Հուշարար, 11 ապրիլի, N 4, էջ 61:

*Ա.Մանուկյան,* Հոգևոր համերգ: Մշակ, 5 ապրիլի, N 73:

«Կոմիտաս վարդապետի նվագահանդեսը Պարիզում»: Հուշարար, 11 ապրիլի, N 4, էջ 59:

*Ար-Թոն,* Հայկական օպերային ներկայացումները Թիֆլիսում: Մշակ, 11 ապրիլի, N 76:

*Ա.Մնացականյան,* «Գյուլնազ տատի հեքիաթը», մանկական օպերա (երաժշտական պատկեր): Երաժշտ. Ա.Մայիլյանի: Հուշարար, 7 մայիսի, էջ 74-76:

*Հ.Նահապետյան,* Հայտնի ջութակահար Հ.Նալբանդյան: Բազմավեպ, հունիս, N 6, էջ 276-278:

*Հայ էջեր,* Տաղ ս.Աստվածածնի: - Երգ սիրո: - Տաղաշարք վերագրելի Նահապետ Քուչակի: - Տաղ սիրո: Անահիտ, հունիս - հուլիս - օգոստոս - սեպտեմբեր, N 6-7-8-9, էջ 130-135:

*Հ.Կ.Տ.Սահակյան,* Հայկական երաժշտությունն ի Վենետիկ. - Նվագահանդես և բանախոսություն Ս.Ղազարու և Մուրատ - Ռափայելյան վարժարանի մեջ. - Ուղևորությունն մը՝ դեպի Հայաստանի լեռները. - Հայկական հարսանիքը, պանդուխտի երգեր. - Կրոնական: Բազմավեպ, հուլիս-օգոստոս, N 7-8, էջ 369-373:

*Ե.Ս.,* Հայկական գեղարվեստը եվրոպական մամուլին մեջ (երաժշտությունն ու բանաստեղծությունը): Բազմավեպ, հուլիս-օգոստոս, N 7-8, էջ 376-382, սեպտեմբեր-հոկտեմբեր, N 9-10, էջ 408-414:

*Մ.Բերբերյան,* Թատրոնի և գեղարվեստի շուրջը: Ջարկ, N 7, էջ 101-102, N 8, էջ 126-127, N 9, էջ 153-154:

«Սինանյանից ստացված Carille Nouveante մասին»: Մասիս, N 9, էջ 179:

*Հարութ Մեհրաբ,* «Ֆաուստ» օպերան: Նոր կյանք, N 9, էջ 117-118:

*Գարեգին վրդ. Հովսեփյան,* Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդությունը Եվրոպայում: Արարատ, N 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 906-909:

*Օ.Սարյան,* Տիգրան Չուխաճյան: Բյուզանդիոն, 16

նոյեմբերի, N 3387, 19 նոյեմբերի, N 3389:

«Սինանյանի հեղինակությունների մասին»: Մասիս, N 11, էջ 220:

*Լեքթիլո Բուռ Դուս*, Բարիզի օբերա թատրոնը: Մանզումէի էֆքյար, 3 դեկտեմբերի, N 1985:

*Հայկ. Արշար*, Վերդի և Վագներ: Իտալական և գերմանական դպրոցները: Բազմավեպ, դեկտեմբեր, N 12, էջ 548-554:

*Էմ. քահ. Նազարյանց*, Ի՞նչ է արվեստը: Հուշարար, N 12, էջ 183-187:

«Քաղվածքներ Հայոց Ազգագրական ընկերության արձանագրություններից»: Ազգագրական հանդես, գիրք 15, էջ 214-217, գիրք 16, էջ 209-216, գիրք 17, էջ 160-168:

*В.Д.К(В.Д.Корганов)*, Мимо театра. Закавказье, N 49.

*Е.Багдасарян*, Несколько слов об армянской музыке. Русская музыкальная газета, N 19-20, стр. 521.

*В.Д.Корганов*, Еще о кавказской музыке [О гармонизации Комитасом армянских народных песен]: Тифлисский листок, N 242, стр. 3.

"Об армянской оперной труппе". Новости сезона, N 1426, стр. 2.

*Komitas*, La musiqal rustique arménienne. Mercure Musical, N 5.

# 1908

## ՀՈՒՆՎԱՐ

**3** Կոմիտասը և երգիչ Վահան Տեր-Առաքելյանը Վաղարշապատից մեկնեցին Իգդիր՝ համերգներ տալու և հայկական երաժշտության մասին դասախոսություններ կարդալու նպատակով:

Արարատ, հունվար, N 1, էջ 98:

**4** Կոմիտասի դասախոսությունը հայկական ժողովրդական ու եկեղեցական երաժշտության մասին՝ Իգդիրի դպրոցի դահլիճում: Մասնակցեց երգիչ Վահան Տեր-Առաքելյանը:

*Թատրոն և երաժշտություն*, Մշակ, 16 հունվարի, N 11:

Արարատ, N 1, էջ 98:

**Հունվար 16, 30**
**փետրվար 13**
**մարտ 5**

Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Նյու-Յորքում կայացած ռուսական երաժշտության սիմֆոնիկ համերգներում:

Տրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 260ա.

**17** Ջութակահար Կոնստանտին Սարաջյանի համերգը՝ Ս.Ի.Տանեևի և Մ.Ե.Բուկինիկի մասնակցությամբ, Մոսկվայի ազնվականների ժողովարանի դահլիճում:

Տրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Կ.Սարաջյանի ֆ., N 617:

**30** Երաժշտական-դրամատիկական երեկո՝ Բաքվի ժողովարանի դահլիճում, հօգուտ հայկական դպրոցների: Ելույթ

ունեցավ հայկական աշակերտական երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Մայիլյան): Ծրագրում՝ Ա.Մայիլյան - «Շեն մնա միշտ», «Սարի տակը», «Արև», Կոմիտաս - «Կայնել ես»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1313:

## ՓԵՏՐՎԱՐ

**1** Դաշնակահարուհիներ Հեղինե և Եվգինե Ադամյանների համերգը՝ Լայպցիգում: Ծրագրում՝ Բախ, Բերգեր, Լիստ, Արենսկի:

Արարատ, N 2, էջ 234:

**3** Հայ ուսանողների նախաձեռնությամբ Բեռլինում կազմակերպվեց հայկական երեկույթ: Ներածական խոսք՝ Լեման Հաուպտի: Ելույթ ունեցան՝ երգչուհի Էմերլինգը, որը հայկական ազգային տարազով զգեստավորված կատարեց Կոմիտասի մշակած երգերը, քառաձայն երգեցիկ խումբը (ղեկ. Մանաջունյան) կատարեց Կոմիտասի և Ք.Կարա-Մուրզայի խմբերգերը:

Тифлисский листок, 5 февраля, N 30.

**3** Համերգ՝ Մոսկվայի արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտում: Ելույթ ունեցան՝ ջութակահար Կոնստանտին Սարաջյանը և երգիչ Ա.Դ.Կարապետյանցը: Ծրագրում՝ Չայկովսկի: Դաշնամուրի նվագամասը՝ Պ.Ն.Ռենչիցկի:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Կ.Սարաջյանի ֆ., N 392:

**7** Համերգ՝ Պետերբուրգի հայ չքավոր ուսանողների օգտին, ազնվականների ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ ջութակահար Հովհաննես Նալբանդյանը, երգիչ Բեգլար Ամիրջանը, քամանչահար Շահնազարովը, երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Պապյան): Ծրագրում՝ Ռուբինշտեյն - Դևի դերերգը համանուն օպերայից, Բլեյման - «Մելանհոլիկ սերենադ»,

Սարասատե - «Խաբանևրա», Գունո, Զայկովսկի:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 217:

8 Փարիզի Հայկական միության համերգը՝ Սալ Հոշի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգչուհի Հ.Ավալյանը և երգիչ Ա.Տաճմուրադյանը: Ծրագրում՝ Կոմիտաս:

*Ա.Չ(ոպանյան)*, Հայկական երեկույթներ Փարիզի մեջ: Անահիտ, N 1-4, էջ 37:

14 Երեկո՝ Թիֆլիսի Ջգրաշենի Հայկական դպրոցի օգտին, արտիստական ընկերության դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգչուհիներ Մ.Սպենդիարյանը, Վիլլեմսը, ջութակահար Դ.Դավթյանը, թավջութակահար Ա.Վերբովը և երգիչ Է.Դանովսկին: Ծրագրում՝ Մեյերբեր, Սարասատե, Պոպեր, Կոմիտաս:

*Artemius*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 17 փետրվարի, N 38:
*Խ.Բաբայան*, Թատրոն և երաժշտություն: 19 փետրվարի, N 39:

20 80 հոգուց բաղկացած երգեցիկ խմբի համերգը՝ Կոմիտասի ղեկավարությամբ, Վաղարշապատում: Մասնակցում էին՝ երգիչ Վահան Տեր-Առաքելյանը, դաշնակահար Խոսրով Փախչանյանը: Ծրագրում՝ Կոմիտաս - «Ձիգ տու, քաշի, այ եզը», «Ալագյազ բարձր սարին», «Սարերի վրով գնաց», «Էս գիշեր լուսը տեսա», «Հով արեք, սարեր ջան», «Էս առուն ջուր է գալիս», «Անձրեն եկավ շաղալեն», «Կռունկ, ուստի կուգաս», «Ծիրանի ծառ, բար մի տա», «Մանուշակի», «Երանգի», «Ջինար ես, կեռանալ մի», «Լուսինը սարի տակին», «Արագը հեշտացել ա», «Սիրտս նման է էն փլած տներ», «Արոր և տատրակ», «Լուսնակն անուշ, հովն անուշ», «Կուժն առա եկա սարը», «Ունաբի», «Տուչիկի», «Հաբրբան», «Կայնել ես, կանչում էլ չես», «Խումար պառկե», «Լո, լո, լո»:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆ., N 1465:

21 Երեկո՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում, ժողովրդական համալսարանի օգտին: Ելույթ ունեցավ ջութակահար Դավիթ Դավթյանը: Ծրագրում՝ Սարասատե, Կոմիտաս - «Կռունկ»: Դաշնամուրի նվագակցողը՝ Մ.Ասլամազյան:

*Սիրող*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 23 փետրվարի, N 42:

22 Համերգ՝ «Հայ ժողովրդական երգեր ու նվագներ» խորագրով Կոմիտասի ղեկավարությամբ, Երևանի ակումբի (կլուբի) թատրոնում: Ելույթ ունեցան՝ 80 հոգուց բաղկացած երգեցիկ խումբը (ղեկ. Կոմիտաս), Վահան Տեր-Առաքելյանը (երգ), Կոմիտասը (երգ), Խոսրով Փախչանյանը (դաշնամուր): Ծրագրում՝ Կոմիտաս:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆ., N 1462:

22 Համերգ՝ Ալեքսանդր Կարասովի մասնակցությամբ, Մոսկվայի ուսուցչական ժողովարանում: Ծրագրում՝ Բիզե - Նադիրի դերերգը՝ «Մարգարիտներ որոնողները» օպերայից, Դավիդով - «Ինչ երջանկություն»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Կարասովի ֆ., N 15:

22 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը Պետերբուրգում կայացած համերգում կատարեց Սարասատեի «Իսպանական պարերը»:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 245:

23 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանին Պետերբուրգում շնորհվեց պրոֆեսորի կոչում:

Գեղարվեստ, N 2, էջ 133:

25 Կոմիտասը Վաղարշապատից մեկնեց Թիֆլիս՝ երգերի տպագրության առիթով:

## ՄԱՐՏ

**2** Երգիչ Գրիգոր Մաքարովի համերգը՝ Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանի դահլիճում: Ծրագրում՝ Գունո, Ռոսսինի, Բիզե:

*Խմբ.*, Հայ երգիչ մը Վեննետիկոյ մեջ: Բազմավեպ, ապրիլ, N 4, էջ 179:

**6** Կահիրեի «Զվարթ դերասանախումբը» (ղեկ. Ա.Պենկլյան) «Վերդի» թատրոնում ներկայացրեց Տ.Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-Հոր աղա» կոմիկական օպերան:

**8** Հոգևոր համերգ՝ Նոր Նախիջևանում: Մասնակցեց Հայոց Ս.Լուսավորիչ եկեղեցու երգեցիկ խումբը՝ Հայր սարկավագ Գևորգ Չորեքչյանի ղեկավարությամբ: Գ.Չորեքչյանը արժանացել էր «լավ ու հմուտ» երաժշտի կոչման:

Արարատ, ապրիլ, N 4, էջ 432:

**12** Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Հելսինկիի Ֆիլհարմոնիայի դահլիճում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Ալ.Ֆրիդման):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2261:

**25** Համերգ տալու և դասախոսություն կարդալու նպատակով Կոմիտասը ժամանեց Բաքու:

Սովետական արվեստ, 1961, N 2, էջ 50:

**27-28** Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը (ղեկ. հեղինակ) կատարվեց Խարկովի ազնվականների ժողովարանի դահլիճում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2262$^{ա}$-2263:

- Կոմիտասի դասախոսությունները հայկական հոգևոր և աշխարհիկ երաժշտության մասին՝ Բաքվում:

Русская музыкальная газета, 27 апреля, N 17, стр. 414.

## ԱՊՐԻԼ

**1** Թիֆլիսում սկսեց լույս տեսնել «Գեղարվեստ» գրական-արվեստագիտական հանդեսը: Խմբագիր-հրատարակիչ՝ Գարեգին Լևոնյան:

*Տ.Նազարյան,* «Ոչ գեղարվեստ, այլ արվեստ»: Տարազ, N 5, էջ 34:

**1, 4** Երգեցիկ խմբի համերգը՝ Կոմիտասի ղեկավարությամբ, Բաքվի ժողովարանի դահլիճում: Մեներգով հանդես եկան՝ Դ.Ղազարյանը, Վ.Տեր-Առաքելյանը, Կոմիտասը: Մասնակցեց դաշնակահարուհի Ա.Կարա-Մուրզան: Ծրագրում՝ Կոմիտաս - «Կալերգ» (Լոռի), «Սայլերգ» (Վայոց ձոր), «Կայնել ես, կանչում էլ չես», «Փապուրի», «Վարանդայի գութաներգը», «Սիփանա քաջեր», «Հով արեք, սարեր ջան», «Անտունի», «Քելեր-ցոլեր», «Ծիրանի ծառ», «Հորովել», «Հաբրբան», «Մշո Շորոր», «Մանուշակի», «Երանգի»:

*Սիրող,* Քնար: Թատրոն և երաժշտություն: Մշակ, 12 ապրիլի, N 80:

**3** Ջութակահար Հայկ Կյուտենյանի համերգը՝ Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում: Մասնակցեց դաշնակահարուհի Մ.Միրիմանյանը: Ծրագրում՝ Հենդել - սոնատ, Բախ - կոնցերտ, Ռամո - գավոտ, դ' Ամբրոջիո - կանցոնետա, Պագանինի - ֆանտազիա, Հ.Կյուտենյան - «Ալբանական պար», Լիստ - «Ռիգոլետտո»:

*Թատրոն և երաժշտություն,* Մշակ, 2 ապրիլի, N 73:

*Սիրող,* Թատրոն և երաժշտություն: Մշակ, 5 ապրիլի, N 76:

Արարատ, ապրիլ, N 4, էջ 435:

4 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգի կոնսերվատորիայի փոքր դահլիճում կայացած համերգին, կատարելով Չայկովսկու «Մելանխոլիկ սերենադը»:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 246:

20 Գրական-երաժշտական երեկո՝ Բաքվի Մարդասիրական ընկերության դահլիճում: Ելույթ ունեցան՝ արևելյան գործիքների նվագախումբը (ղեկ. Գ.Վերդյան) և Բաքվի «Նաուկա» ընկերության բանվոր-բանվորուհիների երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Մայիլյան):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյան ֆ., N 1314:

– «Գեղարվեստ» ամսագրի առաջին համարում հրապարակվեց Կոմիտասի «Չեմ կրնա» խորագրով պարերգի նոտաները (զուգահեռ՝ նաև տեքստը):

Գեղարվեստ, N 1, հավելված:

## ՄԱՅԻՍ

11 Համերգ՝ Շուշիի հոգևոր դպրոցի դահլիճում: Ելույթ ունեցավ դպրոցի երգեցիկ խումբը (ղեկ. Ռ.Մանասյան): Ծրագրում՝ Կոմիտաս - «Սարերի վրով», «Երի-երի ջան», «Մեզ նոր արև», «Ալագյազ», «Մեր դաշտը», «Սոնա յար», «Անձրեն եկավ», Ք.Կարա-Մուրզա - «Ջան գյուլում», Գր.Միրզայան - «Ինչլիկ»:

*Լ.Հովսեփյան,* Թատրոն և երաժշտություն: Մշակ, 20 մայիսի, N 109:

17 Ալեքսանդր Սպենդիարյանի «Թաթարական երգը» և «Միայն քո ժպիտը տեսնեմ» ռոմանսները կատարվեցին Յալթայի հասարակական ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգչուհի Ֆլորա Կանցելը և երգիչ Վ.Ռ.Պիկոկը:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2264:

30 Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց Ռիգոլետտոյի դերերգը՝ Վերդիի համանուն օպերայում, որը բեմադրվեց Պետերբուրգի ժողովրդական տանը:

*А.П-ли,* Народный дом. Петербургский листок, 3 июня, N 150.

## ՀՈՒՆԻՍ

1, 20 Սիմֆոնիկ համերգ (ղեկ. Կ.Սարաջյան)՝ Մոսկվայում: Ծրագրում՝ Ռիմսկի-Կորսակով:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Կ.Սարաջյանի ֆ., N 403:

12 Երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Դ.Ղազարյան)՝ Գանձակում: Ելույթ ունեցան՝ երգիչներ Դ.Ղազարյանը, Գ.Ջամալյանը, Ս.Ղազարյանը, Ա.Մնացականյանը, Ն.Հովհաննիսյանը, Հ.Պողոսյանը:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Դ.Ղազարյանի ֆ.:

## ՀՈՒԼԻՍ

10 Ալեքսանդր Սպենդիարյանի «Ն.Ա.Ռիմսկի-Կորսակովի հիշատակին նվիրված Պրելյուդը» կատարվեց Յալթայի քաղաքային այգում կայացած սիմֆոնիկ համերգում (դիր. Ա.Էյհենվալդ):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2266:

22 Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Մոսկվայում կայացած սիմֆոնիկ համերգում (դիր. Կ.Սարաջյան):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2270:

## ՕԳՈՍՏՈՍ

**7** Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը (ղեկ. Հեղինակ) կատարվեց Յալթայի քաղաքային այգում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2274:

**15** Երգիչ Սարգիս Մուրադյանը կատարեց Մեֆիստոֆելի դերերգը՝ Գունոյի «Ֆաուստ» օպերայում, որը բեմադրվեց Ալեքսանդրապոլի ժողովրդական տանը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Ս.Մուրադյանի ֆ., N 47:

**21** Ալեքսանդր Սպենդիարյանի «Վալս-ֆանտազիան» կատարվեց Յալթայի քաղաքային այգում կայացած սիմֆոնիկ համերգում (դիր. Դ.Ա.Ծմուկլովսկի):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2278:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

**5** Կ.Պոլսում կազմակերպվեց օպերետային խումբ (ղեկ. Արշակ Պենկլյան): Խմբի կազմը՝ Ռոզալի Պենկլյան, Շավարշ Գարագաշ, Պետրոս Պալթազարյան, Հրանտ Ստեփանյան, Վահրամ Պալըքճյան, Գ.Գարոյան, Վեհանույշ, Լյուսի Թոգաթլյան (Գարագաշ), Գոհարիկ Տիրինյան, Երվանդ Փափազյան, Երվանդ Թոլյան, Մելինե Տիչեճյան:

**11** Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը կատարվեց Յալթայի քաղաքային այգում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Ա.Ասլանյան):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2283:

**18** Ալեքսանդր Սպենդիարյանի «Կոնցերտային նախերգանքը» (ղեկ. Հեղինակ) կատարվեց Յալթայի քաղաքային

այգում կայացած սիմֆոնիկ համերգում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2284:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

30 Ջութակահար Դավիթ Դավթյանի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Մասնակցեց Ե.Նավասարդյանը:

Մշակ, 30 հոկտեմբերի, N 240:

## ՆՈՅԵՄԲԵՐ

1 Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը կատարվեց Պետերբուրգի կոնսերվատորիայի մեծ դահլիճում կայացած սիմֆոնիկ համերգում (դիր. Ռ.Կայնուս):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2289:

16 Համերգ՝ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան ջութակահար Դ.Դավթյանը, դերասանուհի Օ.Մայսուրյանը, երգիչ Է.Բրոջին: Դաշնամուրի նվագամասը՝ Շրեյբեր, Քարթվելով:

Մշակ, 16 նոյեմբերի, N 255:

19 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝ Պետերբուրգի կոնսերվատորիայի փոքր դահլիճում: Ծրագրում՝ Հենդել - սոնատ, Գրիգ - բալլադ, Պագանինի - կոնցերտ ռե մաժոր, Վիտոլ - «Ֆանտազիա՝ լատիշական թեմաներով», Չայկովսկի-Աուեր - վալս, Պոպոժե - նոկտյուրն: Դաշնամուրի նվագամասը՝ Մ.Ե.Մոշկովսկայա:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 248:

**21** Մանկական երեկո՝ Բաքվի մարդասիրական ընկերության դահլիճում: Ելույթ ունեցան երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Մայիլյան), մանուկ կատարողները՝ երգիչներ, դաշնակահարներ, պարողներ: Ներկայացվեց Ա.Մայիլյանի «Գյուլնազ տատի հեքիաթը» մեկ գործողությամբ մանկական օպերան:

Տրադիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1312:

**25** Թիֆլիսում կազմակերպվեց «Հայկական երաժշտական լիգա» ընկերությունը: Կազմակերպման նախաձեռնողներ կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյան և Ազատ Մանուկյան:

*Մ.Միրզայան,* Ռոմանոս Մելիքյան: Խորհրդային արվեստ, 1934, N 10:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

**6** Համերգ՝ Կովկասյան հայոց բարեգործական ընկերության օգտին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան երգեցիկ խումբը (ղեկ. Կոմիտաս և Ա.Մանուկյան), երգիչներ Ե.Աֆրիկյանը, Վ.Առաքելյանը, երգչուհիներ Մ.Սպենդիարյանը, Մ.Սոլովյանը, դաշնակահարուհի Մ.Անդրոնիկովան:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆ., N 1504:

**11** Հայկական երեկո՝ Մոսկվայի ազնվականների ժողովարանի դահլիճում (ղեկ. Մ.Մ.Իպոլիտով-Իվանով): Ելույթ ունեցան՝ ջութակահար Հ.Նալբանդյանը, երգչուհի Հ.Տեր-Ղորղանյանը, թավջութակահար Ս.Մ.Կոզոլուպովը, երգիչներ Մակրեցին, Խրեննիկովան: Ծրագրում՝ Սերվե – ֆանտազիա թավջութակի համար, Ա.Ռուբինշտեյն – մեղեդի «Փերամորս» օպերայից, Իպոլիտով-Իվանով – «Կովկասյան էսքիզներ», «Հայկական ռապսոդիա», Կյուի – «Օրիենտալ», Ռախմանինով – «Ֆանտազիա», Ալ.Սպենդիարյան – «Այ վարդ», Չայկովսկի – մեղեդի՝ «Մազեպա» օպերայից: Դաշնամուրի նվագամասը՝

Գ.Ջիրինգ:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Կարատովի ֆ., N 17:

12 Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը կատարվեց Բեռլինի «Երգի ակադեմիայի» դահլիճում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Մ.Սերբուլով):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2291:

14 Համերգ՝ Վաղարշապատի ծխական դպրոցի դահլիճում: Ելույթ ունեցան՝ Ս.Անդրեասյանը, Ս.Ասկարյանը, Վ.Բունիաթյանը, Ա.Կարճիկյանը, Վ.Այվազյանը, Շ.Թարխանյանը, Ա.Տեր-Թովմասյանը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 78:

15 Կ.Պոլսի հայկական (Ազգային) հիվանդանոցի նվագահանդեսը՝ մասնակցությամբ Զարուհի Թեոհլեյանի (երգ), Զապել Մինասյանի (երգեհոն), Հրաչուհի և Արտեմ Էքսիրճյանների (դաշնամուր), Ս.Ակայանի (երգ), երգեցիկ խմբի (ղեկ. Մանաս և Հ.Սինանյան):

Լույս, N 18, էջ 612-614:

16 Հայկական երեկո՝ Բեռլինում: Ելույթ ունեցան՝ երգչուհի Էմմերլինգը, երգեցիկ խումբը: Ծրագրում՝ Կոմիտաս, Ք.Կարա-Մուրզա:

*Кавказец*, Армянский вечер в Берлине, Тифлисский листок, N 30.

17, 26 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգում կայացած գրական-երաժշտական երեկոյին:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 249, 250:

21 Համերգ՝ Բաքվի «Հայոց մարդասիրական ընկերության»

դահլիճում: Ելույթ ունեցան՝ աշակերտական երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Մայիլյան), դաշնակահարուհի Ս.Յուզբաշյանը, երգիչներ Ս.Դեմուրյանը, Ա.Լևխանյանցը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N79:

23 «Աղբյուր» հանդեսի 25-ամյա հոբելյանը՝ Թիֆլիսի արքունական թատրոնում: Ելույթ ունեցան՝ Ե.Նավասարդյանը, Մ.Սպենդիարյանը (երգ), Ա.Քալանթարը, Դ.Դավթյանը (ջութակ), Կնինան, Ն.Շիրուևը, Վ.Վիլշաուն (ջութակ):

Մշակ, 23 դեկտեմբերի, N 283:

27 Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը կատարվեց սիմֆոնիկ համերգում՝ կայացած Բաքվի հասարակական ժողովարանում (ղեկ. Ռ.Բուլլերիան):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2292:

28 Անտոն Մայիլյանի համերգը՝ Բաքվի «Հայոց մարդասիրական ընկերության» դահլիճում: Ելույթ ունեցան՝ հայկական սիրողական երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Մայիլյան), թառահարների նվագախումբը (ղեկ. Գ.Վերդյան), երգիչներ Գ.Ղազարյանը, Նարիկյանը, Ն.Ղարաքեշիշյանը: Ծրագրում՝ Ա.Մայիլյան, Մ.Եկմալյան, Կոմիտաս, Գր.Միրզայան, Վագներ, Ռուբինշտեյն:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1310:

– «Գեղարվեստ» հանդեսի երկրորդ համարում հրատարակվեց Կոմիտասի «Հո՜յ Նազան» խորագրով պարերգի նոտաները և տեքստը:

Գեղարվեստ, Թիֆլիս, N 2, էջ 146:

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Ա) Նոտաներ

*Ե.Գալշնճյան,* «Ձոներգ անուան տոնախմբության» ամենապատիվ ՏՏ Մատթեոս Ս.Արքեպսկ Իզմիրլեան Հայրիկի: Կ.Պոլիս:

*Հ.Էպեյան,* «Նեշեի տիլ», երգերի ժողովածու: Կ.Պոլիս:

«Ընդարձակ հայկական երգարան»: Հատոր 1: Կ.Պոլիս:

*Կոմիտաս,* «Կաքավի երգը»: Խումբ, դաշնամուր: Հրատ. «Հասկեր», մանկական ամսագրի, Թիֆլիս, 3 էջ:

*Կոմիտաս,* «Չեմ կրնա», հայկական ժողովրդական երգ: Թիֆլիս:

*Կոմիտաս,* «Հո՜յ Նազան», հայկական ժողովրդական պարերգ, արական եռաձայն խմբի համար: Թիֆլիս:

*Ա.Մանուկյան,* «Փնջիկ», մանկական երգարան եվրոպական նոտաներով: Նյութ հայ դպրոցների I, II, և III բաժանմունքների համար: Թիֆլիս:

*Ա.Մարլյան,* «Գեղոն Ազատության»: Եռաձայն երգչախմբի համար դաշնամուրի նվագակցությամբ: Կ.Պոլիս, տպ. Օ.Մոդոսյան, 2 էջ:

*Ա.Մարլյան,* Ձոներգ առ ամեն Տ.Տ.Մատթևոս Ս. արք. Իզմիրլյան: Խոսք՝ Ե.Դևլեթյանի: Կ.Պոլիս, տպ. Մոդոսյան:

*Ն.Տիգրանյան,* «Ջախորդ օրեր», ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ: Ս.Պետերբուրգ, Հրատ. Շմիդտի:

*Ն.Տիգրանյան,* «Լուսնյակ գիշեր», «Տուն արի», ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ: Ս.Պետերբուրգ, Հրատ. Շմիդտի:

*Ն.Տիգրանյան,* «Խեղճուկի ձեն», «Սիրուհիս, քեզ համար», «Միթխար-Միթխար», ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ: Ս.Պետերբուրգ, Հրատ. Շմիդտի:

## Բ) Գրքեր

*В.Д.Корганов,* Кавказская музыка. Сборник статей,

2-ое издание. Тифлис, скоропечатня М.Мартиросянца, 85 стр.

Рецензия: *Н.Ш.,* Кавказская музыка В.Д.Корганова. Закавказье, N 157.

"Кавказская музыка. Сборник статей В.Д.Корганова". Տարազ, N 7, էջ 56:

"Кавказская музыка". Тифлисский листок, N 127.

### Գ) Հոդվածներ

*Ե.Բաղդասարյան,* Գեղարվեստի աշխարհից (Ալեքսանդրա Դունկանի մասին): Մշակ, 15 հունվարի, N 10:

*Ա.Թ.,* Երաժշտություն և երաժշտական ստեղծագործություն (պրոֆ. Օրշանսկու): Գեղարվեստ, N 1, էջ 19-23, N 2, էջ 18-23, N 3, էջ 10-13, N 4, էջ 22-27:

«Երաժշտություն. *Կոմիտաս,* «Զեմ կրնա», *Գր.Միրզայան,* «Քրիստոս ի մեջ», *Պարոյկ,* «Տաղ ծննդյան»: Գեղարվեստ, N 1, էջ 100-104:

*Ս.Եսայան,* Տխուր տարելից (Մակար Եկմալյանի մահվան առիթով): Մշակ, 21 փետրվարի, N 41:

*Շավարշ,* Կոմիտաս վարդապետ: Գեղարվեստ, N 2, էջ 125-128:

*Հ.Սոլովյան,* Երգչուհի Պապայան [Նաղեժդա]: Գեղարվեստ, N 2, էջ 38-41, N 3, էջ 24-28, N 4, էջ 27-32:

*Ալ.Աղայան,* Երաժշտական արվեստը դպրոցում: Գեղարվեստ, N 2, էջ 82-87:

*Խ.Սամուելյան,* Աշխատանքը հայ ժողովրդական երգերում: Գեղարվեստ, N 2, էջ 23-27:

*Ա.Վ.,* Մի մոռացված հիշատակ (Ք.Կարա-Մուրզա): Հուշարար, N 2, էջ 22-23:

«Երաժշտություն. «Հո՜յ Նազան» (Կոմիտասի): «Աշնան տողեր» (Ռ.Մելիքյանի)»: Գեղարվեստ, N 2, էջ 146-154:

«Ռոմանոս Մելիքյանին Հովնանյան դպրոց (Թիֆլիս), որպես ուսուցիչ հրավիրելու մասին»: Գեղարվեստ, N 2, էջ 134:

*Օվգյուս Շապյու,* Երաժշտական արվեստը գյուղում: Գեղարվեստ, N 2, էջ 82-87:

*Ս.Եսայան,* Մակար Եկմալյան: Գեղարվեստ, N 2:

*Ա.Մանուկյան,* Երգը և երաժշտությունը մեր գյուղերում: Մշակ, 16 փետրվարի, N 35:

*Հ.Ավետիսյան,* Կոմիտաս վարդապետ և «Հայ քնարը»: Հանդես ամսօրյա, N 3, էջ 94-96:

*Հ.Աճեմյան,* Տիգրան Չուխաճյան և «օպերետը» թրքահայ թատրոնին մեջ: Լույս, 29 մարտի, N 14, էջ 448-452:

«Ջութակահար Կյուտենյանի Թիֆլիս գալու մասին»: Մշակ, 4 ապրիլի, N 72:

«Հայկ Կյուտենյանի մասին»: Մշակ, 8 ապրիլի, N 77:

*Արձագանք,* Գրականություն և արվեստ: Բյուզանդիոն, 17 ապրիլի, N 3513:

*Հր.Ալենաք,* Գեղարվեստական ընկերություն: Վտակ, 29 ապրիլի, N 89:

«Հայկական երեկույթներ Փարիզի մեջ մասնակցությամբ Շահմուրադյանի (երգիչ)»: Անահիտ, N 5-12, էջ 37:

*Ս.Թադևոսյան,* Ձայնագրության արվեստի կազմակերպությունը: Արշալույս, N 129:

*Հարություն Սինանյան,* Դաշնակ և ջութակ: Բերա, 5 մայիսի:

*Թեոդիկ,* Ամենուն տարեցույցը: 1908, էջ 345-350: Բ տարի:

*Գրիգոր Մխետիրյան,* Կոմիտաս վարդապետ և նրա բազմաձայն երգեցողություն: Մանզումե, N 2155:

*Ս.Թյուլթյունճյան (Շարասան),* Տիգրան Չուխաճյան: Արևելք, 2 հունիսի, N 6812:

*Սուրխաթյան,* Հայ արվեստագետներ [Սերոբ Շիշեճյան, Ստեփան Էլմաս]: Լույս, 14 հունիսի, N 25, էջ 830-832:

«Հայ քնար միաձայն գեղջուկ երգերի, Ա տասնյակ. գրի առավ Կոմիտաս վարդապետ»: Էջմիածին, 20 հունիսի, էջ 3:

*Հ.Ստեփանյան,* Օպերային ներկայացումներ Աշխաբադում (մասնակցությամբ տենոր Արշակ Կոստանյանի): Գործ, N 61, էջ 3:

*Ժան Իվրէ*, Տիրան Ալեքսանյան (Հայ թավջութակահար): Բազմավեպ, օգոստոս, N 8, էջ 376:

*Ա.Թ.*, Գեղարվեստ, N 2, գրական-գեղարվեստական-երաժշտական հանդես: Մշակ, 19 դեկտեմբերի, N 280:

*Տ.Նալբանդյան*, Թատրոն և երաժշտություն (երգիչներ Գ.Մակարյանի և Բրոնկայա Մակարյանի մասին): Մշակ, 20 դեկտեմբերի, N 281:

«Արևելյան եղանակներու անուններ»: *Թեոդիկ*, Ամենուն տարեցույցը, Բ. տարի, էջ 93:

«Սթրատիվարիուս» (Ստրադիվարիուս): *Թեոդիկ*, Ամենուն տարեցույցը, Բ.տարի, էջ 96:

«Երգողներուն հաչակը»: *Թեոդիկ*, Ամենուն տարեցույցը, Բ. տարի, էջ 173:

«Բականինիի (Պագանինիի) ջութակը»: *Թեոդիկ*, Ամենուն տարեցույցը, Բ. տարի, էջ 201:

«Պեռլիոզ» (Բեռլիոզ): *Թեոդիկ*, Ամենուն տարեցույցը, Բ. տարի, էջ 220:

"Лекции по музыке в России" (О лекциях арх. Комитаса об армянской церковной музыке). Русская музыкальная газета, N 17, стр. 414.

*Р.Геника*, Корреспонденция из Харькова ("Три пальмы" и "Крымские эскизы" А.Спендиарова). Русская музыкальная газета, N 17.

"Концерты" (С-Петербург, А.Спендиаров, симфоническая картина "Три пальмы"). Русская музыкальная газета, N 45.

*С.С.*, А.Спендиаров, ор. 11, 2 романса (библиография). Русская музыкальная газета, N 37.

*Кеворкян Комитас*, Армянские народные танцы, сопровождаемые песнями (В книге В.Д.Корганова «Кавказская музыка», стр. 47-50).

# 1909

## ՀՈՒՆՎԱՐ

**6** Կովկասյան երեկո՝ Տոմսկի Հասարակական ժողովարանում: Ելույթ ունեցան՝ սիրողական երգեցիկ խումբը և արևելյան նվագախումբը (ղեկ. Գ.Տեր-Մնջիկեսեղեկյանց), դաշնակահարուհի Վ.Մանանյանցը, պարուհի Ա.Ներսեսյանցը: Ծրագրում՝ Իպոլիտով-Իվանով, Գ.Ղորղանյան, պարեր՝ ուզունդարա, լեզգինկա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1317:

**11** Երեկո՝ Բաքվի Հասարակական ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգիչներ Մ.Հալաբյան-Իսրայելյանը, Ն.Ղարաքեշիշյանը, ջութակահար Գ.Բոյաջյանը, թառահարների նվագախումբը (ղեկ. Գ.Վերդյան), քամանչահար Մ.Տեր-Գրիգորյանը: Ծրագրում՝ Գլինկա, Ա.Մայիլյան: Դաշնամուրի նվագամասը՝ Ա.Մայիլյան, Ե.Ալիխանյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1315:

**15** Երգիչ Բեգլար Ամիրջանը կատարեց կոմս դի Լունայի դերերգը՝ Վերդիի «Տրուբադուր» օպերայում, որը բեմադրվեց Պետերբուրգի ժողովրդական տանը:

*В.-Б.,* Театр и музыка. Россия, 27 января, N 975.

**15** Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Բաքվի Հասարակական ժողովարանում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Ռ.Բուլլերիան):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2293:

18 Երեկո՝ Հայ կանանց բարեգործական ընկերության օգտին, Մերվի հասարակական ակումբում: Ելույթ ունեցան՝ Մերվի սիրողական երգեցիկ խումբը և արևելյան նվագախումբը (ղեկ. Ե.Բաղդասարյան), երգիչ Տ.Հովհաննիսյանը: Ծրագրում՝ Գ.Կազաչենկո - «Սասունի քայլերգը», Ք.Կարա-Մուրզա - «Վարդ կոչիկս», Ե.Բաղդասարյան - «Մի լար, բլբուլ», «Էլեգիա», ժողովրդի երգը՝ «Արտավազդ Երկրորդ» օպերայից: Դաշնամուրի նվագամասը՝ Մ.Լյուցիդարսկայա, Ե.Բաղդասարյան:

*Լ.Մ.Բոչարյանց*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 25 հունվարի, N 17:

24 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Ռիգայում կայացած կամերային երաժշտությանը նվիրված համերգին: Ծրագրում՝ Հենդել - Սոնատ մի մաժոր ջութակի և դաշնամուրի համար, Հենդել-Բուրմեստեր - արիոզո, ալեկյուդ, Մոցարտ-Բուրմեստեր - մենուետ, Ռամո-Բուրմեստեր - Ռիգոդոն, Բախ-Աուեր - սիցիլիանա, Մոցարտ-Աուեր - գավոտ: Դաշնամուրի նվագամասը՝ Ս.Լեմբա-Լիխաչևա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 252:

28 Հայկական երեկո՝ Պետերբուրգի ազնվականների ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ քամանչահար Ա.Մ.Շահնազարյանը, երգիչ Գ.Սարաջյանը, երգչուհի Ա.Աբրահամյանը, ջութակահար Հ.Նալբանդյանը: Ծրագրում՝ Տոստի - ռոմանս «Իդեալ», Ալ.Սպենդիարյան - «Այ վարդ», Ա.Տեր-Ղևոնդյան - «Արևելյան մեղեդի», Սարասատե - «Խաբաներա»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 253:

## ՓԵՏՐՎԱՐ

**1** Երաժշտական երեկո՝ Վաղարշապատի ծխական դպրոցի դահլիճում, թառահար Վարդան Բունիաթյանի ղեկավարությամբ: Ելույթ ունեցավ արևելյան գործիքների նվագախումբը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 81:

**21** Ալեքսանդր Սպենդիարյանի «Կոնցերտային վալսը» կատարվեց Պետերբուրգի կոնսերվատորիայի մեծ դահլիճում կայացած սիմֆոնիկ համերգում (դիր. Ն.Ն.Չերեպնին):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2294:

**22** Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի վարչությունը Կոմիտասին հրավիրում է Էջմիածնից՝ ղեկավարելու Ներսիսյան դպրոցի երգչախումբը, որը մասնակցելու էր մարտի 3-ին Թիֆլիսում կայանալիք տարբեր դավանանքի հոգևոր երաժշտության համերգին:

Սովետական արվեստ, 1959, N 9, էջ 45:

**23** Թիֆլիսում վախճանվեց աշուղ Ջիվանին (Սերոբ Լևոնյանց, ծնվ. 1846):

*Ա.Վ.*, Աշուղ Ջիվանի: Հուշարար, N 13, էջ 187-188:

*Աշուղ Հագիր*, Աշուղ Ջիվանուն: Տարազ, N 3, էջ 43:

**28** Համերգ՝ Վաղարշապատի ծխական դպրոցի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգեցիկ խումբը Կոմիտասի ղեկավարությամբ, թառահար Վ.Բունիաթյանը, Ա.Գ.Վոլկովան, Շ.Թարխանյանը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 82:

## ՄԱՐՏ

1 Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարեց Վարշավայի ֆիլհարմոնիայի նվագախումբը՝ ֆիլհարմոնիայի դահլիճում (ղեկ. Ի.Ցելևիչ):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2296:

3 Թիֆլիսի արքունական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ Սկոբելևյան կոմիտեի (բարեգործական նպատակով) կազմակերպած տարբեր դավանանքի պատկանող երգեցիկ խմբերի համերգը: Ռուսական երգեցիկ խումբը ղեկավարում էր Դանովսկին, վրացականը՝ Ն.Սուլխանովը, կաթոլիկականը՝ Սվենիցկին, հայկականը՝ Կոմիտասը: Համերգի երրորդ բաժինը սկսվում էր հայկականով: Երգչախումբը կատարեց «Մարմին տերունական», «Հայր մեր», «Սուրբ, սուրբ» համարները:

*Մերոդ*, Հոգևոր համերգ: Մշակ, 5 մարտի, N 47:
«Ժամ Կոմիտասի մասին», 1960, էջ 208:

4 Կոմիտասը կարդաց դասախոսություն՝ «Հայ ժողովրդական երգն ու հոգևոր երաժշտությունը, նրանց միջև եղած կապը» թեմայով՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի դահլիճում: Կոմիտասը կատարեց նաև «Անտունի» երգը:

Սովետական արվեստ, N 9, էջ 46:

8 Ալեքսանդր Սպենդիարյանի «Սգո նախերգանքը՝ նվիրված Ն.Ա.Ռիմսկի-Կորսակովի հիշատակին» կատարվեց Մոսկվայում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Վ.Ա.Զոլոտարյով):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2297:

8 Արևելյան նվագախմբի համերգը (ղեկ. Գ.Վերդյան)՝ Բաքվի «Հայոց մարդասիրական ընկերության» դահլիճում: Մենակատարներ – թառահարներ՝ Գ.Վերդյան, Պ.Թումյան:

Տրապրում՝ Կոմիտաս - «Սարերի վրով», Ք.Կարա-Մուրզա - «Ալագյազ», Ս.Դեմուրյան - «Ախոռ ջան», Գ.Վերդյան - «Վարդան Մամիկոնյանի երգը», «Թուխ չերգն բլբուլ», «Մեյրամո»: Դաշնամուրի նվագամասը՝ Ա.Գագլոյանց:

Տրակիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ս.Դեմուրյանի ֆ., N 53:

**15** Հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Գ.Միհրանյան)՝ Սիմֆերոպոլի քաղաքային ժմնռային ժողովարանում: Ծրագրում՝ Ք.Կարա-Մուրզա, Տ.Զուխաճյան, Գր.Միրզայան, Ալ.Սպենդիարյան, Ա.Մամաջան:

Տրակիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2299:

**22** Սուրբ Հարության տոնի առիթով Էջմիածնի Մայր տաճարում տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ, որի ընթացքում երգում էր Գևորգյան ճեմարանի քառաձայն երգեցիկ խումբը՝ Կոմիտասի ղեկավարությամբ:

Արարատ, ապրիլ, N 4, էջ 319:

## ԱՊՐԻԼ

**3** Սպիրիդոն Մելիքյանի դասախոսությունը՝ «Երաժշտության զարգացման խնդիրը մեզանում» թեմայով, Թիֆլիսի ուսուցչական միության ընդհանուր ժողովում:

*Սպ.Մելիքյան,* Երաժշտության զարգացման խնդիրը մեզանում: Բրոշյուր, Թիֆլիս:

**9** Գարեգին Լևոնյանի դասախոսությունը՝ «Հայ աշուղներ» թեմայով, Թիֆլիսի Կովկասյան հայոց բարեգործական ընկերության դահլիճում: Ելույթ ունեցան աշուղներ՝ աշուղ Ջամալիի ղեկավարությամբ և Լենինականի արևելյան գործիքների նվագախումբը (ղեկ. Թառահար Գրիգոր Բալայան):

Մշակ, 9 ապրիլի, N 71:

9 Ալեքսանդր Սպենդիարյանի երեք ռոմանսները՝ «Քո ժպիտը», «Թաթարական երգ» և «Արևելյան ռոմանս» («Այ վարդ») կատարվեցին Մոսկվայի սինոդական ուսումնարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգիչ Վ.Ռ.Պիկոկը և դաշնակահար Վ.Ա.Զիրինգը:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2302:

14 Ալեքսանդր Սպենդիարյանի «Թաթարական երգը» և «Արևելյան ռոմանսը» («Այ վարդ») կատարվեցին Տագանրոգի ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգչուհի Մարիա Դոլինան և երգիչ Ն.Սիմբիրսկին: Դաշնամուրի նվագամասը՝ Մ.Խորդան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2303:

26 Թառահար Վարդան Բունիաթյանի համերգը՝ Ալեքսանդրապոլի ժողովրդական տանը: Մասնակցեց արևելյան գործիքների անսամբլը (ղեկ. Վ.Բունիաթյան):

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 83:

## ՄԱՅԻՍ

18 Լայպցիգի կոնսերվատորիայում կայացած համերգում Օվսաննա Տեր-Գրիգորյանը (դաշնամուր) և Մ.Շլեյֆինգերը (ջութակ) կատարեցին Բեթհովենի լյա մաժոր սոնատը գրված դաշնամուրի և ջութակի համար:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Օվս.Տեր-Գրիգորյանի ֆ., N 317:

31 Դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի աշակերտների համերգը՝ Թիֆլիսի երկրորդ գիմնազիայի դահլիճում: Ներածական խոսք՝ Հ.Տեր-Դավթյանի:

*Օկտավա*, Հ.Գ.Տեր-Դավթյանի համերգը: Գործ, 5 հունիսի, N 117:

## ՀՈՒԼԻՍ

**2** Ալեքսանդր Սպենդիարյանի «Սգո նախերգանքը՝ նվիրված Ն.Ա.Ռիմսկի-Կորսակովի հիշատակին» կատարվեց Յալթայում կայացած սիմֆոնիկ համերգում, հեղինակի ղեկավարությամբ:

Տրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2309:

**6** Համերգ՝ թառահար Վարդան Բունիաթյանի ղեկավարությամբ, Ղարաքիլիսայի տեղական ռոտոնդայում: Մասնակցում էին՝ երգիչներ Գ.Սարգսյանը, Ս.Սարգսյանը, Ա.Սմբատյանը, արևելյան գործիքների նվագախումբը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 84:

**15** Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Օդեսայի քաղաքային զբոսայգում կայացած սիմֆոնիկ նվագախմբի համերգում (ղեկ. Ի.Վ.Պրիբիկի):

Տրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2311:

**16** Լայպցիգի կոնսերվատորիայի դահլիճում կայացած համերգում կատարվեց Օվսաննա Տեր-Գրիգորյանի դաշնամուրի և ջութակի համար գրված սյուիտը՝ բաղկացած չորս մասից՝ պրելյուդ, ռոմանս, սկերցո, սարաբանդա:

Տրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Օվս. Տեր-Գրիգորյանի ֆ., N 317:

**18** Թառահարների նվագախմբի համերգը՝ Դիլիջանի հայկական ռոտոնդայի դահլիճում (ղեկ. Վ.Բունիաթյան):

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 85:

## ՕԳՈՍՏՈՍ

**13** Երգիչ Բեգլար Ամիրջանի համերգը՝ Թիֆլիսի Զուբալովի անվան ժողովրդական տանը:

*Հ.Աղայար,* Ամիրջանի նվագահանդեսը: Հորիզոն, 15 օգոստոսի, N 12:
*Հ.Ա.(ղայար),* Թատրոն և երաժշտություն: Մշակ, 15 օգոստոսի, N 178:

20 Սիմֆոնիկ համերգ՝ Կոնստանտին Սարաջյանի ղեկավարությամբ, Մոսկվայում: Ծրագրում՝ Գլազունով - սիմֆոնիա N 2, Վագներ - «Նյուրնբերգցի մայստերզինգերներ» օպերայի նախերգանքը, Մենդելսոն - կոնցերտ ջութակի համար նվագախմբի հետ, Շաբրիե - ռապսոդիա, Բիզե - «Գնչուական երգ»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Կ.Սարաջյանի ֆ., N 393:

26 Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Յալթայի քաղաքային զբոսայգում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. հեղինակ):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2315:

27 Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը կատարվեց Յալթայի քաղաքային զբոսայգում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Ա..Ասլանյան):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2316:

30 Թառահարների նվագախմբի համերգը՝ (ղեկ. Վ.Բունիաթյան)՝ Վաղարշապատի ծխական դպրոցի դահլիճում:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 86:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

20 Երգիչ Բեգլար Ամիրջանի և ջութակահար Դավիթ Դավթյանի համերգը՝ Ղարսում: Ծրագրում՝ Բորոդին - Իգորի դերերգը՝ «Իշխան Իգոր» օպերայից, «Կռունկ» - հայկական ժողովրդական երգ, Դ.Դավթյան - «Հայու հոգին», Պագանինի - կոնցերտ ջութակի համար:

*«Թատրոն և երաժշտություն»,* Մշակ, 26 սեպտեմբերի, N 211:

25 Գունոյի «Ֆաուստ» օպերան բեմադրվեց Թիֆլիսի արքունական թատրոնում:

*Սիրող*, «Ֆաուստը»: Մշակ, 27 սեպտեմբերի, N 212:

28 Մոսկվից վերադառնալով Փարիզ, երգիչ Արմենակ Շահմուրադյանը էջմիածնում հյուրընկալվեց Կոմիտասի մոտ:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆ., N 1348:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

4 Պարուհի Արմեն Օհանյանի երեկոն՝ Թիֆլիսի արքունական թատրոնում:

"Армен Оганян". Зритель, N 5, стр. 5, N 8, стр. 11.

7 Երգիչ Բեգլար Ամիրջանի, ջութակահար Դավիթ Դավթյանի և դաշնակահարուհի Մ.Անդրոնիկովայի համերգը՝ Քութայիսում: Ծրագրում՝ Վենյավսկի, Պագանինի, Շոպեն, Լիստ:

«Թատրոն և երաժշտություն»: Մշակ, 10 հոկտեմբերի, N 223:

8 Բորոդինի «Իշխան Իգոր» օպերան՝ Թիֆլիսի արքունական թատրոնում: Իշխան Իգոր - Սոկոլսկի, Իշխանուհի - Տուլգինա, Իշխանի որդի - Ն.Ղուկասյան:

*Սիրող*, Օպերայում: Մշակ, 10 հոկտեմբերի, N 223:

10 Երգիչ Բեգլար Ամիրջանի և ջութակահար Դավիթ Դավթյանի համերգը՝ Ղարսում: Ծրագրում՝ Լեոնկավալլո - «Պայացներ» օպերայի նախերգանքը, Սարասատե - «Իսպանական պարեր», Լիշին - բալլադ, Պագանինի - կոնցերտ ջութակի համար, Բորոդին - Իգորի դերերգը՝ «Իշխան Իգոր» օպերայից, Ռախմանինով - ռոմանսներ, Վենյավսկի - «Լեգենդ»: Դաշնամուրի նվագամասը՝ Ռ.Ա.Մինխեյմեր:

Տրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 223:

13 Երգիչ Բեգլար Ամիրջանի և ջութակահար Դավիթ Դավթյանի համերգը Թիֆլիսի Զուբալովի ժողովրդական տանը: Տրագրում՝ Սարասատե, Վենյավսկի, Դ.Դավթյան, Չայկովսկի, Ռուբինշտեյն:

Հովիտ, 19 դեկտեմբերի:

14 Երգիչ Ի.Սարաջևի համերգը՝ Թիֆլիսի վրաց ազնվականների թատրոնում: Մասնակցում էին՝ երգիչ Բ.Ամիրջանը, երգչուհի Տ.Իսկանդերը, դաշնակահարուհի Ի.Պոլտարացկայան, ջութակահար Մ.Մերենբլյումը:

*Հ.Գաս-յան*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 16 հոկտեմբերի, N 228:

17 Ալեքսանդրապոլի Առևտրական դահլիճի բացումը: Ելույթ ունեցան՝ երգիչներ Բ.Ամիրջանը, երգչուհի Ն.Վեսելովզորովան, դաշնակահարներ Մ.Անդրոնիկովան, Գ.Պարինադոն, ջութակահար Ի.Պալցեը: Տրագրում՝ Ռուբինշտեյն, Լեոնկավալլո, Բորոդին, հայկական ժողովրդական երգեր:

«Թատրոն և երաժշտություն»: Մշակ, 24 հոկտեմբերի, N 235:

19 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի և դաշնակահարուհի Ի.Ա.Վենգերովայի համերգը՝ Ռիգայում: Տրագրում՝ Ֆրանկ - սոնատ ջութակի և դաշնամուրի համար, Գրիգ - բալլադ, Գլազունով - կոնցերտ ջութակի համար, Հենդել-Բուրմեստեր - պրելյուդ, արիա, Մոցարտ-Բուրմեստեր - մենուետ, Արենսկի - պրելյուդ, Լիստ - «Մեֆիստո-վալս», Մելարտին - ռոմանս, Կուցյա - «Օրորոցային երգ», Հ.Նալբանդյան - «Օրիենտալ»:

Տրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 258:

19 Համերգ՝ Ալեքսանդրապոլում: Ելույթ ունեցան՝ երգիչ

Բ.Ամիրջանը, երգչուհի Ն.Վեսելովզորովա-Իսկանդերը, ջութակահար Ի.Պալցևը: Ծրագրում՝ Սարասատե, Շոպեն, Բորոդին: Դաշնամուրի նվագամասը՝ Մ.Անդրոնիկովա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 263-285:

21 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝ Յուրիևի էստոնական Բյուրգերմյուսե ընկերության դահլիճում:

*Ա.*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 4 նոյեմբերի, N 244:

28 Երգիչ Բեգլար Ամիրջանի և ջութակահար Դավիթ Դավթյանի համերգը՝ Բաքվի հասարակական ժողովարանի դահլիճում: Ծրագրում՝ Լեոնկավալլո - «Պայացներ» օպերայի նախերգանքը, Սարասատե - «Գնչուական մեղեդի», Լիշին - բալլադ, Բորոդին - Իգորի դերերգը՝ «Իշխան Իգոր» օպերայից, Ռախմանինով - ռոմանսներ, Վենյավսկի - «Մոսկվայի հիշատակը»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., N 224:

## ՆՈՅԵՄԲԵՐ

2 Ջութակահար Դավիթ Դավթյանի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Ծրագրում՝ Վենյավսկի, Սարասատե, Դ.Դավթյան, Պագանինի:

*Սիրող*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 4 նոյեմբերի, N 244:

**13** Թիֆլիսում, Ալ.Մ.Արղության նախաձեռնությամբ հիմնվեց նոր երաժշտական ընկերություն, որի նպատակն էր կազմակերպել համերգներ և օպերային ներկայացումներ՝ ժողովրդի համար մատչելի գներով: Բացմանը կայացավ համերգ՝ նվիրված Պ.Ի.Չայկովսկու հիշատակին: Ներածական խոսք՝ Հ.Տեր-Դավթյանի: Ջեկ.՝ Մաքսիմով: Ելույթ ունեցան՝ Զ.Պալիևը, Բ.Շեբուևը, Մ.Նավասարդյանը, Կ.Մարցենկևիչը:

«Թատրոն և երաժշտություն»: Մշակ, 15 նոյեմբերի, N 254:

15 Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Մոսկվայի ռուսական երաժշտական ընկերության սիմֆոնիկ համերգում, Ալեքսանդր Գլազունովի ղեկավարությամբ:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2317:

18 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝ Պետերբուրգի կոնսերվատորիայի փոքր դահլիճում: Մասնակցեց դաշնակահուհի Ի.Ա.Վենգերովան: Ծրագրում՝ Տարտինի - սոնատ սոլ մինոր, Վյետան - կոնցերտ լյա մինոր, Կյուի - կավատինա, Հենդել-Բուրմեստեր - արիոզո, պրելյուդ, Մոցարտ-Բուրմեստեր - մենուետ, Բախ-Աուեր - սիցիլիանա, Մոցարտ-Աուեր - գավոտ, Հ.Նալբանդյան - «Օրիենտալ», Սկրյաբին - էտյուդ, Լիստ - «Մեֆիստո-վալս», Գլյուկ - մեղեդի, Շուման - «Կառնավալ»: Դաշնամուրի նվագամասը Մ.Ե.Մոշկովսկայա:

Ծրագիր. ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 255:

28 Արևելյան գործիքների նվագախմբի համերգը՝ թառահար Վարդան Բունիաթյանի ղեկավարությամբ, Նախիջևանի հայկական դպրոցի դահլիճում:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 88:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

5 Գրական-երաժշտական երեկո՝ Բաքվի «Հայոց մարդասիրական ընկերության» դահլիճում: Ելույթ ունեցան՝ աշակերտական երգեցիկ խումբը (ղեկ. Հ.Միքեյան), Ե.Բեկնազար-Յուզբաշյանը, Ի.Մ.Կոգարյանը, Ա.Ունանյանը, Գ.Տեր-Գրիգորյանը, Ա.Առաքելյանը, Վ.Արիստակեսյանը, Ա.Մայիլյանը:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 68:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Ա) Նոտաներ

*Գ.Գրիգորյան*, Զարկեարի քնարը: Բաքու:

*Մ.Եկմալյան*, Անտիպ երգերից. 1. Շարական սրբոյ Վարդանանց (նորահրաշ): 2. Մահն քաջորդւոյն: Խոսք՝ Մ.Պեշիկթաշլյանի, արական եռաձայն խմբի և դաշնամուրի համար:

*Վ. և Պ.Զարդարյան եղբարք*, Ընդարձակ հայկական երգարան, Ա, Բ և Գ հատորներ: Կ.Պոլիս (երկրորդ տպագր.):

*Դ.Յ.Մ.*, Ընդհանուր հայկական երգարան: Կ.Պոլիս:

«Ծաղկեփունջ», երգարան Տեր-Հովհաննիսյանի հրատարակությամբ (271 երգ):

*Կոմիտաս*, «Ախ, մարալ ջան» (Ձայնագրված): Գեղունի, Զ տարի, N 6, էջ 56:

*Բարսեղ Կանաչյան*, Ձայնագրված հայկական երգարան Ա. և Բ. մաս: Կ.Պոլիս:

«Լիակատար նոր երգարան»: Կ.Պոլիս:

*Հ.Հայկազունի*, Երգարան: Թիֆլիս:

*Լ.Համբարձումյան*, Հայկական երգեր երգչախմբի համար: Կ.Պոլիս, 2 էջ:

«Ձայնագրված հայկական երգարան», կպարունակե ազգային, հեղափոխական, սիրային և զվարճալի երգեր՝ ամբողջն ալ եվրոպական նոտաներով եղանակավորված, օժանդակությամբ Բ.Կանաչյանի և այլ արվեստագետներու: Հրատարակիչ՝ Վ. և Պ.Զարդարյան եղբարք: Կ.Պոլիս:

*Սպ.Մելիքյան*, «Ձմեռն անցավ», երգ: Գեղարվեստ, Թիֆլիս, N 3, էջ 176:

### Բ) Գրքեր

*Սպ.Մելիքյան*, Երաժշտության զարգացման խնդիրները մեզանում: Թիֆլիս, 39 էջ:

*Ա.Ղազիկյան*, Հայկական նոր մատենագիտություն և

Հանրագիտարան հայ կյանքի: Վենետիկ, հատոր Ա, հատոր Բ, 1912թ.:

*Թեոդիկ,* Եղիա Տնտեսյան (համառոտ կենսագրություն), «Տիպ ու տառ», Կ.Պոլիս, գլուխ Բ, էջ 104-105:

*В.Корганов,* Бетховен. С.-Петербург.

Գ) Հոդվածներ

*Ա.Տիգրանյան,* Թատրոն: Ախուրյան, 16 հունվարի, N 4:

*Tigo (Տ.Նազարյան),* Արվեստ և գրականություն: Տարազ, N 1, էջ 14-15:

*Դ.Դեմիրճյան,* Երաժշտության եհովան: Ընկեր, մայիս, N 1, էջ 4-6:

«Պատմական մուզիկալեզմ»: Ընկեր, N 1, էջ 6-8:

«Ինչ ուզըլի...» (Աշուղ Ջիվանու ծանր վիճակի և մահվան առիթով): Ընկեր, N 1, էջ 18-19:

«Հայ էջեր: Տաղ սիրո»: Անահիտ, ապրիլ-մայիս, N 1-2, էջ 29-30:

*Ռաշիդ,* Գեղարվեստի աշխարհից (ջութակահար Յան Կուբելիկի համերգը Մոսկվայում): Գործ, 10 փետրվարի, N 28:

*Նիման,* Էջմիածնի միջնորդությունից (Կոմիտասի խմբավարական աշխատավարձի կրճատման և ճեմարանում դասավանդելուց հրաժարվելու մասին): Մշակ, 25 փետրվարի, N 40:

*Վ.Ղորղանյան,* Ֆ.Շոպեն: Տարազ, N 2, էջ 17-18:

*Տ(իրատուրյան) Հ.Ներսես,* Հայկական Վերտին (Տիգրան Չուխաճյան): Բազմավեպ, մարտ, N 3, էջ 136-137:

*Հ.Սըրվյան,* Երգչուհի Պապայան: Գեղարվեստ, N 3, էջ 24-28, N 4, էջ 27-32:

*Ա.Թ.,* Երաժշտություն և երաժշտական ստեղծագործություն (պրոֆ. Օրշանսկու): Գեղարվեստ, N 3, էջ 10-12:

*Ս.Եսայան,* Մակար Եկմալյան: Գեղարվեստ, N 3, էջ 44-48:

«Աշուղ Ջիվանի» (մահվան առթիվ): Գեղարվեստ, N 3, էջ 169:

«Հայ հանճարը գնահատված. Հարություն Սինանյան»: Բազմավեպ, մարտ, N 3, էջ 134-136:

*Ես.*, Մի տարի էլ անցավ (Մակար Եկմալյանի հիշատակին): Մշակ, 9 մարտի, N 52:

*Ա.Վ.*, Աշըղ Ջիվանի (մահվան առթիվ): Հուշարար, 13 մարտի, էջ 186-187:

*Խ.Սամուելյան*, Աշխատանքը հայ ժողովրդական երգերում: Գեղարվեստ, N 3, էջ 13-17:

*Երաժշտություն.* 1. «Շարական Վարդանանց»: 2. «Թաղումն քաջորդւոյն» - Մ.Եկմալյանի: 3. «Սոնետ» Ռ.Մելիքյանի: «Ձմեռն անցավ» Սպիրիդոն Մելիքյանի: 5. «Ջախորդ օրերը» Ռ.Մելիքյանի: Գեղարվեստ, N 3, էջ 176-184:

«Երգիչ Բեգլար Ամիրջանյանն և ջութակահար Դավիթ Դավթյանը Թիֆլիսում»: Գեղարվեստ, N 3, էջ 158:

*Ա.Չ[ոպանյան]*, Արմենակ Շահմուրադյան: Անահիտ, N 3-4, էջ 94-95, N 11-12, էջ 44-45:

«Հայ ազգային լուրեր (հաղորդագրություն երաժշտական խաղերի վերծանման ապարեզում Կոմիտասի ձեռք բերած հաջողությունների մասին)»: Բյուզանդիոն, 20 մայիսի, N 3842:

*Սպ.Մելիքյան*, Երաժշտություն զարգացման խնդիրը մեզանում: Նոր դպրոց, մայիս, N 5, էջ 19-29, N 6-7, էջ 13-27:

*Ար.Տիգրանյան*, Թատրոն: Ախուրյան, 28 հունիսի, N 46:

*Գ.Պալասանյան*, Երաժշտությունը մեր դպրոցներում: Մշակ, 2 հուլիսի, N 141:

Հայ էջեր, Նահապետ Քուչակի անտիպ տաղիկներ: Անահիտ, օգոստոս-սեպտեմբեր, էջ 108:

*Սիրող*, Օպերայում: Մշակ, 16 հոկտեմբերի, N 228:

*Ջութակահար Դավիթ Դավթյան*, Թատրոն և երաժշտություն (Թիֆլիսի կվարտետի համերգը Ն.Նիկոլաևի մասնակցությամբ): Մշակ, 20 հոկտեմբերի, N 231:

*Հ.Գաս-յան*, Թատրոն և երաժշտություն («Լակմե»): Մշակ, 23 հոկտեմբերի, N 234:

*Ջութակահար Դ.Դավթյան*, Սիմֆոնիական նվագահանդես

(Թիֆլիսի Արքունական թատրոնում): Մշակ, 29 նոյեմբերի, N 265:

*Սարգ. քահ. Ասլանյանց,* Մոռացվածը (Ն.Պապայանի մասին): Հուշարար, N 12, էջ 175-176:

*Հայ էջեր,* Երգ Զաքարիայի: Անահիտ, դեկտեմբեր, 1910թ. հունվար, էջ 210:

*Բ.Կանաչյան,* Տնտեսյան Եղիա (կենսագրական նոթեր): Զայնագրված հայկական երգարան, էջ 40-41:

«Ազդատախնամ ընկ. վաղվա նվագահանդեսը (ջութակահար Հ.Կյուտենյանի համերգի մասին)»: Ժամանակ, N 102, էջ 2:

«Լուրեր Կոմիտասի կողմից հայ շարականների և ժամագրքի խազերի լուսաբանման մասին»: Բյուզանդիոն, N 3842, էջ 23:

*Ս.Ս.,* Նիկողոս Թաշճյան (երաժշտապետ-ձայնագրագետ): Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Գ. տարի, էջ 241-247:

"Музыка за границей". Заграничная печать о русской музыке. Концерт Д.Ахшарумова в Берлине. Русская музыкальная газета (РМГ), N 9:

*И.Е.Попов,* Армянская музыка. Русская музыкальная газета, N N 40-44, 46-48.

*Д.С.,* Международный музыкальный конгресс. Тифлисский листок, N 128.

"Театр в Персии (о танцовщице Армен Оганян)". Баку, 31 декабря, N 293.

"Es wird dann folgender Brief des Musikdirektors Basile Korganoff". III Kongreß der Internationalen Musikgesellschaft. Wien, 25. bis 29. Mai 1909 գրքում: Wien-Leipzig, 1909, S. 296-297.

# 1910

## ՀՈՒՆՎԱՐ

**3** Երգչուհի Շողակաթ Նուրբեկյանց-Կոստանյանի համերգը՝ Նոր Նախիջևանում: Ծրագրում՝ Պուչչինի, Մենդելսոն: Դաշնամուրի նվագամասը՝ Լ.Հարությունյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Կոստանյանի ֆ., N 1:

**25** Թիֆլիսի Զուբալովի անվան տանը կից սկսեց գործել հայկական երաժշտական ընկերություն, որի նպատակն էր համերգների կազմակերպումը:

*«Գեղարվեստ»:* Հորիզոն, 15 մայիսի, N 104:

**26** Սիմֆոնիկ համերգ՝ Թիֆլիսի արքունական թատրոնում (ղեկ. Լ.Նիկոլաև): Ելույթ ունեցան՝ ջութակահար Վիկտոր Վիլշաուն և թավջութակահար Միքայել Ծովիանյանը: Ծրագրում՝ Բեթհովեն, Չայկովսկի:

*Դ.Դավլթյան,* Թատրոն և երաժշտություն: Մշակ, 29 հունվարի, N 20:

**27** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝ Պետերբուրգի «Բյուրգեմուսսե» ընկերության դահլիճում: Ելույթ ունեցավ դաշնակահարուհի Ս.Ս.Պոլոցկայա-Եմցովան: Ծրագրում՝ Հենդել - սոնատ մի մաժոր, Գլյուկ-Բրամս - գավոտ, Շպոր - կոնցերտ լյա մինոր ջութակի համար, Հենդել-Բուրմեստեր - արիոզո, պրելյուդ, Մոցարտ-Բուրմեստեր - մենուետ, Բախ-Աուեր - սիցիլիանա, Մոցարտ-Աուեր - գավոտ, Շուման - անդանտինո, Շպեն - պոլոնեզ, Հ.Նալբանդյան - «Հեքիաթ»՝ սոլո ջութակի համար, «Մելանհոլիա»,

«Օրիենտալե»:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 260:

31 «Տաճար» հանդեսում հրապարակվեց Աբրահամ քահ. Էպեյանի «Շարականի խազերը» խորագրով հոդվածը, ուր մի ամբողջական հատված նվիրված էր Կոմիտասին:

Տաճար, N 6, էջ 188:

## ՓԵՏՐՎԱՐ

2 Համերգ՝ Շուշիի Թեմական դպրոցի դահլիճում: Ելույթ ունեցան՝ Ստեփան Դեմուրյանը և հայկական սիրողական երգեցիկ խումբը: Ծրագրում՝ Կոմիտաս, Լիսենկո, Ս.Դեմուրյան, Ռուբինշտեյն, Չայկովսկի, հայկական ժողովրդական երգեր:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 93:

3 Ջութակահար Պ.Կվիտենյանի համերգը՝ Կ.Պոլսի հրեական ակումբում: Ծրագրում՝ Մոցարտ, Սարասատե, Պագանինի: Դաշնամուրի նվագամասը՝ Զ.Մենգիլճյան:

*Թ.*, Կվիտենյան նվագահանդեսը Էտիրենի մեջ: Ազատամարտ, 6 փետրվարի, N 203:

4 Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Մոսկվայում: Մասնակցեցին՝ երգչուհի Օ.Պեկալուդան և դաշնակահարուհի Ե.Գերասիմենկոն: Ծրագրում՝ Ալ.Սպենդիարյան, Ռիմսկի-Կորսակով, Ե.Բաղդասարյան, Գ.Ղորղանյան, Կորեշչենկո, Բիզե, Դավիդով, Շոպեն:

*Nota-Bene,* Երգիչ Ա.Կոստանյանի համերգը: Մշակ, 12 փետրվարի, N 32:

7 Թիֆլիսի Երաժշտական ընկերությունը հաստատեց երգչուհի Նադեժդա Պապայանի անվամբ մեկ թոշակ:

«Թատրոնական լուրեր»: Մշակ, 7 փետրվարի, N 28:

**9** Կովկասի փոխարքան թույլ տվեց ներկայացնել Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան (ըստ Հով.Թումանյանի համանուն պոեմի):

Մշակ, 10 փետրվարի, N 30:

**10** Երգիչ Ներսես Ղուկասյանի բենեֆիսը՝ Թիֆլիսի արքունական թատրոնում: Ներկայացվեց Դ.Սլավյանսկու «Բոյար Օրշա» օպերան: Արսեն-Ն.Ղուկասյան:

*Սիրոզ*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 20 փետրվարի, N 39:

*Սիրոզ*, Օպերայում: Մշակ, 23 փետրվարի, N 41:

**10** Մոսկվայի «Հայկական խմբակի» երեկոն՝ նվիրված Պ.Ի.Չայկովսկու ստեղծագործություններին: Ելույթ ունեցան՝ ջութակահար Ի.Խորոզյանը, թավջութակահար Գ.Կանանովը, դաշնակահարներ Ն.Մելիք-Բեգլյարովան, Ա.Խալաթովը (Խալաթյան): Դաշնամուրի նվագամասը՝ Ն.Բաբասինովա, Ն.Մելիք-Բեգլյարովա (Մելիք-Բեգլյարյան), Ս.Խալաթով:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե.Բաղդասարյանի ֆ., N 98:

**12** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգի ազնվականների ժողովարանի դահլիճում կայացած համերգին: Ծրագրում՝ Շոպեն - նոկտյուրն, Վենյավսկի - մազուրկա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 261:

**14** Երգիչ Տիգրան Նալբանդյանի համերգը՝ Ժնևում:

*Comalian*, Տիգրան Նալբանդյանի կոնցերտը Ժնևում: Մշակ, 11 փետրվարի, N 31:

*Ե.Տէր-Ստեփանյան*, Հայկական երեկույթ մը: Ազատամարտ, 1911, N 487, էջ 3:

**14** Երգիչ Մակար Վարդիկյանի համերգը՝ Թիֆլիսի հայկական բարեգործական ընկերության դահլիճում:

Մասնակցեց սիրողական երգեցիկ խումբը (ղեկ. Մ.Վարդիկյան): Ծրագրում՝ Բ.Կարա-Մուրզա, հայկական ժողովրդական երգեր:
«Մ.Վարդիկյանի համերգը»: Մշակ, 16 փետրվարի, N 35:

20 Համերգ՝ նվիրված Պ.Ի.Չայկովսկու ստեղծագործություններին, Մոսկվայի «Հայկական խմբակի» դահլիճում: Ելույթ ունեցան՝ ջութակահար Ի.Խորոզյանը, թավջութակահար Գ.Կանանովը, դաշնակահարուհիներ Ն.Մելիք-Բեգլյարյանը, Ս.Խալաթյանը, երգիչներ Ա.Կարասովը, Ե.Բորոնկինան, Վ.Բուլյինը, Ն.Եղիազարյանը, Ե.Զավոլոդան: Դաշնամուրի նվագամասը՝ Ն.Բաբասինովա, Ն.Մելիք-Բեգլյարյան, Ս.Խալաթյան:
Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Կարասովի ֆ., N 20:

21 Մագրիգյուղի (Թուրքիա) երիտասարդական երգեցիկ խումբը Բարսեղ Կանաչյանի ղեկավարությամբ ելույթ ունեցավ Ազգային վարժարանի սրահում՝ ի նպաստ Հաճընի որբանոցի:
«Մագրիգյուղի ցերեկույթը»: Ազատամարտ, 20 փետրվարի, N 215:

21, 24 Ստեփան Դեմուրյանի երգի երեկոն՝ Շուշիի թեմական դպրոցի դահլիճում: Մասնակցեց երգեցիկ խումբը: Ծրագրում՝ Կոմիտաս, Բ.Կարա-Մուրզա, Ս.Դեմուրյան:
*Ջանիկ*, Ս.Դեմուրյանի համերգը Շուշում: Գավառ, N 9, էջ 3-4:
*Սիրող*, Ս.Դեմուրյանի համերգը: Հորիզոն, N 47:

23 Երգիչ Ներսես Ղուկասյանի բենեֆիսը՝ Թիֆլիսի օպերային թատրոնում:
*Սիրող*, Օպերայում Ն.Ղուկասյանի բենեֆիսը: Մշակ, 23 փետրվարի, N 41:

28 Բաքվում լույս տեսավ «Թատրոն և երաժշտություն» հանդեսի անդրանիկ համարը: Խմբագիր-հրատարակիչ՝ կոմպոզիտոր Անտոն Մայիլյան:
*Ա.Բ(ալանթար)*, «Թատրոն և երաժշտություն ամսաթերթը»: Մշակ, 2 փետրվարի, N 45:

## ՄԱՐՏ

**1-5** Ջութակահար Դավիթ Դավթյանի համերգները՝ Տրապիզոնում: Մասնակցեց դաշնակահար Մ.Սամվելյանը: Ծրագրում՝ «Կռունկ», «Ծաղնազ», «Հայու հոգին», «Մեր Հայրենիքը», «Արիք Հայկազունք»:

«Թատրոն և երաժշտություն»: Մշակ, 25 մարտի, N 65:

**8** Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Պետերբուրգի երաժշտական ուսումնարանի համերգային դահլիճում կայացած սիմֆոնիկ համերգում (դիր. Ա.Ա.Ֆրիդման):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2320:

**13** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանը մասնակցեց Պետերբուրգի ազնվականների ժողովարանի դահլիճում կայացած սիմֆոնիկ համերգին (դիր. Ն.Ն.Չերեպնին): Ծրագրում՝ Վիտոլ - «Ֆանտազիա՝ լատիշական թեմաներով» ջութակի և նվագախմբի համար:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 259:

**14** Արևելյան համերգ՝ Թիֆլիսի արտիստական ընկերության դահլիճում: Ելույթ ունեցավ Կ.Պոլսի ժողովրդական գործիքների նվագախումբը (ղեկ. Նուբար Էքենդի):

Հորիզոն, 14 մարտի, N 57:

**15, 28** Երգիչ Ներսես Ղորղանյանի համերգը՝ Թիֆլիսի ժողովարանում: Ծրագրում՝ Մոնյուշկո, Լեոնկավալլո, Պուչչինի, հայկական երգեր, ռուսական ռոմանսներ:

«Թատրոն և երաժշտություն»: Մշակ, 14 մարտի, N 56:

Ն. Դ., Թիֆլիսի ժողովարանում: Մշակ, 31 մարտի, N 70:

18 Օվսաննա Տեր-Գրիգորյանի՝ դաշնամուրի, ջութակի և թավջութակի համար գրված ֆանտազիան կատարվեց Լայպցիգի կոնսերվատորիայում կայացած համերգում:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Օվս.Տեր-Գրիգորյանի ֆ., N 317ա:

24 Բանվորական համերգ՝ Բալախանում: Մասնակցում էին՝ բանվոր-բանվորուհիների երգեցիկ խումբը (ղեկ. Ա.Մայիլյան), նվագախումբը, մանկական երգեցիկ խումբը (ղեկ. Օ.Պետրով):

*Կ.Մ.*, Բանվորական մեծ համերգը Բալախանում: Թատրոն և երաժշտություն, N 3-4, էջ 33:

30 Երգչուհի Մ.Սոլովյանի համերգը՝ Թիֆլիսի բարեգործական ընկերության դահլիճում: Ծրագրում՝ Չայկովսկի, Ռ.Մելիքյան, հայկական ժողովրդական երգեր:

*Սկլող*, Երգչուհի Մ.Սոլովյանի կոնցերտը: Մշակ, 1 ապրիլի, N 71:

## ԱՊՐԻԼ

6 Գրական-երաժշտական երեկո՝ նվիրված Մակար Եկմալյանի մահվան 5-րդ տարելիցին, Թիֆլիսի Գրական-գեղարվեստական սալոնում: Զեկուցող՝ Հ.Տեր-Դավթյան: Հուշերով հանդես եկավ Ստ.Մալխասյանը: Ելույթ ունեցան՝ Թիֆլիսի օպերայի սիմֆոնիկ նվագախումբը (ղեկ. Ա.Ա.Պրիվետերա) և երգչախումբը (ղեկ. Պ.Մուրադյան), դաշնակահարուհի Մադլեն Բուդաղյանը, երգիչ Զարեհ Տիրացյանը, երգչուհի Մարինե Սոխակյան-Սոլովյանը: Ծրագրում՝ Մ.Եկմալյան – «Սուրբ, սուրբ», «Ով դու բարեկամ», «Տեր կեցո», Նոկտյուրն, Ռ.Մելիքյան – «Աշնանային տողեր»: Դաշնամուրի նվագամասը՝ Ռոմ. Մելիքյան:

*Ե.*, Մակար Եկմալյան: Տարազ, N 3, էջ 38:

«Մ.Եկմալյանի հիշատակին»: Տարազ, N 4, էջ 48:

9 Պարուհի Արմեն Օհանյանի նախաձեռնությամբ

Թեհրանի Սադրադում գրոսայգու պալատում տեղի ունեցավ պարսկուհիների բարեգործական ընկերության երեկոն: Ա.Տեր-Օհանյանը կարդաց դասախոսություն՝ «Թատրոնը և նրա բարոյական նշանակությունը» թեմայով: Ծրագրում՝ երգեր, պարեր, դեկլամացիա, կենդանի պատկերներ:

*Ա.Ն.,* Պարսկուհիների առաջին ներկայացումը Թեհրանում: Մշակ, 2 հունիսի, N117:

*"Армен Оганян"*, Искусство и гарем. Театр и искусство, N 20, стр. 412.

**15** Համերգ՝ երգիչ Ալեքսանդր Կարատովի մասնակցությամբ, Վորոնեժի ազնվականների ժողովարանի դահլիճում: Ծրագրում՝ Գրեչանինով, Բիզե, Ռախմանինով, Չայկովսկի: Դաշնամուրի նվագամասը՝ Ե.Պ.Պոլոնսկայա:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Կարատովի ֆ., N 21:

**27** Երգիչ Զարեհ Տիրացյանի համերգը՝ Թիֆլիսի Կովկասյան Հայոց բարեգործական ընկերության դահլիճում: Մասնակցում էին՝ դաշնակահարուհի Մ.Տերյանը, երգիչ Ս.Վարդանյանը, Ռոմանոս Մելիքյանը: Ծրագրում՝ Պուչչինի, Գրիգ, Մենդելսոն, Ռ.Մելիքյան:

*Սիրող,* Տիրացյանի կոնցերտը: Մշակ, 29 ապրիլի, N 89:

**29** Երգիչ Արշակ Կոստանյանը կազմակերպեց արևելյան երգերի երեկո՝ Բաքվի հասարակական ժողովարանի դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգիչներ Ա.Կոստանյանը, Ն.Ղարաքեշիշյանը, ջութակահար Գ.Բոյաջյանը: Ծրագրում՝ Ալ.Սպենդիարյան - «Թաթարական երգ», Ռիմսկի-Կորսակով - «Վրացական մեղեդի», Ե.Բաղդասարյան - «Հայկական մեղեդի», Վերդի - մեներգ՝ «Դոն Կարլոս» օպերայից, Գ.Ղորղանյան - «Պարսկական երգ», «Հրեական երգ», Ա.Մայիլյան - «Ոհ, եթե իմ կուրծքս»: Դաշնամուրի նվագամասը՝ Ե.Ալիխանյան-Ղազարյան, Ա.Մայիլյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1318:

## ՄԱՅԻՍ

**1** «Տաճար» հանդեսում հրապարակվեց Կոմիտասի «Շարական խաղերու նշանակությունը» խորագրով նամակ-բացատրականը (Աբրահամ քահ. Էպլեյանի հոդվածի պատասխանը):

Տաճար, N 10, էջ 311:

**1** Գրական-թատերաերաժշտական երեկո՝ Երևանի քաղաքային ակումբում, Մարիամյան ուսումնարանի օգտին:

*Ալեք*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 8 մայիսի, N 97:

**2** Սիմֆոնիկ համերգ՝ Կոնստանտին Սարաջյանի ղեկավարությամբ, Մոսկվայի քաղաքային Սոկոլնիկյան շրջանում: Ծրագրում՝ Գլինկա, Վեբեր, Մոցարտ, Մուսորգսկի, Արենսկի, Բեռլիոզ:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Կ.Սարաջյանի ֆ., N 393:

**2** Համերգ՝ Թիֆլիսի հասարակական ակումբի դահլիճում: Ելույթ ունեցան երգիչներ Զարեհ Տիրացյանը, Ս.Վարդանյանը, ֆլեյտահար Գ.Փիրադյանը, Թիֆլիսի զինվորական երաժշտական նվագախումբը:

Հորիզոն, 2 մայիսի, N 93:

**8** Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Երևանում: Ծրագրում Ալ.Սպենդիարյան, Ա.Մայիլյան, հայկական ժողովրդական երգեր:

«Ա.Կոստանյանի կոնցերտը»: Մշակ, 12 մայիսի, N 100:

**10** Թիֆլիսում կազմակերպվեց Հայկական խմբերգային ընկերությունը:

**14** Սիմֆոնիկ համերգ՝ Կոնստանտին Սարաջյանի

ղեկավարությամբ, Մոսկվայում: Ծրագրում՝ Գլազունով:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Կ.Սարաջյանի ֆ., N 403:

**17** Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը կատարվեց Կիևում (ղեկ. Գեորգի Շնեեֆոգտ):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2323:

**20** Ծննդավայր Քեոթահիայում հանգստանալու և բուժվելու նպատակով Թուրքիա մեկնող Կոմիտասը, Վաղարշապատի կայարանից գնացքով ուղևորվեց Թիֆլիս:

Մշակ, 25 մայիսի, N 111:

**25** Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Թիֆլիսի ժողովարանում: Ծրագրում՝ Լեոնկավալլո, Ալ.Սպենդիարյան, հայկական ժողովրդական երգեր:

*Հ.Գասպարյան,* Ա.Կոստանյանի համերգը Թիֆլիսի ժողովարանում: Մշակ, 27 մայիսի, N 113:

- Կոմիտասը Բաթումում ստեղծեց 60 հոգուց բաղկացած երգեցիկ խումբ՝ կազմված ուսուցիչներից և աշակերտներից:

Սովետական արվեստ, 1964, N 2, էջ 53-54:

**29** Կոմիտասը Բաթումի «Երկաթե» թատրոնում «Հայ գեղջուկ երաժշտության մասին» կարդաց դասախոսություն: Ելույթ ունեցավ երգչախումբը՝ Կոմիտասի ղեկավարությամբ, որը կատարեց նրա մշակած մեներգերը և խմբերգերը:

*Գևորգ Ղարիբյան,* էջեր Բաթումի հայ թատրոնի պատմությունից: 1961, Երևան, էջ 96:

## ՀՈՒՆԻՍ

**1** «Ազատամարտ» և "Новая речь" լրագրերում հրապարակվեց հաղորդագրություն այն մասին, որ Կոմիտաս

վարդապետը թողնելով ուսուցչության պաշտոնը Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, մեկնում է Եվրոպա:

Ազատամարտ, 1 հունիսի, N 121: "Новая речь",1 июня, N 121.

3 Կոմիտասի դասախոսությունը հայ ժողովրդական երգերի ծագման և զարգացման մասին (օրինակներով)՝ Բաթումի Հասարակական ժողովարանի դահլիճում: Կայացավ համերգ: Ելույթ ունեցավ երգեցիկ խումբը՝ Կոմիտասի ղեկավարությամբ: Ծրագրում՝ հայկական ժողովրդական երգեր:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 96:

4 Սիմֆոնիկ համերգ՝ Կոնստանտին Սարաջյանի ղեկավարությամբ, Մոսկվայի քաղաքային Սոկոլնիկյան շրջանում: Ծրագրում՝ Չայկովսկի, Ալբենիս, Սեն-Սանս, Գրիգ:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Կ.Սարաջյանի ֆ., N 393:

4 Կոմիտասը Բաթումից գերմանական «Դոյչլանդ» նավով մեկնեց Կ.Պոլիս:

Մշակ, 4 հունիսի, N 117:

7 Դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի համերգը՝ Թիֆլիսի Զուբալովի անվան ժողովրդական տան դահլիճում:

«Թատրոն և երաժշտություն»: Մշակ, 9 հունիսի, N 123:

10 Կոմիտասը Բաթումից հասավ Կ.Պոլիս:

«Հայ ազգային լուրեր»: Բյուզանդիոն, 11 հունիսի, N 4154:

«Հայկական լուրեր»: Ժամանակ, 12 հունիսի, N 509:

14 Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Եվպատորիայի քաղաքային այգում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Ֆ.Պ.Սելինսկ):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2325:

30 Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Շուշիի

ամառային ժողովարանի դահլիճում: Մասնակցեց երգիչ Ն.Ղարաքեշիշյանը: Ծրագրում՝ Ալ.Սպենդիարյան, Էրլիխ, Զայկովսկի, Գլինկա, Պուչչինի: Դաշնամուրի նվագամասը՝ Ս.Դորրոսեյսկայա:

*Արամենկո*, Ա.Կոստանյանի համերգը Շուշում: Հորիզոն, 8 հուլիսի, N 148:

- Մահացավ ճնծղաներ պատրաստող հռչակավոր վարպետ Քերովբե Զիլճյանը (ծնվ. 1830):

## ՀՈՒԼԻՍ

**11** Հայ ուսանողների նախաձեռնությամբ՝ Ախալքալաքի քաղաքային ակումբում տեղի ունեցավ գրական-երաժշտական երեկո: Ելույթ ունեցան՝ հայկական սիրողական երգեցիկ խումբը (ղեկ. Գ.Տեր-Մարտիրոսյան), Ռ.Աղավնյանը (դաշնամուր), Հայկ Հովույանը (ջութակ):

*Հովհ.Բաղալյան*, Ուսանողների գրական-երաժշտական երեկույթը Ախալքալաքում: Հորիզոն, 18 հուլիսի, N 156:

- Երգչուհի Մարգարիտ Բաբայանի համերգները՝ Լոնդոնում:

«Հայուհի երգչուհին Անգլիայում»: Տարազ, N 10, էջ 101:

**15** Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը հեղինակի ղեկավարությամբ կատարվեց Օդեսայում կայացած սիմֆոնիկ համերգում:

Ծրաgivը, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2327:

**22** Ջութակահար Դավիթ Դավթյանի համերգը՝ Արմավիրում: Ծրագրում՝ Պագանինի - կոնցերտ ջութակի համար, Շոպեն - բալլադ, Ալար - կոնցոնետա, Ն.Տիգրանյան - «Շահնազ», Վենյավսկի - «Մոսկվայի հիշատակը», Բախ - պրելյուդ, Դ.Դավթյան - լեգենդ, Բեթհովեն - սոնատ:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Դ.Դավթյանի ֆ., N 46:

**23** Շուշիի հայկական սիրողական երգեցիկ խմբի համերգը (ղեկ. Ս.Դեմուրյան)՝ ամառային ժողովարանի դահլիճում: Մենակատարներ՝ երգիչներ Ս.Դեմուրյան, Ն.Ղարաքեշիշյան, երգչուհի Ն.Դավթյան: Ծրագրում՝ Կոմիտաս, Երլիխ, Լիսենկո, Ս.Դեմուրյան, Ե.Բաղդասարյան, Չայկովսկի, Ք.Կարա-Մուրզա:

*Արամենկո*, Ստ.Դեմուրյանի համերգը: Հորիզոն, 29 հուլիսի, N 164:

**25** Քեոթահիայի (Թուրքիա) աղամարդկանց համար տեղի ունեցավ Կոմիտասի կազմած (վարժարանի աշակերտներից) և ղեկավարած քառաձայն երգեցիկ խմբի համերգը: Մեներգիչ՝ Կոմիտաս: Կատարվեցին՝ «Կալի հորովել», «Սայլի հորովել», «Դարդս լացեք», «Սարը սարի նման չէ», «Լավն ասեք իմ յարին», «Ջարը զընդ», «Ծիրանի ծառ», «Հոյ Նազան իմ», «Դե քելե», «Զինար ես», «Կուժն առա», «Սարեն եկավ», «Օհ, ինչ քաղցր բան», «Մինչդեռ հուսով», «Անձրևն եկավ», «Փապուրի», «Հաբրբան», «Ալագյազ սարն», «Խնկի ծառ», «Սարերի վրով», «Էս գիշեր», «Իմ չինարի յարը», «Սոնա յար», «Ալագյազ բարձր սարին», «Սիփանա քաջեր»:

Նույն ծրագրով Կոմիտասը տվեց համերգ հուլիսի 26-ին՝ համաքաղաքացի կանանց համար:

ԳԱԹ, երաժշտական բաժին, աֆիշների ֆ., N 1451:

**31** Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղրիմի էսքիզները» կատարվեց Կուրսկում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Է.Վալեկ):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2328:

## ՕԳՈՍՏՈՍ

**6** Ալեքսանդր Սպենդիարյանի «Կոնցերտային վալսը» և «Արևելյան ռոմանսը» («Այ վարդ») հեղինակի

ղեկավարությամբ կատարվեցին Յալթայի քաղաքային այգում կայացած սիմֆոնիկ համերգում:

Տրապիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2331:

7 Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Դիլիջանում: Ծրագրում՝ Չայկովսկի, Լեոնկավալլո, Ալ.Սպենդիարյան:

*Հ.Ս.*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 13 օգոստոսի, N 177:

18 Երգիչ Արշակ Կոստանյանի համերգը՝ Թիֆլիսի արտիստական ընկերության ամառային դահլիճում: Մասնակցեց իտալացի երգիչ Է.Բրոջին: Ծրագրում՝ Լեոնկավալլո, Բիզե, Չայկովսկի, Ալ.Սպենդիարյան, հայկական ժողովրդական երգ «Կռունկ»:

*Սիրող*, Արշակ Կոստանյանի համերգը: Մշակ, 20 օգոստոսի, N 182:

20 Կոմիտասը Քեոթահիայից ժամանեց Աֆիոն-Գարահիսար (Թուրքիա), որտեղ նրան ողջունելու համար հոգևոր դասի կողմից կազմակերպված էր հանդիսավոր ընդունելություն: Կոմիտասին «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ եկեղեցի առաջնորդեցին և այնտեղից երգեցիկ խմբի (ղեկ. Լևոն Ճերրեհյան) ուղեկցությամբ գնացին առաջնորդարան:

«Հայկական լուրեր»: Ժամանակ, 1 սեպտեմբերի, N 578:

«Պոլսեցիներու աչքը լույս»: Ժամանակ, 8 սեպտեմբերի, N 584:

29 Կոմիտասի համերգը Էսկիշեհիրում (Թուրքիա)՝ ի նպաստ ազգային վարժարանի: Մասնակցեց երգեցիկ խումբը: Ծրագրում՝ Կոմիտաս – «Ուսանողի երգը», «Արև կայնե կեսօր», «Անտունի», «Կուժն առա», «Սարեն եկավ երկու մուխ», «Գնա, գնա, հետիդ եմ», «Հով արեք, սարեր ջան»:

«Հայկական կյանք», Ազատամարտ, 29 օգոստոսի, N 375:

«Կոմիտաս վարդապետի հայացքները հայկական երաժշտության վրա» (երաժշտագետ Լևոն Ճերրեհյանի Աֆիոն-Գարահիսարում Կոմիտասի հետ վարած հարցազրույցը): Ժամանակ, 8 սեպտեմբերի, N 584:

31 Սիմֆոնիկ համերգ՝ Կոնստանտին Սարաջյանի ղեկավարությամբ, Մոսկվայի քաղաքային Սոկոլնիկյան շրջանում: Ծրագրում՝ Ռիխարդ Վագներ:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Կ.Սարաջյանի ֆ., N 403:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

12 Կոմիտասի ղեկավարած 90 հոգանոց երգեցիկ խմբի համերգը՝ Բրուսայում (Թուրքիա): Մեներգիչ Կոմիտաս: Ծրագրում՝ Կոմիտաս - «Ուսանողի երգը», «Անձրեն եկավ շաղալեն», «Փայուրի», «Ծիրանի ծառ, բար մի տա», «Ալագյազ բարձր սարին», «Արև կայնե կեսօր», «Հոյ, Նազան իմ», «Հաբրբան», «Սարը սարի նման չէ», «Սոնա յար», «Անտունի», «Կուժն առա ելա սարը», «Սարեն ելավ երկու մուխ», «Գնա-գնա հետիդ եմ», «Հով արեք, սարեր ջան», «Գութաներգ», «Սարերի վրով գնաց», «Էս գիշեր լուսը տեսա», «Սիփանա քաջեր»:

ԳԱԹ, երաժշտական բաժին, Կոմիտասի ֆ., N 1461:

25 «Ժամանակ» լրագրում «Երաժշտագետ տ. Կոմիտաս վրդ-ի բացատրողականը» խորագրով հրատարակվեց Բրուսայից Կոմիտասի ուղարկած հոդվածը, որը վերաբերում էր Լ.Ծերրենցյանի հետ ունեցած հարցազրույցի առիթով՝ Լ.Զիլինկիրյանի «Կոմիտաս վարդապետ և հայկական երաժշտությունը» խորագրով գրած հոդվածին:

Ժամանակ, N 599:

25 Կոմիտասը Բրուսայից ժամանեց Կ.Պոլիս:

«Ժամ Կոմիտասի մասին», 1960, էջ 186:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

4 Համերգ՝ երգիչ Ալեքսանդր Կարատովի մասնակցությամբ, Նովգորոդում: Ծրագրում՝ Գրեչանինով -

Ալյոշայի երգը՝ «Դոբրինյա Նիկիտիչ» օպերայից, Դավիդով - «Ինչ երջանկություն», Բոյտո - ղուպլետ՝ «Մեֆիստոֆել» օպերայից, Բիզե - Նադիրի դերերգը՝ «Մարգարիտներ որոնողներ» օպերայից: Դաշնամուրի նվագամասը Ա.Ա.Տարնովսկի:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Կարատովի ֆ., N 24:

**21-22** Ջութակահար Զարմայր Աթայանի համերգը՝ Աշխաբադում: Ծրագրում՝ Մենդելսոն, Դրիգո, Դվորժակ, Չայկովսկի, Մոցարտ, Բրուխ:

*Գ.Հ.*, Թատրոն և երաժշտություն: Մշակ, 7 նոյեմբերի, N 248:

**22** Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը կատարվեց Ռիգայի արհեստավորների ընկերության դահլիճում կայացած սիմֆոնիկ համերգում (ղեկ. Գ.Շնեեֆոգտ):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ալ.Սպենդիարյանի ֆ., N 2335:

**23** Իգմիրի հունական դերասանախումբը Սրոթինկ սրահում ներկայացրեց Տիգրան Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-Հոր աղա» կոմիկական օպերան:

*Ս.Պարթևյան*, «Լեպլեպիճի Հոր-Հոր աղա»: Դաշինք, 30 հոկտեմբերի, N 377:

*Սմբատ Քեսեճյան*, «Լեպլեպիճի Հոր-Հոր աղա», Դաշինք, 2 նոյեմբերի, N 379:

**23** Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝ Ռիգայում: Մասնակցեց դաշնակահար Ֆեոդոր Լեմբը: Ծրագրում՝ Ֆոլկմար Անդրե - սոնատ ջութակի և դաշնամուրի համար, Բրուխ - «Շոտլանդական ֆանտազիա», Հայդն - սերենադ, Մոցարտ - «Գերմանական պար», Գոսեկ - գավոտ, Մելարտին - ռոմանս, Չայկովսկի - սկերցո, Հ.Նալբանդյան - «Արևելյան» (Օրիենտալ): Դաշնամուրի նվագամասը՝ Ա.Բայ:

.Մրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 265:

**24, 31** Կոմիտասի դասախոսությունը՝ նվիրված Հայ գեղջկական երաժշտությունը, Կ.Պոլսի Բերայի «Արհեստավորաց ընկերության» սրահում: Դասախոսության ընթացքում Կոմիտասը հանդես եկավ իր մշակած երգերի կատարմամբ:

Տաճար, N 31, էջ 698:

## ՆՈՅԵՄԲԵՐ

**21** Կոմիտասի ստեղծած և ղեկավարած 300 հոգանոց երգեցիկ խմբի համերգը՝ Կ.Պոլսի Պըտի Շանի ձմեռային թատրոնում: Դաշնամուրի և երգեհոնի նվագամասը կատարեց Կոմիտասը: Մեներգիչ - Կոմիտաս: Առաջին բաժնում երգչախումբը կատարեց «Սուրբ, սուրբ», «Ո՞վ զարմանալի», «Տիրամայր հանդեպ կայր ի խաչին», «Մարիամ Մագթաղենե փարէ ի մեջ պարտեզին» և «Ռոնկվա» տաղերը: Երկրորդ բաժնում երգչախումբը կատարեց Կոմիտասի մշակած ժողովրդական երգերը:

«Տ.Կոմիտաս վարդապետի համերգը»: Բյուզանդիոն, 19 նոյեմբերի, N 4283, 22 նոյեմբերի, N 4291:

*Երմոգ,* Հայ եկեղեցվո Ս. արարողությունները Պըտի Շանի թատերաբեմին վրա, տ. Կոմիտաս վարդապետի ձեռքով: Ժամանակ, 20 նոյեմբերի, N 641:

«Կոմիտաս վարդապետի համերգը»: Ազատամարտ, 23 նոյեմբերի, N 446:

*Բյուզանդ Քեչյան,* Պաշպանողականություն, թե խավարամտություն: Բյուզանդիոն, 24 նոյեմբերի, N 4293:

*Եր.Տ.Անդրեասյան,* Հին հիշատակ մը (ուղղված Կոմիտասի առիթով Բյուզանդիոնի հրապարակած Բ.Քեչյանի հոդվածի դեմ): Ժամանակ, 26 նոյեմբերի, N 652:

«Կոմիտաս վարդապետի համերգը»: Դաշինք, N 424, էջ 1:

«Կոմիտաս վարդապետի համերգը Պոլսում»: Լույս, N 44, էջ 12:

*Դոկտոր Պագիլ,* Որք գուդոս կլանեք և զմժղուկս քամեք: Բյուզանդիոն, 20 նոյեմբերի, N 4290:

«Տ.Կոմիտաս վ-ի Համերգը»: Տաճար, 27 նոյեմբերի, N 35, էջ 710:

*Վրույր,* Պաշտպանողականություն, թե՞ խավարամտություն: Բյուզանդիոն, 27 նոյեմբերի, N 4296:

*Մ.Թիրաքյան,* Տ.Կոմիտաս վարդապետի Համերգին առթիվ: Բյուզանդիոն, 6 դեկտեմբերի, N 4303:

*Սերովբե քահանա Պուրմայան,* Բաց նամակ առ տ. Կոմիտաս վրդ.: Բյուզանդիոն, 6 դեկտեմբերի, N 4303:

*Անայիս,* Գեղարվեստական տպավորություններ (նվիրված Կոմիտասին): Բյուզանդիոն, 8 դեկտեմբերի, N 4305:

«Կոմիտաս վարդապետի Համերգը Պոլսում»: Հորիզոն, 8 դեկտեմբերի, N 273:

*Ունկնդիր մը,* Տ. Կոմիտաս վարդապետի Համերգը: Տաճար, 27 նոյեմբերի, N 35, էջ 760:

**22** Ալեքսանդր Սպենդիարյանի «Քարոզող-Բեդան» լեգենդը՝ գրված ձայնի և դաշնամուրի Համար (խոսք՝ Յու.Պոլոնսկու) արժանացավ Գլինկայի անվան մրցանակի:

«Թատրոն և երաժշտություն», Մշակ, 4 դեկտեմբերի, N 271:

**24** Երգեցիկ խմբի Համերգը՝ Կոմիտասի ղեկավարությամբ, Կ.Պոլսի Պըտի-Շանի թատրոնում:

*Հրանտ,* Հայ ժողովրդի երգերը: Ազատամարտ, 1911, Հունվար, N 519:

«Մեծ Համերգը ի նպաստ Հայ երաժշտանոցի»: Տաճար, 1911, N 9, էջ 151:

**27** Համերգ՝ նվիրված Քրիստափոր Կարա-Մուրզայի մահվան 10-ամյակին, Բաքվում: Ելույթ ունեցավ երգեցիկ խումբը (ղեկ. Պ.Կարա-Մուրզա):

Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 111:

**30** Համերգ՝ Մոսկվայի «Հայկական խմբակի» դահլիճում: Ելույթ ունեցան՝ երգիչներ Ա.Կարատովը (Կարապետով), Շ.Նուրբեկյանը, Յ.Խանդադյանը, Ե.Վ.Բարոնկինան: Ծրագրում՝ Դ.Արակչիևի (Արակիշվիլի), Կոմիտասի, Ա.Գրեչանինովի,

Մ.Իպոլիտով-Իվանով, Ռախմանինով, Մենդելսոն, Ռիմսկի-Կորսակով, հայկական ժողովրդական երգեր: Դաշնամուրի նվագամասը՝ Ն.Բարաաինովա, Ն.Մելիք-Բեգլյարյան, Ս.Խալաթով (Խալաթյան):

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Կարատովի ֆ., N 27:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

**3** Պարուհի Արմեն Օհանյանի համերգը՝ Կ.Պոլսի Պըտի Շանի թատրոնում: Մասնակցեց ջութակահար Դավիթ Դավթյանը:

*Ռաուլ Բոնչոն*, Հայ պարուհին. օր. Արմեն Օհանյան: Կավռոշ, 16 նոյեմբերի, N 573:

*Հ.Սիրունի*, Արմեն Օհանյանի պարահանդեսը: Ազատամարտ, 7 դեկտեմբերի, N 458:

*Կոստան Զարյան*, Նամակ առ պարուհին (Ա.Օհանյան): Ազատամարտ, (հավելված), N 23, էջ 367-368:

**5** Պոլսի օպերետային խումբը՝ Ա.Պենիկյանի ղեկավարությամբ, Օդեոն թատրոնում ներկայացրեց Տ.Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-Հոր աղա» կոմիկական օպերան: Դերակատարներ. Հոր-Հոր աղա - Ա.Պենիկյան, Ֆաթինե - Ռոզալի, Խուրշիդ բեյ - Գոհարիկ Շահինյան, Պոստանճի պաշի - Պ.Պալթազարյան:

«Համած-վարած հայկական օպերեթի խումբը»: Կավռոշ, 16 սեպտեմբերի, N 521:

«Տ.Չուխաճյանի «Լեպլեպիճին»»: Ազատամարտ, 14 նոյեմբերի, N 439:

*Պ.*, «Լեպլեպիճի Հոր-Հոր աղա»: Բյուզանդիոն, 9 դեկտեմբերի, N 4306:

**5** Երաժշտական երեկո՝ Բաքվում: Ելույթ ունեցան՝ Բաքվի հայկական աշակերտական երգեցիկ խումբը (ղեկ. Պ.Միքեյան), երգիչներ Ա.Բոյաջյանը, Ն.Ղարաքեշիշյանը, Վ.Մելնիկովան: Ծրագրում՝ Ա.Մայիլյան - «Շեն մնա» (դպրոցական հիմն), «Ջուր ա գալի», «Կանաչ-կարմիր», Կոմիտաս - «Կուժն առա», «Փապուրի», Չայկովսկի - Աղջիկների երգը՝ «Պիկովայա դամա»

օպերայից, Վենյավսկի - ռոմանս, Ռուբինշտեյն - «Հրեական մեղեդի», Շուբերտ - երգ: Դաշնամուրի նվագամասը՝ Ս.Մայիլյան, Ե.Ալիխանյան-Ղազարյան:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ա.Մայիլյանի ֆ., N 1320:

8 Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի համերգը՝ Պետերբուրգի կոնսերվատորիայի փոքր դահլիճում: Մասնակցեց դաշնակահար Ս.Մ.Մայկապարը: Ծրագրում՝ Անդրե Ֆոլկմար - սոնատ դաշնամուրի և ջութակի համար, Բրուխ - «Շոտլանդական ֆանտազիա», Մոցարտ-Բուրմեստեր - «Գերմանական պար», Գոսեկ - գավոտ, Մեյարտին - ռոմանս, Չայկովսկի - սկերցո, Սարասատե - «Խաբաներա»: Դաշնամուրի նվագամասը՝ Է.Բայ:

Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Հ.Նալբանդյանի ֆ., N 266:

26 Կ.Պոլսի «Օդեոն» թատրոնում կայացավ Տիգրան Չուխաճյանի «Լեբլեբիջի Հոր-Հոր աղա» կոմիկական օպերայի 10-րդ ներկայացումը:

Կավռոչ, 26 դեկտեմբերի, N 608:

29 Գրական-երաժշտական երեկո՝ Թիֆլիսի ժողովարանում: Ելույթ ունեցան՝ կոմպոզիտոր-դաշնակահար Նիկողայոս Տիգրանյանը, ջութակահար Վ.Վիլշաուն, Ներսիսյան դպրոցի երգեցիկ խումբը (ղեկ. Ս.Մելիքյան):

Հորիզոն, 29 դեկտեմբերի, N 291:

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


## Ա) Նոտաներ

*Հ.Սինանյան,* Դպրոցական քայլերգ ձայնի և դաշնամուրի համար: Խոսք՝ Անայիսի, Կ.Պոլիս: Գրախոսական. «Քայլերգ դպրոցասեր»: Ազատամարտ, 21 փետրվարի, N189:

*Ա.Տեր-Ղևոնդյան,* «Ուռենի», ձայնի և դաշնամուրի համար: Պետերբուրգ: «Տատրակ Տարոնո», ազգային երգարան: Թիֆլիս:

## Բ) Գրքեր

*Կոմիտաս,* Հայ գեղջուկ պարը: Բաքու, «Տրուդ» հրատարակչություն, 15 էջ:

*Ա.Չոպանյան,* Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը: Փարիզ Քելեկյանի հրատ. 128 էջ: Գրախոսական. *Գ.Լևոնյան,* Աշուղը: Ազգագրական հանդես, 1911թ., գիրք 21, էջ 226-238:

*Տ.Չիթունի,* Վարագայ Հոբելյան: Հիշատակարան և կոչ վարագայ-կրթական հաստատության հիսնամյա հոբելյանի (1857-1907): Կ.Պոլիս, տպարան Օսմ. գործակցական ընկերության, 31 էջ:

## Գ) Հոդվածներ

*Ա.Մայիլյան,* Հայ ընթերցողին և հայ հասարակությանը [«Թատրոն և երաժշտություն» հանդեսի հրատարակության առթիվ]: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 2-3:

*Ի.Պոպով,* Հայկական երաժշտությունը: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 3-4, N 3-4, էջ 28-30:

«Հեղինե և Եվգինե Ադամյան քույրերը»: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 4-5:

*Էկորճ,* Հարմոնիում (մեր ուսուցիչներին ու խմբապետներին ուշադրություն): Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 5-6:

«Ն.Ղուկասյան (լիրիկո-դրամատիկական տենոր, կենսագրական)»: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 7:

*Ա.Մայիլյան*, Երգը ընտանիքում: Թատրոն և երաժշտություն: N 1-2, էջ 7-9:

«Ֆ.Շոպեն» (ծննդյան 100-ամյակի առթիվ): Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 9:

«Շոպեն և Ժորժ Զանդ»: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 9-10:

«Կազաչենկո»: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 11:

«Ցիտատներ երաժշտական արվեստի մասին»: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 12:

«Մակար Եկմալյանի հիշատակին» (մահվան 5-ամյակի առթիվ): Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 19:

*Հ. Տ.-Գ.*, Թատրոնը և երաժշտությունը արտասահմանում: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 21-22:

*Աննա Մայիլյան*, Նամակ Մոսկվայից. մի ցանկալի օրինակ: Թատրոն և երաժշտություն, N 1-2, էջ 11-12:

«Մակար Եկմալյանի հիշատակը Մոսկվայում»: Սուրհանդակ, N 192:

*ԵՍ*, Հինգերորդ տարին (Մ.Եկմալյանի հիշատակին): Մշակ, 6 փետրվարի, N 49:

*Ե.*, Մակար Եկմալյան (մահվան հնգամյակի առթիվ): Տարազ, N 3, էջ 38:

«Մակար Եկմալյանի հիշատակին»: Տարազ, N 4, էջ 48:

*Մ.Ռոստոմյանց*, Նամակ խմբագրության (հիշատակվում է Կոմիտասի երգեցիկ խմբի մասին): Հորիզոն, 10 փետրվարի, N 31:

*Կոմիտաս վարդապետ*, Հայ գեղջուկ պարը: Թատրոն և երաժշտություն, N 3-4, էջ 26-27, N 5-6, էջ 51-52:

«Հայկական երաժշտությունը. Եկեղեցական երաժշտությունը»: Թատրոն և երաժշտություն, N 3-4, էջ 28-30:

«Երաժշտությունը Բարցելոնայի էսպերանտիստների հինգերորդ միջազգային կոնգրեսում»: Թատրոն և

երաժշտություն, N 3-4, էջ 30-31:

*Dissonans,* Երգ-ձայնագրությունը մեր դպրոցներում: Թատրոն և երաժշտություն, N 3-4, էջ 32-33:

*Կ.Մ.*, Բանվորական մեծ համերգը Բալախանում: Թատրոն և երաժշտություն, N 3-4, էջ 33:

«Երաժշտական քրոնիկ»: Թատրոն և երաժշտություն, N 3-4, էջ 34:

*Ջանիկ,* Ակումբի երեկույթը Շուշիում (մասնակցությամբ Ս.Դեմուրյանի): Գավառ, 21 մարտի, N 12:

*Հ.Գ.Մենևիշյան,* Փոքրիկ հայ դաշնակահար օրիորդը (Ալիս Հանմյան): Հանդես ամսօրյա, N 4, էջ 125:

*Ռ.Աշուղյան,* Արևելյան համերգ (Երևանում): Թատրոն և երաժշտություն, N 5-6, էջ 57-58:

*Ի.Ե.Պոպով,* Հայկական երաժշտությունը: Թատրոն և երաժշտություն, N 5-6, էջ 52-57, N 7-8, էջ 75-78:

*Ա.Մայիլյան,* Երգեցիկ խմբի կուլտուրան մեզանում: Թատրոն և երաժշտություն, N 7-8, էջ 74-75:

*Ա.Մ.*, Երաժշտական գրականությունը մեզանում: Թատրոն և երաժշտություն, մայիս-հունիս, N 5-6, էջ 50:

Ա.Բ(ալանթար), Գեղարվեստ հանդեսի մասին, Մշակ, 23 մայիսի, N 110:

«Քրիստափոր Կարա-Մուրզա»: Թատրոն և երաժշտություն, N 5-6, էջ 71:

«Ռոբերտ Շուման»: Տարազ, N 5-6, էջ 49:

*Կոմիտաս,* Շարականի խազերու նշանակությունը: Նամակ խմբագրության, 1910, 15 մարտի, Էջմիածին: Տաճար, N 10, էջ 311:

*Կ.Պ.,* Հայ մեծ երաժիշտն ի Թուրքիա (Կոմիտաս): Տաճար, 26 հունիսի, N 13, էջ 394-396:

*Լ.Ձերբեճյան,* Կոմիտասի հայացքները հայկական երաժշտության վրա: Ժամանակ, N 584:

«Երաժշտագետ Կոմիտաս Վրդ-ի բացատրողականը»: Ժամանակ, 8 հոկտեմբերի, N 599:

*Երմոգ,* Հայ եկեղեցվո Ս. արարողությունները «Պըտի Շանի Թատերաբեմի վրա Տ.Կոմիտաս վարդապետի ձեռքով»: Ժամանակ, N 647:

*Ե.Անդրիասյան,* Հին հիշատակ մը: «Բյուզանդիոն» շատ խախուտ ճյուղի մը վրա կը կոխե (Կոմիտասի համերգի առթիվ «Բյուզանդիոն»-ի գրած խմբագրական հոդվածի մասին): Ժամանակ, N 652, էջ 1:

*Անայիս,* Գեղարվեստական տպավորություններ (Կոմիտասի մասին), Բյուզանդիոն, Կ.Պոլիս, N 4305, էջ 1:

*Ներքին լուրեր* (Հաղորդագրություն Կոմիտաս վարդապետի Բաթում ժամանելու վերաբերյալ): Մշակ, 1 հունիսի, N 117:

*Թ.Վ.Գ.,* Կոմիտաս վարդապետը և Հայ եկեղեցական երաժշտությունը: Բյուզանդիոն, 14 հունիսի, N 4156, 15 հունիսի, N 4157:

*Բյուզանդ Քեչյան,* Պահպանողականությու՞ն, թե խավարամտություն: Կոմիտաս վարդապետի համերգին դեմ կղերամիտ արգելքները. երկու խոսք պատրիարքական փոխանորդին հասցեին: Բյուզանդիոն, 24 նոյեմբերի, N 4293:

*Արուսյակ Հարենց,* Կոմիտաս վարդապետ և Հայ երաժշտությունը: Բյուզանդիոն, հունիս, N 4390:

«Հայ մեծ երաժիշտն ի Թուրքիա. տ.Կոմիտաս վարդապետ»: Տաճար, 26 հունիսի, N 13, էջ 394:

*Ա.Մանուկյան,* Եկմալյանի Պատարագը և նրա գործադրությունը: Հորիզոն, N 263, 264:

«Կոմիտաս վարդապետի առաջին ատենաբանությունը»: Տաճար, N 34, էջ698:

*Ա.Ա.Ա.,* Կոմիտաս վարդապետի առաջին ատենաբանությունը. Հայ երաժշտությունը: Բյուզանդիոն, N 4268:

*Հ.Թիրաքյան,* Հայկական երաժշտություն: Տաճար, N 35, էջ 747-750:

*Ունկնդիր մը,* Կոմիտաս վարդապետի համերգը Բըդի-Շանի մեջ: Տաճար, N 35, էջ 760:

«Դավթյանի նոր նվագահանդեսը»: Ազատամարտ, N 268:

*Աստուչան,* Դ.Դավթյան (ջութակահար): Ազատամարտ, N 257:

«Տաղ գեղեցիկ սիրո»: Հող-դար, N 32, էջ 1:

«Տաղ վիրավորյալ հոգվո»: Հող-դար, N 41, էջ 1:

*Միք.Միրզայան,* Մի անհրաժեշտություն «Շուշն ու կատուն» մանկական օպերայի առթիվ (Ս.Մուրադյանի): Աշխատավոր, N 145, էջ 4:

«Դ.Դավթյանի Թուրքիայի զանազան քաղաքներում տված համերգների մասին»: «Թատրոնական լուրեր»: Մշակ, հուլիս, N 148:

«Նորագույն հրատարակություն. Թատրոն և երաժշտություն, խմբագիր Ա.Մայիլյան»: Տարազ, N 7-8, էջ 73:

«Հայկական լուրեր» (հաղորդագրություն Քեոթահիայում Կոմիտասի տված համերգի վերաբերյալ): Ժամանակ, 16 հուլիսի, N 538:

*Բադիլ (Դոկտոր),* Կոմիտաս վարդապետեն ինչպես պետք է օգտվիլ: Բյուզանդիոն, 5 օգոստոսի, N 4200:

«Ալեքսանդր Սպենդիարյան»: Թատրոն և երաժշտություն, N 7-8, էջ 77-79:

«Ձայնի առողջապահությունը»: Թատրոն և երաժշտություն, N 7-8, էջ 80-83:

«Ռոբերտ Շուման. կենսագրական ակնարկ»: Թատրոն և երաժշտություն, N 7-8, էջ 83-86:

*Antonios (Անտոն Մայիլյան),* Ալեքսանդր Սպենդիարյան: Թատրոն և երաժշտություն, N 7-8, էջ 87-89:

«Ո՞վ է հավերժացնելու Եկմալյանի հիշատակը»: Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 97-98:

*Էկորճ,* Եկմալյանի պատարագը մեր եկեղեցիներում: Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 100-102:

*Ա.Մայիլյան,* Մակար Եկմալյան: Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 103-105:

*Antonios (Ա.Մայիլյան),* Եկմալյանը և Կարա-Մուրզան: Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 105-106:

«Օվսաննա Տեր-Գրիգորյան»: Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 107-108:

*Ա.Մայիլյան,* «Լեբլեբիջի» կոմիկական օպերա. երաժշտ. Չուխաճյանի: Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 108-109:

*Ա.Ղազարյան,* Առաջին հայկական կոմիկական օպերետը ռուսահայ բեմի վրա: Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 109-110:

*Ուսանող,* Արմենակ Շահմուրադյան: Թատրոն և երաժշտություն, N 9-10, էջ 111:

«Հայ ազգային լուրեր» (Հաղորդագրություն Քեոթահիայում Կոմիտասի ծավալած գործունեության վերաբերյալ): Բյուզանդիոն, 9 օգոստոսի, N 4203:

*Բազիլ (դոկտոր),* Կենդանի երգ, մեռյալ կարոտ: Բյուզանդիոն, N 4297:

*Լևոն Չիլինկարյան,* Կոմիտաս վարդապետ և հայկական երաժշտությունը: Ժամանակ, 17 սեպտեմբերի, N 592:

*Արմավիրեցի,* Արմավիրի հայոց եկեղեցական երգեցիկ խմբի անցյալը: Հովիտ, N 9, էջ 141-143:

«Հայ ազգային լուրեր (Հաղորդագրություն Կոմիտասի կարդալիք երաժշտական դասախոսությունների վերաբերյալ)»: Բյուզանդիոն, 21 հոկտեմբերի, N 4264:

«Հայկական լուրեր (Հաղորդագրություն Կոմիտասի Պոլիս ժամանելու վերաբերյալ)»: Ժամանակ, 1 հոկտեմբերի, N 604:

«Հաղորդագրություն Կոմիտասի Պոլիս ժամանելու վերաբերյալ»: Տաճար, հոկտեմբեր, N 28, էջ 694:

*Խաչատուր Տեր-Ենոքյան,* Մինչև ե՞րբ անտարբեր մնանք (Մ.Եկմալյանի մահվան հնգամյակի առթիվ): Լույս, N 10, էջ 3-4:

*Հ.Գենջյան,* Վալերիան Չիսլյան (Վալերիանով): Մշակ, 21 հոկտեմբերի, N 233:

«Տիկին Արմեն Օհանյան (պարուհի)»: Տարազ, N 10, էջ 101:

*Պարույկ,* Եկմալյանի մահվան տարեդարձի առթիվ: Հովիվ, N 10:

«Ազգային անցուդարձ» (Հաղորդագրություն Ղալաթիո խորհրդարանի սրահը Կոմիտասին դասախոսության համար մերժելու վերաբերյալ): Դաշինք, 9 նոյեմբերի, N 385:

«Ժողովրդի զարգացման թշնամիները» (Հոդվածը ուղղված է Կ.Պոլսի Ղալաթիո ուսումնական խորհրդի ատենապետ Արիստակես Գասպարյանի դեմ՝ Ղալաթիո խորհրդարանի սրահը Կոմիտասին չտրամադրելու և նրա դասախոսությունը հետաձգելու առիթով): Ազատամարտ, նոյեմբեր, N 433:

*Շահեն*, Պոլսական նամակներ (Բողոք Կոմիտասի համերգի հոգևոր երգերի բաժինն արգելելու վերաբերյալ պատրիարքական փոխանորդի հրամանի դեմ): Մշակ, 3 դեկտեմբերի, N 272:

«Սպենդիարյանը՝ մրցանակի արժանանալու մասին»: Մշակ, 4 դեկտեմբերի, N 271:

*Հ.Սիրունի*, Տիգրան Չուխաճյան: Ազատամարտ, 12 դեկտեմբերի, N 463:

*Միք.Միրզայան*, Սիմֆոնիական շաբաթներ: Հորիզոն, 30 դեկտեմբերի, N 292:

*Արշակ Տեր-Հովսեփյան*, Երաժշտությունը մեր դպրոցներում: Սուրհանդակ, 22 դեկտեմբերի, N 203:

*Ռաուլ Բոնշոն*, Հայ պարուհի օր. Արմեն Օհանյան: Կավռոշ, 16 նոյեմբերի, N 573:

Զարտարյան, Տնտեսյան Եղիա. 1834-1881 կենսագրական (և նամակները 1962-1964թթ.): Հիշատակարան, էջ 343-352:

*Սուրեն Պարթևյան*, Գեղարվեստը մեր մեջ: Դաշինք, 13 մայիսի, N 235:

*Ս.Պարթևյան*, Ջութակահար Դավիթ Դավթյանի մասին: Դաշինք, 17 մայիսի, N 239:

*Ս.Պարթևյան*, Հայու հոգին (ջութակահար Դավիթ Դավթյան): Դաշինք, 20 մայիսի, N 242:

«Ազգային անցուդարձ» (Հաղորդագրություն՝ նվիրված Կոմիտասի Զմյուռնիայում ծավալած գործունեությանը): Դաշինք, մայիս, N 430:

*Ե.Լազարյան*, Վասպուրականի ազգագրությունը:

Ազգագրական հանդես, Գիրք 20, էջ 116-196:

*Տեր-Եղնիկ,* Ձայնագրության ուսուցիչ Երզնկյան Եղնիկին Սևանի վանքը աքսորելու մասին: Սուրհանդակ, N 106, էջ 3:

*Միր-Գար,* Մակար Եկմալյանի մահվան հինգերորդ տարելիցը: Սուրհանդակ, 12 դեկտեմբերի, N 192:

«Լեբլեբիջիի» նախապատրաստությունները Թիֆլիսում, Սուրհանդակ, N 543:

«Երգահան, ջութակահար և ջութակի դասատու Ահարոն Մայիլյան. կենսագրական գծեր»: Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Դ. տարի, էջ 222:

*Կոմիտաս,* Ինքնակենսագրություն: Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Դ. տարի, էջ 214:

"Армянский вечер" (о подготовке вечера в память Х.Кара-Мурзы). Баку, N 41, 47, стр. 3.

"Армянская жизнь" (об отставке арх. Комитаса). Баку, 27 мая, N 118.

*Ах.,* Арх. Комитас и Эчмиадзин. Баку, 29 мая, N 119.

"Архимандрит Комитас". Новая речь, 25 мая, N 116.

*Leonis,* М.Л.Кропивницкий и армянское пение (о первом опыте многоголосной обработки армянской литургии), Баку, 15 июня, N 132.

*П.Кара-Мурза,* Армянская музыка и М.Л.Кропивницкий (ответ на статью Leonis-a). Баку, 19 июня, N 136.

*Армен Оганян,* Искусство и гарем. Театр и искусство, N 20, стр. 412.

*А.Ю.,* Армяне в Москве, от нашего корреспондента о Багдасаряне. Баку, N 33.

*В.Д.Корганов,* Ф.И.Шаляпин (наброски). Тифлисский листок, N 211.

*В.Тюнеев,* В.Д.Корганов. Бетховен, Биографический этюд. С иллюстрациями. Изд. тв-а М.О.Вольф. Русская музыкальная газета, N 42, стр. 923-924.

*М.М.Иванов,* Новая биография Бетховена (о книге В.Д.Корганова), Новое время, NN 12236, 12262, 12297, 12380.

"Театр и музыка" (о Комитасе). Закавказье, 5 октября, N 223.

*La-mi,* Новая биография Бетховена (Бетховен. Биографический этюд В.Д.Корганова), СПБ. изд. товарищества М.О.Вольф, стр. 940. Речь, N 293.

# ABSTRACT

Dear Reader,

The book you are holding in your hands is the *Chronology of Armenian Musical Life (1901-1910)* by Rouzanna Mazmanyan, senior research worker of the Institute of Arts NAS RA, Doctor of Arts. The chronology enlists in the historical-chronological order all the memorable events of the Armenian musical history within the above-mentioned time period, which have influenced the development of the national culture. The chronology includes information about the concerts organized in Armenia and abroad, musical shows, anniversary celebrations, tours, as well as facts about music halls and orchestras, establishment of musical-educational institutions and other events in the musical life of Armenia. The author sums every year with the bibliography of published books, articles, journals, newspapers and music.

The rich factual information as well as the detailed study of the Eastern and Western Armenian periodicals ( Bazmaveb (Venice), Anahit (Paris), Gegharvest (Tbilissi), Mshak , Geghuni (Venice), Taraz (Tbilissi), Massis , Surhandak , Buzandion , Tadjar (Constantinople), Banaser (Paris), Theatre and Music (Baku)) help to re-create the true image of musical life in Armenia within the period of 1901-10 and to cover almost all the geographic locations from Paris to Irkutsk, from Constantinople to St. Petersburg.

The author has widely used the recent facts, archival papers, studied the documents concerning **Komitas, Alexander Spendiarian, Armen Tigranian, Anton Mailian, Daniel Ghazarian, Stepan Demurian, Yeghishe Baghdassarian, Hovhannes Nalbandian, David Davidian, Alexander Karatov (Karapetian), Beglar Amirjanian (Amirjan), Nadezhda Papayan, Margarette Babayan, Arshak Kostanian, Sargis Mouradian, Constantin Sarajian, Ovsanna Ter-Grigorian, Moushegh Aghayan** preserved in the Charents museum of Literature and Art.

The first decade of the XX century was notable for many important events in the musical life of Armenia. It was a starting point of the development of the professional folk music, performing arts, national musicology and social-cultural activities.

Alongside with its accomplishments, the Armenian music also suffered irrecoverable losses. In 1902, on March 27 the renowned conductor and composer **Christopher Kara-Murza** (1853-1902) died in Tbilissi. The tenor **Nerses Shahlamian** (1860-1904) after suffering a year of mental disorders has passed away in May 1904. The founder of the Liturgy (Patarag) genre in Armenian music, composer and conductor **Makar Yekmalian** (1856-1905) died on 6 March 1905. A year later, on January 20, **Nadezhda Papayan** (1868-1906), talented opera singer, who had played more than 50 roles (among them Lisa in *Dame Pique*, Violette in *Traviata*, Hilda in *Rigoletto*, Mimi in *Boheme*, Tamara in *Demon,* etc.), died in Astrakhan.

During the first decade of the XX century some brilliant composers have created new genres in Armenian professional music, summarizing the achievements of Armenian composers of the XIX century and the rich heritage of the Western European music. They have enriched and purified the language of the Armenian folk music. The music halls started staging operas for children, whereas the symphonic and chamber music experienced particular development. The piano music still remained a significant part of the chamber instrumental music, being enriched with the piano compositions by **Tigran Chukhajian** (1837-1898) and arrangements of folk dances and moughams by **Nikoghayos Tigranian** (1856-1951).

The history of Armenian music of the beginning of XX century was marked by the comprehensive work of the Armenian classical music founder **Komitas** (1869-1935), who was the first composer re-creating the Armenian folk music style on the base of the Armenian peasant song. Komitas has enriched the Armenian piano music with piano dances that have been firstly performed in Paris, in 1906.

The founder of the Armenian symphonic music **Alexander Spendiaryan** (1871-1928) has introduced the symphonic tableau and suite genres into the Armenian symphonic music. The composer's works in this decade include remarkable compositions in symphonic, chamber-instrumental and vocal genres.

The decade also proved to be a perfect arena for a number of brilliant composers, among them **Nikoghayos Tigranian**, the founder of Armenian piano music, **Armen**

Tigranian (1879-1950), **Romanos Melikyan** (1883-1935), **Yeghishe Baghdassarian** (1880-1919), **Grigor Syuni** (1876-1939), **Anton Mayilian** (1880-1942), **Daniel Ghazarian** (1883-1958), **Azat Manoukian** (1878-1958).

Romanos Melikyan, who has developed the romance genre as a separate genre of the national chamber vocal music, has composed during this time period the songs *Rose* and *Autumn,* the duet *Willow* and the romance *Parting.* In adherence with Chukhajian s traditions, R. Melikian has introduced the contemporary classical poetry into the national vocal music.

**Yeghishe Baghdassarian**, who lived and worked in Moscow, has founded there the Armenian Choir Society. An ardent devotee of his profession, he has published *The Artistic Album in Memory of H. Aivazovsky* (1903) and *Tears* (1907), where he included a number of works by the Armenian composers. In that period (1903-1909) Y. Baghdassarian started to compose the opera *Anush*, which unfortunately was left unfinished.

During the period from 1901 to 1910 Armenian composers Komitas, Gr. Syuni, Sp. Melikian and others collected and recorded Armenian folk songs.

**St. Demurian** published the ethnographic collections: *Knar* songbook (Petersburg, 1907), **Arshak Brutian** released *Peasant Whispers* (1901). Other publications of this period include *Armenian Harp* by **Komitas** (Paris, 1907) *Arrangements of Armenian Folk Songs* by **K. Kara-Murza** (1904-1905, Tbilissi) and the first part of *Armenian Folk Songs* by **Grigor Syuni** (St. Petersburg, 1904).

In 1903, the Armenian Artistic Society was founded in St. Petersburg. The members of Masis club have founded the Armenian Society in Paris, in 1906. Due to the activities of the club, as well as the efforts of A. Chopanyan, an Armenian concert was organized in Paris (*Salle des Agriculteurs,* 1906). The musical program included Babayan sisters duo, Paris Conservatoire graduate Armenak Shahmuradyan and a choir conducted by Komitas.

The Caucasian Society founded in 1905 in Paris has organized a concert at Romain Rolland s request dedicated to the Armenian and Georgian music (1906). A year later, *The Oriental Society* was founded in Tbilissi; in 1908 R. Melikyan and A. Manoukian formed the Music League, which paid particular attention to the musical education of children. A. Mailyan, Y. Baghdassarian, A. Manoukian and D. Ghazarian started writing songs and operas for children.

In May 1910, the Armenian Choir Society was founded in Tbilissi.

Komitas has laid down the bases of Armenian musicology and ethnography. His article *Armeniens Volkstümliche Regentänze* (Armenian Peasant Dances) was published in *Zeitschrift für Armenishe Philologie* (Marburg, 1901), followed by the article *Armenian Peasant Music* (without music examples) published in *Anahit* (NN 3-5, 6-9, 1907). The French translation of the more comprehensive version of this paper (including music examples) was published in *Mercure Musicale* (Paris).

**Barsegh Ghorghanian** (Vasili Korganov, 1861-1934), the author of studies on Mozart and Beethoven, was an

invaluable asset to the history of the Armenian music. He was the first to pay tribute to Komitas academic research; he has illuminated in his essays the work of Komitas, M. Yekmalyan, G. Ghorghanayan. Other significant works of this period include *Arrangements* by K. Kara-Murza, articles by A. Mailyan and S. Melikyan.

In 1908, St. Petersburg Academy of Arts graduate, philologist and art critic **Garegin Levonian** (1872-1947) has published together with Komitas the magazine of arts and literature *Gegharvest*.

Considering the lack of professional performers and orchestras, Armenian composers A. Mailian, Gr. Syuni, Y. Baghdassarian toured the country with their choirs and concerts.

Performing arts experienced a particular blossom in the first decade of the XX century due to **Nadezhda Papayan** (1868-1906), **Beglar Amirjanian** (Amirjan, 1868-1935), Milan Conservatoire graduate **Margaret Babayan,** pianist and opera singer, tenor **Arshak Kostanyan** (1865-1920), tenor **Tigran Nalbandian** (1878-1954), musicologist and composer **Mushegh Aghayan** (1883-1966), violinist **Hovhannes Nalbandyan** (1871-1942), conductor **Constantin Sarajian** (1877-1954), violinist **Hayk Kyutenian** (1888-1970), **Armenak Shahmouradian** (1878-1939), pianist **Shushanik Babayan** (1879-1952), tenor **Vahan Ter-Arakelian** (1883-1941), **Adamian sisters**.

Thus, the first decade of the XX century has shaped out all the successful prerequisites to further the mission of the Armenian music successors and to enhance the development of the Armenian music.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ .......... 9
1901 .......... 23
1902 .......... 44
1903 .......... 59
1904 .......... 74
1905 .......... 95
1906 .......... 110
1907 .......... 123
1908 .......... 139
1909 .......... 156
1910 .......... 172
ABSTRACT .......... 200

# ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ

## ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

1901-1910

# ROUZANNA MAZMANYAN

## CHRONOLOGY OF ARMENIAN MUSICAL LIFE

1901-1910

Հրատարակիչ-տնօրեն՝ ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ
Հրատ. խմբագիր ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ
Մակետավորող՝ ԴԻԱՆԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Անգլերեն թարգմանությունը՝ ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆԻ
ԼԻԼԻԹ ԲԵՔԱՐՅԱՆԻ
Անգլերեն տեքստի խմբագիր՝ ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՈՎ
Համակարգչային շարվածքը՝ ԻՆԵՍՍԱ ԱՎԱԳԻՄՈՎԱՅԻ

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Երևան 375019, Մ.Բաղրամյան պող. 24գ:
Հեռախոս՝ 58-37-02, Հեռապատճեն՝ 51-97-02
Էլեկտրոնային փոստ՝ instart@sci.am

INSTITUTE OF ARTS
375019 Yerevan, Marshal Baghramyan 24g
Tel. 58-37-02, fax: 51-97-02
E-mail: instart@sci.am

Տպագրված է «Նորք-Գրատուն» տպագրատանը:
Տպաքանակը՝ 400, Չափսը 60x84 1/16, 13 տպագրական մամուլ:
Տառատեսակը՝Grqee Nor, Arial, Russian Baltica.

## Ռ.Մազմանյանի հեղինակած գրքերը

1. Խորհրդային գրականությունը երաժշտության մասին. 1966-1973թթ. (Համահեղինակ՝ Ժ.Քոչինյան), 1974, ռուսերեն
2. Նիկողայոս Տիգրանյան. կյանքը և գործը, 1978, ռուսերեն
3. Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920-1945), 1979
4. Նիկողայոս Տիգրանյան. Հոդվածներ, հուշեր, նամակներ (կազմող, նախաբանի ու ծանոթագրությունների հեղինակ), 1981
5. Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1946-1960), 1986

### Տարեգրքերը

6. Համառոտ տեղեկություններ Հայաստանի կոմպոզիտորների միության աշխատանքների մասին 1974-1979թթ. (Համահեղինակ՝ Ժ.Քոչինյան), 1979, ռուսերեն
7. Համառոտ տեղեկություններ Հայաստանի կոմպոզիտորների միության աշխատանքների մասին 1979-1984թթ. (Համահեղինակ՝ Ժ.Քոչինյան), 1984, ռուսերեն
8. Համառոտ տեղեկություններ Հայաստանի կոմպոզիտորների միության աշխատանքների մասին 1984-1990թթ. (Համահեղինակ՝ Ժ.Քոչինյան), 1990, ռուսերեն

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220091446

A II 91446



## ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Ռ.Մազմանյանը ծնվել է 1933թ. դեկտեմբերի 16-ին, Երևանում, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ և վաստակավոր ճարտարապետ, Երևանի շինարարական (պոլիտեխնիկական) ինստիտուտի առաջին ռեկտոր Միքայել Մազմանյանի և դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Վարդուշ Ստեփանյանի ընտանիքում: Յոթնամյա կրթությունն ստացել է Երևանի Պ.Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, ապա 1953-ին ավարտել Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը՝ աշակերտելով անվանի դաշնակահար, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռոբերտ Անդրիասյանին:

1958-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը՝ ստանալով երաժշտագետ-պատմաբանի որակավորում:

1958-1959թթ. դասավանդել է Երևանի Տ.Չուխաճյանի անվան երաժշտական դպրոցում:

1959 թվականին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում, սկզբում որպես լաբորանտ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող:

1974թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1984թ. ընտրվել է ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության անդամ:ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում շուրջ կես դար Ռ.Մազմանյանն իր գիտաստեղծագործական կյանքով անմնացորդ նվիրումով անդավաճան ծառայեց հայ երաժշտական արվեստին: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ արժեքավոր գրքեր ու գիտական հոդվածներ, այդ թվում՝ հայ պրոֆեսիոնալ երաժշտության և կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից մեկի՝ Նիկողայոս Տիգրանյանի մասին մենագրությունը (1978), «Սովետահայ գրականությունը 1966-1973 թվականների երաժշտության մասին» գիրքը (1974): Կազմել է ու ծանոթագրել Ն.Տիգրանյանի «Հոդվածների, հուշերի ու նամակների» ժողովածուն (1981):

Հայ երաժշտագիտության համար կարևոր հանգրվան դարձան «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրությունը (1920-1945)» (1979) և «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրությունը (1946-1960)» (1986) աշխատությունները, որոնք գիտական այդ ժանրում օրինակելի աշխատանքներ են: Ռ.Մազմանյանը պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:Ռ.Մազմանյանը վախճանվել է 2006թ. մարտի 31-ին, Երևանում:

## ROUZANNA MAZMANYAN

Rouzanna Mazmanyan was born on December 16, in 1933, in Yerevan.She received her first musical education in the music school after P. Tchaykowsky in Yerevan.
In 1953 she graduated from Romanos Melikyan Music College where she was trained by the outstanding pianist Robert Andreassian.

In 1958 she graduated from the State Conservatoire after Comitas, the department of musicology.

She taught at music school after T. Chukhajian from 1958 to 1959. In 1959 she started working at the Institute of Arts of the National Academy of Sciences of Armenia.

She obtained her doctorate in musicology in 1974 with a dissertation on the life and work of Nikoghayos Tigranyan, one of the founders of Armenian music and composing school.

Beyond her monograph on Nikoghayos Tigranyan, (1978) R. Mazmanyan's works also include various scholarly books and papers, among them "Soviet Armenian literature on the music of the period from 1966 to 1973" (1974), a number of guidebooks illustrating the work of the Composers' Union in Armenia (1974-1990). She also compiled and made notes to the selection of papers, memoirs and letters of N. Tigranyan. (1981).

Rouzanna Mazmanyan is also noted for her Chronologies of the Armenian Music in the Soviet Period, comprising the periods between 1920 and 1960. Published in 1979 and 1981, these chronologies are considered to be valuable assets in the sphere of Armenian Musicology.

Rouzanna Mazmanyan died on March 31, in 2006, at the age of 73 in Yerevan.